Գենդերային խտրականություն.

մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն

2016

ՀՏԴ 316.346.2:396
ԳՄԴ 60.54+66.74
Գ 440

Գլխավոր խմբագիր՝
Գոհար Շահնազարյան
Խմբագրական կազմ՝
Սիրան Հովհաննիսյան
Մերի Հովհաննիսյան
Ձևավորումը՝
Լուսինե Թալալյան
Թարգմանիչ՝
Նվարդ Մանասյան

Գ 440 Գենդերային խտրականություն. մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն
– Եր.: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, 2016.– 104 էջ:

Գրքում անդրադարձ է կատարվում գենդերային խտրականության դրսևորումներին տարբեր մակարդակներում և բնագավառներում: Ժողովածուն նվիրված է գենդերային խտրականության հիմնախնդրի դիտարկմանը քաղաքականության, մեդիայի, կրթության ոլորտներում, բանակում և ամուսնության ինստիտուտի շրջանակներում: Հայաստանում գենդերային խոսույթի վերլուծության ներկայացումը հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե ինչպիսի մեթոդների և պրակտիկաների միջոցով է ձևավորվում, վերարտադրվում և ամրապնդվում գենդերային խտրականությունը:

ՀՏԴ 316.346.2:396
ԳՄԴ 60.54+66.74

ISBN 978-9939-1-0450-8

© «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
© Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակ (Թբիլիսի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Միլենա Աբրահամյան 8

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ.
ԻՆՉ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ
ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆԱԿԻ ՆԵՐՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Աննա Հարությունյան 26

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԽՈՍՈՒՅԹԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼԻՍ.
ՀԻՍՏԵՐԻԱՅԻՑ ԴԵՊԻ
ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Թամարա Հովնաթանյան 48

ԿԱՆԱՆՑ ԱԶԱԿՑՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՀԱՏՈՒԿ ՄԻԶՈՑՆԵՐԻ
(ՔՎՈՏԱՆԵՐԻ) ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հասմիկ Խալափյան 66

ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ
ՈՒ ՕՐԵՆՔԸ (1860-1914 թթ.)

Նարինե Խաչատրյան 84

ԿԻՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.
ԿՐԿԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐ ԴԻՐՔՈ՞ՒՄ,
ԹԵ՞ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ
ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

«Գենդերային խտրականություն. մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն» հոդվածների ժողովածուն «Կանանց ռեսուրսային կենտրոն» (ԿՌԿ) հասարակական կազմակերպության կողմից 2016 թվականին իրականացված ծրագրի արդյունքն է: Ծրագիրը ֆինանսավորվել է Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի (Թբիլիսի) կողմից և նպատակ ունի հայ հասարակությանը իրազեկելու տարբեր մակարդակներում գենդերային խտրականության դրսևորումների մասին: Իրականացված հանրային դասախոսությունների ու քննարկումների միջոցով փորձ է արվել բազմակողմանիորեն ներկայացնելու գենդերային խտրականության հիմնախնդիրը: Գենդերային խտրականության դրսևորումներին անդրադառնալիս հետազոտողները դիտարկել են տարբեր ոլորտներ և մակարդակներ՝ բարձրագույն կրթության ոլորտ, բանակ, ամուսնության մշակույթ և օրենք, քաղաքականություն և այլն: Հարկ է նշել, որ բոլոր հանրային դասախոսություններն ու քննարկումները ներառում են նաև հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքներ:

ԿՌԿՀ WRCA
HEINRICH BÖLL STIFTUNG
SOUTH CAUCASUS

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿԻ ՆԵՐՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Միլենա Աբրահամյան

2005 թվականին ռուսական բանակում շարքային վինվոր Անդրեյ Սիչյովի նկատմամբ կիրառված բռնությունը հանրությանը հայտնի դարձավ որպես «դեդովշչինայի»[1] ամենադաժան դեպքերից մեկը: Սպաները Ա. Սիչյովին դաժանաբար ծեծի էին ենթարկել՝ ստիպելով ժամերով կանգնել ոտնաթաթերի վրա: Նշված բռնարարքների արդյունքում Ա. Սիչյովը տարատեսակ վնասվածքներ ստացավ, որի արդյունքում բժիշկները ստիպված եղան անդամահատել նրա ոտքերը և սեռական օրգանները: Բանակի ներսում բռնության նման դեպքերը, այդ թվում՝ սեռական բռնությունը, ինքնասպանությունը, հացադուլն ու բժշկական օգնությունից վրկելը, լայնորեն տարածված են աշխարհի տարբեր երկրների բանակներում:

Հետազոտողներն իրենց ուսումնասիրությունների թիրախ հիմնականում դարձնում են ռազմական հաստատությունները (օրինակ՝ բանակը), անդրադառնում են դրանց կառուցողականությանը՝ բանակի ներսում տեղի ունեցած բռնության դեպքերը ընկալելու համար: Սակայն հարկ է նկատել, որ «ռազմականացված առնականություն» հասկացությունը երբեք հանդես չի եկել որպես հետազոտության առարկա՝ բանակի ներսում բռնության պատճառները բացահայտելու նպատակով: Զարմանալի չէ, որ առնականության երևույթը այնքան նորմալացված է բանակի ներսում, որ անգամ չի դիտարկվում որպես հետազոտության թեմա. շատ հասարակություններում առնականությունն անգամ չի ընկալվում որպես ուսումնասիրության առարկա:

Նշված հետազոտության նպատակը բանակում ռազմականացված առնականության խնդրի բացահայտումն է՝ հասկանալու համար, թե որքանով է ռազմականացված առնականությունը ազդում այնտեղ առկա բռնությունների մակարդակի վրա: Փոքրածավալ ուսումնասիրություններ են իրականացվել ռուսական և շվեդական բանակների շրջանակում, 2006 և 2011 թվականների ընթացքում անցկացվել են նաև 10-ից ավելի հարցապրույցներ ռուսական և շվեդական բանակներում ծառայություն իրականացրած վինվորների հետ: Ըստ այդմ՝ կատարվել է համեմատական վերլուծություն: Հետազոտությունը ամբողջությամբ հիմնված է ֆեմինիստական և կոնստրուկտիվիստական տեսությունների

1. Ռուսերեն «**дедовщина**» եզրույթը նշանակում է «պապերի կամ մեծերի, իշխանություն»: Բանակի ներսում *դեդովշչինան* բռնության ամենատարածված դրսևորումներից մեկն է: Այն վերաբերում է դաժան ու բռնի գործողություններին, որոնց ենթարկում են նորակոչիկներին՝ նրանց բանակի առօրյային և սովորույթներին վարժեցնելու նպատակով:

վրա: Ռակմականացված առնականության և բանակի ներսում բռնության առնչություններն ընկալելու համար որպես վերլուծության գործիք կիրառվում է «կառուցվածքայնություն» («ստրուկտուրայնություն») հասկացությունը: Ստրուկտուրայնության տեսությունը վերաբերում է պայմաններին, որոնք կարգավորում են կառույցների շարունակականությունը կամ փոխակերպությունը, հետևաբար նաև համակարգերի վերարտադրողականությունը: Նշված կառույցները հնարավոր է բաժանել մասերի՝ գործոնների և կոլեկտիվների միջև վերարտադրված հարաբերությունների, որոնք տարբեր համակարգերում կազմակերպված են որպես հասարակական սովորական պրակտիկաներ:

Այսպիսով՝ սույն հետազոտությունը անդրադառնում է առնականության և բռնության կառույցներին, և բաժանելով այդ կառույցները մասերի՝ փորձում է ընկալելի դարձնել ուժային հարաբերությունները, ըստ որոնց՝ պայմանավորված են առնականության և բռնության գործոններն ու գործողությունները բանակում:

«Ռակմականացված առնականություն»

«Ռակմականացված առնականություն» եզրույթը սահմանելու համար անհրաժեշտ է այն բաժանել մասերի և հասկանալ, թե ինչպես է այն կառուցված *գենդերային դերերի, գենդերային հարաբերությունների* և *գենդերային կատարողականության* արտադրության և վերարտադրության շրջանակներում:

Իսկ ի՞նչ նկատի ունենք՝ *գենդեր* ասելով: Չնայած *գենդերը* ընկալվում է որպես մարդու սոցիալական սեռ՝ տարբերություն դնելով «կենսաբանական» և «սոցիալական» հասկացությունների միջև, ըստ գենդերային տեսության՝ «կենսաբանական սեռ» ասվածը նույնպես կառուցված պատկերացում է: Այսինքն՝ մարդու սեռը, ըստ բնույթի, էական չէ: Եվ *գենդերը* մարդկանց մարմինների, ինքնությունների և փորձառությունների դրսևորումն ու արտահայտումն է: Նշված հարցի քննությամբ զբաղվող գիտնականները[2] անդրադառնում են *ինտերսեքս*, *տրանսգենդեր* և *գենդերային երկակիությունից* դուրս անձանց, որոնց ներկայությունը հասարակության մեջ խնդրականացնում է «կենսաբանական և սոցիալական սեռեր» հասկացությունը:

2. Նշված թեմային անդրադարձել են բազմաթիվ ֆեմինիստ գիտնականներ՝ Ջուդիթ Բաթլերը, Սանդրա Հարդինգը, Դոննա Հարաուեյը և ուրիշներ:

Եթե վերադառնանք ստրուկտուրայնության տեսությանը, ապա գենդերը կարող ենք համարել առնականության հաստատման գործոններից մեկը: Բայց քանի դեռ գենդերը չի գործում վակուումի մեջ, կարևոր է հասկանալ, թե ինչով են պայմանավորված առնականության գենդերային դերերն ու դրանցից բխող հարաբերությունները:

Գենդերային դերեր. ինչպե՞ս է դրսևորվում գենդերը

Գենդերային դերերը վերաբերում են այն ենթադրված վարքագծերին, որոնք հասարակությունը պահանջում է մարդկանցից՝ ըստ սոցիալական այն իրականության, որտեղ մարդիկ ապրում են: Շատ հասարակություններում ենթադրվում է, օրինակ, որ կինը պետք է զբաղեցնի ընտանեկան, կրթական, դաստիարակչական և խնամքի, իսկ տղամարդը՝ հանրային, քաղաքական և իշխանության ոլորտները: Ռակմականության թեմայի շուրջ կարելի է մեջբերել երկու օրինակ. պատերազմական իրադրության մեջ տղամարդը՝ որպես զինվոր, պետք է լինի պաշտպանողի, իսկ կինը՝ որպես բուժքույր, հոգ տանողի դերում:

Իհարկե, գոյություն ունեն նաև բացառություններ. աշխարհում հանդիպում են դեպքեր, երբ մարդիկ խախտում են առնական և/կամ կանացի այն դերերը, ըստ որոնց՝ նրանց վարքագիծը կհամապատասխանի հասարակության կողմից ակնկալվող սեռական կամ գենդերային պատկերացումներին: Եվ քանի որ իրականության մեջ գենդերային դերերը կայուն չեն, բոլոր մարդիկ, անկախ իրենց սահմանված գենդերային ինքնությունից, ժամանակ առ ժամանակ խախտում են իրենց՝ իբրև մշտապես առնական կամ կանացի կառուցվող գենդերային կարգը: Հասարակության մեջ, սակայն, գործում են տարբեր պատժամիջոցներ՝ գերիշխող գենդերային համակարգը խախտող հնարավորությունները կանխելու նպատակով: Տվյալ հետազոտության մեջ վերլուծվում են շվեդական և ռուսական բանակներում հանդիպող դեպքեր, երբ տղամարդիկ, չհամապատասխանելով գերիշխող ռակմականացված առնականության այն վարքագծին, որը տիրում է բանակում, ենթարկվում են ծաղրանքի, ոտնձգությունների

և տարբեր տեսակի բռնությունների այլ կինծառայողների կողմից: Հետևաբար գենդերային դերերը անմիջապես կախված են մարդկանց միջև փոխհարաբերություններից:

Գենդերային հարաբերություններ. ի՞նչ է արվում գենդերի հետ

Գենդերային համակարգի վրա ուժային հարաբերությունների ունեցած ազդեցությունները ըմբռնելու և ի վերջո գենդերի իրացման բացահայտման նպատակով կարևոր է հասկանալ, թե ինչպես են մարդիկ վերարտադրում գենդերային հարաբերություններն ամենօրյա շփման շրջանակներում: Երբ խոսում ենք գենդերային երկակիության մասին, պարզ է դառնում, որ «առնականությունն» ու «կանացիությունը» միաժամանակ երկու իրարամերժ և փոխլրացնող հասկացություններ են: Այսինքն՝ առնականության գոյության համար անհրաժեշտ է, որ այն հակադրվի կանացիությանը: Արդյունքում ստացվում է, որ գենդերից բխող հարաբերություններն արտացոլվում են գենդերային դերերի ու դրանց չափականացված տարբերությունների շուրջ: Եթե կանացիությունը առնչվում է խաղաղությանը, ապա առնականությունը՝ պատերազմական իրադրությանը: Նշված հակադրության մեջ գործում է ուժային հարաբերություն. այն, ինչ կապվում է առնականությանը, ընկալվում է ավելի արժեքավոր, քան այն, ինչ առնչվում է կանացիությանը: Այսպիսով՝ գենդերի ուժային համակարգի մեջ առնականությունը առավել է կանացիությունից:

Ինչպես արդեն նշվել է, գենդերը կայուն չէ, և մարդը կարող է իր սահմանված գենդերային դերը խախտել: Սակայն գիտակցելով գենդերային համակարգի՝ կանոնները և խախտելով իրեն հատկացրած գենդերային դերը՝ տղամարդը վրկվում է առնականության առավելություններից: Հետևաբար տղամարդիկ «կատարում են առնականությունը», որպեսզի վերարտադրեն ուժային այն հարաբերությունները, որոնց շնորհիվ հնարավորություն ունեն պահպանելու իշխանությունը և դրանից բխող բոլոր առավելությունները:

Գենդերային կատարողականություն[3]. ինչպե՞ս է իրացվում գենդերը

Գենդերը իրացնելը կախված է թե՛ ուժային հարաբերություններից, թե՛ արտադրվում է ուժային հարաբերությունների շնորհիվ: «Գենդերային կատարողականություն» հասկացությունը չի ենթադրում, որ հնարավոր է գենդեր ունենալ: Այս տեսությունը դիտարկում է գենդերը որպես ուժի գործիք, որը կիրառվում է հասարակական իրականության մեջ՝ ըստ կարիքների, ակնկալիքների և ցանկությունների: Այսինքն, եթե նույնիսկ մենք պնդենք, որ գենդերը կառույց է, և այդպիսով հնարավոր է քանդել այդ կառույցը, մենք բախվելու ենք ուժային այնպիսի համակարգի հետ, ինչպիսին գենդերային համակարգն է, որտեղ չիրացնել գենդերը ճիշտ այնպես, ինչպես ընդունված է հասարակության մեջ, նշանակում է վրկվել որոշ առավելություններից, հատկապես որպես տղամարդ: Ընդ որում՝ կատարելով մեկ համար նախատեսված գենդերային դերը՝ մենք շարունակում ենք վերարտադրել գենդերի ուժային համակարգը:

Տեսնելով, թե ինչպես են ուժային հարաբերությունները դրսևորվում գենդերային հարաբերությունների շրջանակներում կանանց և տղամարդկանց միջև, միմիայն տղամարդկանց միջև հարաբերվելու հատկությունները նույնպես տեսանելի են դարձնում իշխանության գործոնները: Տարբեր համատեքստերում ընդունված առնականությունը արտահայտվում է ըստ համատեքստում տիրող տղամարդկանց և առնականության վարքագծերով: *Հեգեմոնիկ (գերիշխող) առնականությունը*[4] վերաբերում է տղամարդ լինելու ամենահաջողակ և ամենաշահավետ տարբերակին: Այլ կերպ ասած՝ առնականությունը, որին տղամարդը պետք է ձգտի, կախված է առնականության դրսևորումից, որը գերիշխում է, և որի շնորհիվ հնարավոր է գերիշխել: Համաշխարհային իրականության մեջ ներկայումս գերիշխող առնականությունները ուղղակիորեն կապ ունեն այն ուժի հետ, որին կարելի է հասնել նյութական ռեսուրսների, քաղաքական իշխանության, շուկաների, տարածքների և, ամենակարևորը, ինքնության մա-

3. «Գենդերային կատարողականություն» (Gender performativity) հասկացության հեղինակը Ջուդիթ Բաթլերն է իր «Գենդերային անհանգստություն» (Gender trouble) գրքում:

4. Հեգեմոնիկ (գերիշխող) և ստորադաս առնականությունների մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար տե՛ս Connell R. W. (1995), *Masculinities:*

սին խոսույթների կառավարմամբ: Շատ համատեքստերում սա նշանակում է, որ ռազմականացված առնականության կրող լինելը դեռ չի նշանակում անպայմանորեն վբաղեցնել հեգեմոնիկ առնականության ստորակարգության (հիերարխիայի) ամենավերին դիրքը:

Հեգեմոնիկ առնականությունը կարևոր դեր է խաղում *ստորադաս առնականությունների* կառուցման մեջ: Քանի որ առնականությունը կառուցվում է՝ հարաբերական հակառակորդության մեջ գտնվելով կանացիության հետ, առնականության հիերարխիան կազմված է այնպես, որ առնականության այն տեսակները, որոնք կրում են կանացիության որոշ հատկանիշներ, ստորացվում և արժեզրկվում են՝ ի վերջո հայտնվելով հիերարխիայի ներքևում: Այսինքն, եթե դու տղամարդ ես, որը խախտել է իրեն տրամադրված գենդերային դերը (լինի դա կամավոր, թե ոչ), ապա դու դառնում ես թույլ, կանացի, «ոչ իսկական տղամարդ»:

Այսպիսով՝ ստորադաս առնականությունը ենթադրում է ֆեմինիզացված առնականություն, որն անհնար է համատեղել ընդունված գենդերային համակարգի մեջ այնպես, որ համարվի արժեքավոր և հավասար մյուս առնականություններին: Նման կերպ բնութագրվում են նույնասեռական, տրանս, աղքատ, ոչ սպիտակամորթ տղամարդկանց առնականությունները, ինչպես նաև այն բոլոր առնականությունները, որոնք մարգինալացված են հասարակության մեջ:

«Ռազմականացված առնականությունը» հեգեմոնիկ առնականություններից մեկն է: Այս եզրույթը կիրառվում է այն առնականությունների դեպքում, որոնք կերտվել են ռազմական ինստիտուտի ներքո և կառուցվում ու արտադրվում են զինվորական ծառայության արդյունքում: Շատ հասարակություններում ենթադրում են, որ տղան տղամարդ է դառնում սույն ինստիտուտի շնորհիվ: Ռազմականացված առնականությունը ենթադրում և նպաստում է ուժի ու բռնության տիրապետմանը. բանակը այն հաստատություններից մեկն է, որը բռնության արտադրման համակարգ է: Կարևոր է նշել, որ կոնստրուկտիվիստական տեսությունը խուսափում է տղամարդկանց՝ որպես բնածին բռնի պիտակավորելուց: Ըստ կոնստրուկտիվիստական տեսության՝ բռնությունը պայմանավորված չէ առնականությամբ. տղամարդուն բռնի է դարձնում զինվորական ծառայությունը:

Ըմբռնելու համար, թե ինչպես է բանակի համատեքստում ռազմականացված առնականությունը դիտարկվում որպես կանացիությանը հակադիր իրողություն, կարևոր է հասկանալ գենդերային տարբերությունները և այդ տարբերություններից բխող ուժային հարաբերությունները: Հեդեր Հոփֆլն[5] կիրառում է «կանացիության վերացում» հասկացությունը՝ ռազմականացված առնականության կարևոր հատկություններից մեկն ընդգծելու համար: Քանի որ ռազմական ուժերի նպատակներից մեկն է պաշտպանել կանանց ու երեխաներին, հատկապես մայրերին, որոնք խորհրդանշում են ազգը կամ երկիրը, կանայք և կանացի հատկությունները դիտարկվում են որպես ռազմական մտածելակերպին և պրակտիկային խոչընդոտող հանգամանքներ: Նույն տրամաբանությամբ նաև ստորադասված առնականության դրսևորումն է դիտարկվում որպես անընդունելի գենդերային կատարում բանակի համակարգման շրջանակում, և այդ համակարգը ամեն կերպ փորձում է մերժել և վտարել այն մարդկանց, որոնք չեն համապատասխանում բանակի ներսում ընդունելի ռազմականացված առնականության բոլոր դրսևորումներին: Ըստ ռազմականացված առնականության՝ «իսկական տղամարդը» չպետք է ունենա կանացիությանը վերաբերող առանձնահատկություններ:

Բանակում կանացիության բացառման համար կարևոր է տարանջատել խաղաղ քաղաքացուն զինծառայողից: Ըստ ռազմականացված առնականության՝ խաղաղ քաղաքացին կանացի գենդերային ինքնություն ունեցող մեկն է, որին հակադրվելով՝ զինծառայողը ձեռք է բերում «իսկական» առնական կերպար: Հետևաբար զինվորական պատրաստվածության ժամանակ շեշտը դրվում է զինվորների՝ խաղաղ քաղաքացու ինքնությունը կոտրելու վրա: Այլ կերպ ասած՝ փորձ է արվում զինծառայող անձի միջից վերացնելու կանացիության բոլոր հատկանիշները և դրսևորումները:

Ռազմականացված առնականությունը կարևորվում է նաև թշնամու կերպար ստեղծելու գործընթացում: Գենդերային տեսության շրջանակներում վուգահեռներ են տարվում առնականության ու կանացիության հակամարտության կառուցման համար: Զինվորը իր դիմաց կանգնած թշնամուն պետք է համարի «ուրիշ» մեկը, ով արժանի չէ ապրելու, և այդ մտածելակերպով արդարացնի այդ թշնամուն բռնությամբ և սպանությամբ վերացնելու իրողությունը: Ավելի անուղղակիորեն և նույն մտածե-

5. **J. Heather** (2003), Becoming a (Virile) Member: Women and the Military Body.

լակերպով պետք է վերացվի կանացիությունը, որպեսզի ռազմականացված առնականությունը կարողանա գոյանալ: Այսինքն՝ բանակը մի համակարգ է, որտեղ վինվորներին վարժեցնում են բռնություն կիրառել՝ վերացնելով ուրիշ մեկին, որը հավասարավոր է թշնամու թե՛ այդ բանակի սահմաններից դուրս, թե՛ այդ նույն բանակի ներսում: Կանացիությունը, ընկալվելով որպես առնականության ճիշտ հակառակ կողմը, վերածվում է «թշնամական իրողության», որին պետք է տիրել՝ գրավելով այն:

Եթե վերադառնանք իրականությանը և ընդունենք, որ այն առնականության իդեալին, որին վինվորը պետք է ձգտի, անհնար է հասնել, ապա ստացվում է, որ ռազմականացված առնականությունը անհնար է: Այս գաղափարը նաև շատ բան է ասում բանակի ինստիտուտի մասին, քանի որ վինվոր լինելով՝ պետք է ոչ միայն ուժ և տիրապետություն ցուցաբերել, այլև պետք է հնազանդվել բարձր պաշտոն ունեցող սպաներին, հրամանատարներին և սերժանտներին:

Այսպիսով՝ բանակի ներսում անհնարին առնականությանը ձգտելու և հասնելու համար պետք է լինել այդ համակարգի կրողը, ինչպես նաև անընդհատ բախվել կանացիությունը վերացնելու գործընթացին:

Բռնություն

Տվյալ հետազոտությունը ոչ մի կերպ չի դիտարկում բռնությունը որպես բնությունից բխող երևույթ: Ընդհակառակը՝ բռնությունը կառույց է սոցիալական իրականության մեջ, որն արտադրվում է մարդկային հարաբերություններում՝ դարձնելով մարդկանց բռնի: Ըստ Հաննա Արենդթի՝ բռնությունն իր էությամբ գործիքային երևույթ է. այն ոչ թե վերջնական նպատակ է, այլ միջոց[6]:

Եթե վերադառնանք ստրուկտուրայնության տեսությանը, որը վերաբերում է պայմաններին, որոնք կարգավորում են կառույցների շարունակականությունը ու հետևաբար նպաստում համակարգերի վերարտադրողականությանը, ապա բռնությունը կարող ենք համարել ամենաազդեցիկ ու հզոր պայմաններից ու միջոցներից մեկը, որը պայմանավորում ու կարգավորում է ռազմական համակարգի, ինչպես նաև գենդերային համակարգի

6. **Հ. Արենդթ**, *Բռնության մասին*, 1970:

շարունակականությունն ու վերարտադրողականությունը:

Բանակի ներսում «բռնություն» հասկացությունը տվյալ ուսումնասիրության շրջանակներում ենթադրում է թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի բռնություններ: Եթե համարենք, որ բանակը՝ որպես բռնության հաստատություն, արդեն իսկ ներառում է անուղղակի բռնության հատկանիշներ իր կառույցի ներսում, ապա ուղղակի բռնությունը կամ ֆիզիկական բռնությունը անուղղակի կամ լատենտ[7] (թաքնված) բռնության հետևանք է:

Դեդովշչինան բռնության ամենատարածված դրսևորումներից մեկն է բանակում: Չնայած ռազմական հաստատությունների այն պնդմանը, որ այսպիսի վարվելակերպը նորակոչիկներին միավորում ու մտերմացնում է՝ պատրաստելով նրանց պատերազմի դաժանությունները և դժվարությունները հաղթահարելուն, բռնության նման դրսևորումները իրականում նպատակ ունեն նորակոչիկներին դարձնելու բռնություն կիրառողներ: Այսինքն՝ դեդովշչինայի պրակտիկաները օգտագործում են բռնությունը որպես միջոց՝ բռնության համակարգը վերարտադրող վինվորներ պատրաստելով: Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ ռազմականացված առնականությանը և հասկանալ, թե ինչպես է բանակի ներսում բռնությունը օգտագործվում որպես տղամարդ դարձնելու գործիք:

Ուսումնասիրելով ռուսական և շվեդական բանակներում ռազմականացված առնականության և բանակի ներսում բռնության առկայությունը՝ տվյալ հետազոտությունը բացահայտում է ռազմականացված առնականության առնչությունը բանակի ներսում կատարվող բռնություններին: Արդյունքում անհնար է դառնում բանակի ներսում կատարվող բռնությունը, օրինակ՝ դեդովշչինան, տարանջատել բանակի ներսում կատարվող վինավարժություններից:

Օրինակներ շվեդական և ռուսական բանակներից

Բանակի ներսում կատարվող բռնությունների և ռազմականացված առնականության կապը բացահայտելու նպատակով հարցազրույցներ են անցկացվել շվեդական և ռուսական բա-

7. **Յ. Գալթունգ**, *Բռնություն, խաղաղություն և խաղաղության ուսումնասիրություն*, 1970:

նակներում 2006-2011 թվականների ընթացքում ծառայած երիտասարդների հետ: Շվեդական և ռուսական բանակները ընտրվել են որպես իրարից մեծ չափով տարբերվող բանակներ: Ըստ այդմ՝ հնարավոր է եղել համեմատել երկու բանակների ներսում կայացող ռազմականացված առնականության տեսակները և դրանց ազդեցությունը բանակի ներսում տիրող բռնությունների վրա: Երկու դեպքում էլ վինծառայողներն իրենց ծառայողական պարտքը կատարել են պարտադիր վինծառայության համատեքստում:

Մեծ մասամբ հարցազրույցները ուղղված էին ռազմականացված առնականության դրսևորումների բացահայտմանը: Միևնույն ժամանակ տեղեկատվական տարբեր աղբյուրներից հավաքվել էին 2006-2011 թվականների ընթացքում տեղի ունեցած բռնությունների մասին նյութեր, որոնք հետո համադրվել էին այդ բանակներում ծառայողների ռազմականացված առնականության պատմությունների հետ:

Ռազմականացված առնականությունը շվեդական բանակում

Շվեդական բանակում ծառայածների հետ հարցազրույցներում ավելի շատ էր նկատվում մրցակցությունը՝ որպես ռազմականացված առնականության գլխավոր հատկանիշ. մրցակցություն, որի շնորհիվ ամենայն հավանականությամբ հնարավոր կլիներ գերիշխել բոլոր ոլորտներում: *«Դու սոլիդար ես այն խմբին, որի մեջ ներգրավված ես, հետևաբար դու մտնում ես հակամարտության մեջ այլ խմբերի հետ նույն գնդում...: Ու հետո ավելի մեծ ծավալով նույն կորամասում մի գունդը հակամարտության մեջ է գտնվում մի այլ գնդի հետ, ու այդպես շարունակ: Հետո երկու տարբեր կորամասեր իրար հետ հակամարտության մեջ են մտնում»*,– նշում էր բանակում ծառայած երիտասարդներից մեկը: Այս ամենը խրախուսվում էր հրամանատարների կողմից և դիտարկվում որպես առողջ մոտեցում՝ բանակում առաջ գնալու համար:

Մի այլ հարցազրույցում բանակում ծառայած երիտասարդներից մեկը նշում էր. *«Մեր գնդում կային վինվորներ, որոնք Աֆղանստանում էին ծառայել ու շատ գոռոզ էին, մեկ ասում էին, որ մենք ղպիկներ ենք...»*: Այսպիսով՝ Աֆղանստանում չծառայած վինվորը դառնում էր ստորադաս առնականության կրող և ստանալով «ղպիկ» բնորոշումը՝ այդպես դիտարկվում էր որպես ավելի կանացի: Նշված հանգամանքը հնարավորություն էր տալիս Աֆղանստանում ծառայած վինվորին մրցակցության մեջ մտնելու՝ հաստատելով իր տեսակի ռազմականացված առնականությունը՝ որպես գերիշխող:

Հարցազրույցներից պարզ դարձավ նաև շվեդական բանակում առկա ֆեմինիզացման նկատմամբ հակակրանքը: Այս խնդիրը դրսևորվում էր, օրինակ, երկար մազերով, խոշորամարմին, հաստ ավդրեր ունեցող և առնականության որևէ հատկանիշ խախտող տղամարդկանց նկատմամբ: Նշված համատեքստում նաև ընդունված էր նույնասեռականության նկատմամբ հակակրանքը, և շատ անգամ, երբ մի բան դիտարկվում էր որպես բացասական երևույթ, վինվորները այն անվանում էին «գեյ»: Սակայն բանակում ծառայած երիտասարդներից մեկի կարծիքով՝ դա շատ չէր տարբերվում հասարակության մյուս ոլորտներում հնչող նսեմացնող արտահայտություններից:

Բռնություններ շվեդական բանակի ներսում

Շվեդական բանակի ներսում բռնությունն ավելի անուղղակի ձևաչափով է հանդես գալիս: Այստեղ դեդովշչինան օրենքով արգելված է, և դեդովշչինայի դեպքերը պաշտոնապես չեն գրանցվում: Սակայն, երբ լինում են նման դեպքեր, ավելի հավանական է լուծում ստանալ ներքին կարգով: Դա առավելապես չգրված օրենքների և ավանդույթների մասին է խոսում, որովհետև դեդովշչինան սոցիալական և մշակութային որոշ գործառույթներ է կատարում, և այդ պատճառով դժվար է դառնում դրա արգելումը: Շատ անգամ տեղի են ունենում հոգեբանական բռնություններ, ինչպիսիք են, օրինակ, ծաղրանքը, չար կատակներ անելը, խոսքով մարդուն ստորացնելը և հոգեպես ճնշելը: Ուղղակի և ֆիզիկական բռնության պակասը կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ Շվեդիայում մարդու իրավունքներն ավելի պաշտպանված են, քան այլ երկրներում, ուստի այնտեղ պաշտպանված են նաև վինվորների իրավունքները:

Չնայած նրան, որ դեդովշչինայի գրանցված դեպքեր չկան, շվեդական բանակում ծառայած երիտասարդների հետ վրուցելիս պարզ դարձան նաև ֆիզիկական այլ տեսակի բռնության դեպքեր: 2010 թվականին ծառայած երիտասարդներից մեկը պատմում էր. *«Կարող եմ հստակորեն ասել, որ շատ բաներ ընդհանրապես չէր կարելի համարել վինավարժություն, շատ գործողություններ հաճախ ավելի նման էին դեդովշչինային: Ամեն ինչ շատ խիստ էր, ու հրամանատարները շատ հպարտանում էին, ու շատ անգամ, եթե նույնիսկ մենք բան չունեինք անելու..., նրանք մեզ ստիպում էին մրցակցել, օրինակ՝ ասում էին, որ 100 մ այս կողմ-այն կողմ չոքեչոք գնանք, և ով կհաղթեր, կստանար Կոկակոլա»*:

Բանակում ծառայած մի այլ երիտասարդ պատմում էր. «*Սա օրինական չէ,– ասաց ընկերներիցս մեկը,– որովհետև մենք պետք է նվագագույնը 6 ժամ հատկացնենք քնելուն»*: Իսկ հրամանատարը պատասխանեց. «*Քո կարծիքով ես թքած չունե՞մ իրավական համակարգի վրա»*:

Կապելով ռազմականացված առնականությունը բանակի ներսում կատարվող բռնությունների հետ՝ հնարավոր է հրամանատարի վերոհիշյալ վերաբերմունքը վերագրել գերիշխող առնականությանը, համաձայն որի՝ բռնություն կիրառող ռազմականացված առնական հրամանատարը վեր է վինվորի՝ մարդու իրավունքները սահմանող օրենքից:

Ռազմականացված առնականությունը ռուսական բանակում

Ռուսական բանակում ծառայած վինվորների հետ հարցազրույցներում ավելի շատ ընդգծվում էին ֆեմինիզացման նկատմամբ հակակրանքը, անկոտրում հնազանդությունը՝ որպես ռազմականացված առնականության դրսևորումներ: Ֆեմինիզացման նկատմամբ հակակրանքը վերաբերում է բանակի ներսում տիրող տարաձայնություններին կանանց և կանացի հատկությունների գոյության հարցում: Ռուսական բանակում նշված իրողությունը գլխավորապես դրսևորվում է հոմոֆոբիայի տեսքով:

Ռուսական բանակում ծառայած երիտասարդներից մեկը

պատմում էր. *«Իմ կարծիքով՝ բանակը գեյերի տեղը չէ: Տարօրինակ է և բնությանը հակառակ, երբ տղամարդիկ ունեն կանացի հատկություններ»:* Սա վերաբերում է առնականության թեմային, որի շուրջ խոսեցինք:

Մի այլ վրույցում նշվեց ռուսական բանակում կիրառվող մարտավարություններից մեկի մասին. *«Սպաները մեզ ասում էին «գյոթեր»: Գոռում էին մեզ վրա: Իրականում դա չի նշանակում, որ նրանք կարծում էին, որ մենք նույնասեռական ենք: Կարծում եմ՝ ավելի շուտ դա միջոց էր՝ մեզ ցույց տալու, թե ով է տիրում, և որ մենք միայն վինծառայողներ ենք, որոնք պարտավոր են անել այն ամենը, ինչ հրամայում էին նրանք»*:

Համաձայն գենդերային տեսությանը՝ կանացիության բոլոր հատկությունները, գենդերային հիերարխիայի ներքևում գտնվելով, նպաստում են գերիշխող առնականության կառուցմանը: Տվյալ դեպքում նորակոչիկներին «գյոթ» անվանող հրամանատարները հաստատում էին իրենց առնականությունը՝ որպես գերիշխող գենդերային այն համակարգում, որտեղ երբ տիրում ես, նվաստացնում ես ուրիշին և բռնություն կիրառում, ապա հայտնվում ես այդ համակարգի վերևում:

Ռուսական բանակում ֆեմինիզացման նկատմամբ հակակրանքը խիստ փոխկապակցված է «անկոտրում հնազանդություն» հասկացության հետ: Անկոտրում հնազանդության համաձայն՝ վինվորը պետք է լինի անկոտրում, որպեսզի հասնի ռազմականացված առնականության իդեալին, միևնույն ժամանակ պետք է հնազանդվի ռազմական ստորակարգային կամ հիերարխիկ վարչակարգին: Մի կողմից վինվորը ձգտում է հասնել ռազմականացված առնականության իդեալին, մյուս կողմից ստիպված է հնազանդվել հրամանատարներին: Ըստ այդմ՝ վերջինիս մոտ հվոր հակակրանք է առաջանում ֆեմինիզացման՝ որպես հնազանդության հակադրվելու միջոցի նկատմամբ:

Բռնություններ ռուսական բանակի ներսում

Ռուսական բանակի ներսում կատարվող բռնությունները ուղղակիորեն կապված են այնտեղ տիրող ռազմականացված առնականության տեսակի հետ: Ռուսական բանակում հատ-

կապես նույնասեռական տղամարդկանց կամ ենթադրյալ նույնասեռական տղամարդկանց սեռականորեն օբյեկտիվացումը օգտագործվում է այլ տղամարդկանց կողմից գերիշխանություն ցուցաբերելու համար: Սա ենթադրում է ոչ միայն հոգեբանական ճնշում, այլև ավելի ուղղակիորեն՝ բռնաբարության գործողություն: Գենդերային տեսության համաձայն՝ ռավմականացված առնականության գոյության համար անհրաժեշտ է վերացնել կանացիության բոլոր հատկությունները: Հետևաբար նույնասեռական տղամարդկանց կամ ենթադրյալ նույնասեռական տղամարդկանց սեռականորեն օբյեկտիվացումը և/կամ բռնաբարությունը ռուսական բանակի ներսից կանացիությունը վերացնելու փորձ է: Տվյալ հետապոտության բացահայտումներից մեկն էլ այն է, որ այս տեսակի ռավմականացված առնականության դեպքում բանակի ներսում բռնությունները ավելի ուղղակի, ֆիզիկական և տեսանելի են լինում: Ուստի ռուսական բանակի ներսում ֆիզիկական բռնությամբ փորձում են վերացնել հնազանդվելու արդյունքում հնարավոր դարձած կանացիության առկայությունը:

Ի տարբերություն շվեդական օրինակի՝ ռուսական բանակում տեղի ունեցած բռնության դեպքերը գրանցվում են մարդու իրավունքների շահերը պաշտպանող տարբեր կազմակերպությունների կողմից: Միայն 2008 թվականին 1239 զինվորներ դատապարտվել են դեդովշչինայի պատճառով[8], իսկ 2009 թվականից մինչև 2010 թվականը դեդովշչինայի դեպքերը ռուսական բանակի ներսում 15%-ով աճել են[9]:

Ռուսական բանակում դեդովշչինայի արդյունքում իրագործված ուղղակի բռնության տեսակներից են խոշտանգումն ու ծեծը, զինվորին ուտելիքից, քնից, ապաստանից, ինչպես նաև բժշկական օգնությունից զրկելը, խոսքը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ զինվորը դեդովշչինայի արդյունքում ստացել է վնասվածք: Նշված բռնությունների հետևանքով զինծառայողը կարող է ենթարկվել անդամահատության, ձեռք բերել հաշմանդամություն, և ծայրահեղ դեպքերում բանակի ներսում բռնությունները կարող են հանգեցնել նաև ինքնասպանության և մահվան:

8. *Nepravitelstvennoye Soobshenie: O Situacii s Pravami Cheloveka v Sfere Voyenno-Grazhdanskikh Otnoshenii v 2013 Godu* (2014), Soldier's Mothers St. Petersburg.

9. U.S. Department of State (2011), *2010 Human Rights Report, Russia*, Bureau of Democracy, Human Rights and Labor.

Ինչ առնչություն ունի ռավմականացված առնականությունը բանակի ներսում կատարվող բռնությունների հետ

Ռավմականացված առնականությունը առկա է բոլոր բանակներում, քանի դեռ ռավմական հաստատությունները հիմնված են բռնություն քարոզելու, սովորեցնելու և արտադրելու իրողությունների վրա: Բռնություն քարոզելով և կիրառելով՝ առնականությունը ռավմական բնույթ է ստանում: Հակադրվելով կանացիությանը և ստորադաս առնականություններին՝ բանակի ներսում զինծառայողների նկատմամբ կատարվող բռնությունները նպաստում են ռավմականացված առնականության վերարտադրման գործընթացին:

Ռուսական և շվեդական բանակներում տիրող ռավմականացված առնականության և բռնության դրսևորումների հետազոտության արդյունքում հայտնաբերվեցին երկու տեսակի ռավմականացված առնականություններ: Շվեդական բանակում ռավմականացված առնականությունն առավելապես դրսևորվում է մրցակցությամբ և տեսանելի դառնում զինծառայողների, վորամասերի և գնդերի միջև հակամարտության արդյունքում: Ռուսական բանակում գերիշխող ռավմականացված առնականությունը պայմանավորված է անկոտրում հնազանդությամբ: Վերջինս խիստ բարդացնում է ռուսական բանակում ծառայող զինվորի փորձը՝ ձեռք բերելու ռավմականացված առնականության այն իդեալը, որտեղ որևէ մեկին հնազանդվելն անընդունելի է: Արդյունքում ստեղծվում է ֆեմինիզացման նկատմամբ հակակրանք:

Երկու բանակներում ֆեմինիզացման նկատմամբ հակակրանքը կարևոր դեր է խաղում ռավմականացված առնականության կառուցման գործում, սակայն ռուսական բանակում այն ավելի ուժգին է դրսևորվում և բռնության կարևորագույն պատճառներից մեկն է: Եթե համեմատենք շվեդական և ռուսական բանակների ներսում տեղի ունեցած բռնությունները, պարզ կդառնա, որ առաջինի դեպքում բռնությունն անուղղակի է, իսկ երկրորդի դեպքում՝ ավելի ուղղակի և ֆիզիկական:

Արդյունքում հնարավոր է դառնում ենթադրել, որ բանակի ներսում զինծառայողների նկատմամբ կիրառվող բռնության տեսակը ֆիզիկական բնույթ ունի և դաժան է, երբ սույն բանակում

գերիշխող ռակմականացված առնականությունը հիմնված է կանացիությունը վերացնելու իրողության վրա: Իսկ երբ ռակմականացված առնականությունը նաև պարտադրում է վինծառայողին լինել միաժամանակ անկիջում և հնապանդ, ապա կանացիությունը վերացնելու փորձը դառնում է միջոց՝ ձեռք բերելու ռակմականացված առնականության իդեալ, որին անհնար է հասնել:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼԻՍ. ՀԻՍՏԵՐԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ[1]

Աննա Հարությունյան

1. Հոդվածը հայերեն թարգմանվել է անգլերենից:

«Տգիտությունն այսօր մեր երկրի համար ամենամեծ չարիքն է: Կույր հավատի փոխարեն մեկ պիտի սովորեցնեն պրպտուն միտք ունենալ»:
Սեպտիմա Պուանսեթ Քլարք

Հայաստանը 2013 թվականից առաջ և հետո

Անկախության 25 տարիների ընթացքում Հայաստանը միացել է մի շարք միջազգայնագրերի, ձևավորել է ազգային գենդերային օրենսդրություն և համագործակցելով միջազգային համայնքի հետ՝ կյանքի է կոչել տարբեր ասպարեզներում գենդերային հավասարությանն ու գենդերային համապարփակ քաղաքականությանը նվիրված վարգացման ծրագրեր: Ավելին՝ գենդերային խոսույթն իր վարգացումն է ապրել քաղաքացիական հասարակության, մասնավորապես հասարակական կառույցների (հիմնականում կանանց կողմից ղեկավարվող, մասնավորապես սովետական անցյալի կառավարման փորձն ունեցողների միջոցով) առաջնորդության շնորհիվ, որոնք բավականին վարժ ու հմտորեն կարողանում էին հավասարակշռել ժամանակակից խոսույթներն ու ավանդույթը՝ որդեգրելով «գենդեր» եզրույթի նկատմամբ այնպիսի տեսանկյուն, որը թույլ կտար հօդս չցնդել, չաներևութանալ շահույթ չհետապնդող հատվածում:

Ի հեճուկս պետության՝ քաղաքացիական հասարակության և միջազգային համայնքի կողմից ներդրված ջանքերին՝ իրականությունը երևան է հանում «գենդեր՛ եզրույթի և հարակից իմաստներով հասկացությունների շուրջ ընդհանուր ընկալման բացակայության փաստը: Այդպես բացահայտվում էր դրանց չարաշահման ու թյուրընկալված լինելու վիճակը, ինչն էլ, խորացնելով կարծրատիպերը, հանգեցնում էր գենդերային հավասարության շուրջ ձևավորված խեղված խոսույթին:

Մինչ 2013 թվականի մայիսը «գենդեր» հասկացությունը հատվածային բանավեճերի առարկա էր, այն էլ՝ հիմնականում քաղաքացիական հասարակության շրջանակներում: Այն պա-

հից սկսած, երբ գենդերային հավասարության մասին օրենքի նախագիծը ներկայացվեց ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը, այն երևան հանեց «հիստերիկ» դրսևորումներ հանրության շրջանում: Սա նախանշեց գենդերի շուրջ հանրային խոսույթի մեկնարկը, որը ջրի երես հանեց այդ հասկացության վերաբերյալ առկա տարբեր մտքերը, գաղափարները, վերաբերմունքը, իմաստները ու պատմույթները: Պարզվեց, որ «գենդեր» բառը կարող է գործածվել հասարակական տարբեր հոսանքների կողմից՝ ներառելով եկեղեցու ներկայացուցիչներին, ավանդապաշտներին, ազգայնական տրամադրություններով աչքի ընկնող երիտասարդների խմբերին և այլ մարդկանց: Նաև ակնհայտ դարձավ, որ վանգվածային լրատվության միջոցներն ու մասնավորապես դրա ցանցային հատվածը խեղված են ներկայացնում «գենդեր» հասկացությունը:

Օրենքի նախագիծը շրջանառության մեջ էր դրվել 2011 թվականից այդ ժամանակ իշխանությունը ներկայացնող կուսակցություններից մեկի՝ «Օրինաց երկրի» կողմից: Առաջին նախագիծը բավմիցս քննարկվել էր, ապա վերադարձվել: Դեռևս 2012 թվականին՝ առցանց լրատվամիջոցները վերլուծելիս, պարզ դարձավ, որ հասարակության, ինչպես նաև մեդիայի, քաղաքացիական հասարակության, պետական պաշտոնյաների տրամադրվածությունը դրական էր: Առկա առցանց նյութերն ու սոցիալական ցանցերում տեղադրված հոդվածները հուշում են, որ այդ նախագծի շուրջ քննարկումներն ընդհանուր առմամբ շատ խաղաղ են ընթացել և ավելի հանդուրժողական են եղել «գենդեր» եզրույթի նկատմամբ: Կառավարությունը «Գենդերային հավասարությանը նվիրված խորհրդարանական լսումների մասին» հատուկ երկլեզու՝ հայերեն և անգլերեն տեղեկանք էր տեղադրել ՀՀ Ազգային ժողովի կայքէջում, որը գենդերային հավասարության առկա վիճակի մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակ ուներ: Ազգային ժողովի խոսնակը հույս էր հայտնել, որ այդ լսումները կնպաստեն Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը, իսկ քննարկումները կլրամշակեն օրենքի նախագիծը: Լսումների ժամանակ բավում փաստարկներ են բերվել գենդերային հավասարության օգտին՝ ներկայացնելով քաղաքական և իրավական առավելությունները, նաև օրենքի նախագծի ընդունման նպատակահարմարության պատմական հիմնավորումները:

Վերոնշյալ օրենքի ընդունման անհրաժեշտությունը քննարկվել է նաև ազգային անվտանգության տեսանկյունից[10]: Բացման խոսքում Ազգային ժողովի խոսնակ Սամվել Նիկոյանը մասնավորապես շեշտադրել է խնդրի պատմական հիմքերը: Հետաքրքրական է, որ խոսնակը կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը խորթ չի համարել մեր ազգային նկարագրին՝ այն փոխկապակցելով մեր մշակույթին: Նա թվարկել է այն ցանկը, որը պարզ մատնանշում էր խնդրի՝ մեր օրենքներում արտացոլված լինելու փաստը դեռևս 4-րդ դարից մինչև 1918 թվականին Հայաստանի Հանրապետության հիմնադրումը, երբ կանայք ու տղամարդիկ հավասարապես մասնակցում էին ընտրություններին և կարող էին ընտրվել: Լսումներին հրավիրված էին քաղաքացիական տարբեր խմբեր, և իրենց հնարավորություն էր տրվել խոսելու խնդրի շուրջ:

2012 թվականին գենդերային հավասարությունն այնքան էր կարևորվում, որ արժանացել էր օրենսդրական ամրագրման: Այս քննարկումներում պարզ դարձավ, որ տարբեր մարդիկ, այդ թվում՝ թե՛ պետական պաշտոնյաներ, թե՛ հանրային դեմքեր կարևորում էին գենդերային հավասարության վերականգնումը, քանի որ հայ կինը պատմականորեն լայն իրավունքների կրող է եղել:

2013 թվականի մեկնարկին՝ այդ լսումներից հետո, ՀՀ Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության երկու պատգամավորներ քննարկման են ներկայացրել այդ օրենքի նախագծի իրենց տարբերակը: Երբ նախագիծը հասավ վերջնական վավերացմանը, հանրության մեջ մի աննախադեպ իրարանցում բարձրացավ: Դա առավելապես դրսևորվեց ուշ գարնանը՝ ամբողջովին հեղեղելով համացանցն ու սոցիալական ցանցերը: Քննարկումները ծավալվում էին թե՛ սոցիալական ցանցերում, թե՛ այլուր: Էլեկտրոնային լրատվամիջոցների այդ հոդվածների էջերում մեծ թիվ էին կազմում ընթերցողների գրառումները: Մեծամասնությունը կարծում էր, որ գենդերային հավասարության մասին օրենքը փորձում էր խրախուսել նույնասեռականությունը, և դա արվում էր հայ ազգի դեմ. խարխլվում էին ազգային ավանդույթներն ու արժեքները[11]:

---

10. ՀՀ Ազգային ժողով, Գենդերային հավասարությանը նվիրված հանրային լսումներ, 2012:

11. Տե՛ս որոշ հոդվածներ, ինչպես նաև «Գենդերային հավասարության մասին» օրենքի վերաբերյալ տարբեր էջերում տեղ գտած քննարկումները՝ *«Խորհրդարանականները պետք է որոշեն իրենց սեռը»*, «Առավոտ» օրաթերթ, սեպտեմբեր, Երևան, 2013, *«Հանրային նախաձեռնությունները պայքարում են գենդերային հավասարության մասին օրենքի դեմ»*, «Արմենպրես», օգոստոս, 2013, «Դար» ակումբ հանրային ֆորում, քննարկում «Գենդերային հավասարության մասին» օրենքի շուրջ, հուլիս, Երևան, 2013:

Հակագենդերային քարոզչության մեջ նկատվում էին նաև Հայ առաքելական եկեղեցու որոշ ներկայացուցիչների դիրքորոշումները: Վերջիններս հարցազրույցներ էին տալիս ու հոդվածներ գրում[12] «Գենդերային հավասարության մասին» օրենքի թեմայով՝ էլ ավելի թեժացնելով քննարկումները սոցիալական ցանցերում: Հիմնական պատգամն էր՝ «Ո՛չ գենդերային օրենքին, ո՛չ ազգի այլասերմանը հանուն հայ ընտանիքի ու հայ երեխաների, հանուն մեր երեխաների»:

«Սա որոշ մարդկանց նպատակն է. ուզում են այլասերել ազգերը: Քանի որ այս որոշումը հակասում է բարոյականությանն ու Աստծո կամքին, նաև բնության դեմ է. բնության մեջ ցանկացած էակ ունի իր ներքին արժեհամակարգը: Կանաչ ճանապարհ հարթելով գենդերային հավասարության օրենքին մենք ազգային այլասերման հիմքերն ենք դնում: Մենք այստեղ ներկայանում ենք հայ ազգի անունից», – նշում էր հայր Կոմիտաս վարդապետ Հովնանյանը (հոկտեմբեր, 2013 թ.)[13]:

2013 թվականին մեդիայում ծավալված հակագենդերային խոսույթի տարբերանշաններից մեկը քաղաքացիական բողոքի ակցիաների կիրառումն էր, օրինակ՝ փողոց դուրս գալը հակագենդերային պաստառներով՝ մասնավորապես ներգրավելով երիտասարդությանը, կամ հարթակը տրամադրվում էր երիտասարդ կանանց, որոնք պնդում էին օրենքի հակահայկականության ու հակականացիության բնույթի մասին:

Քննարկումների հետաքրքիր տարբերակիչներ էին սոցիալական հարթակում հակագենդերային ճամբարի գերակայությունն ու գրառումները: Մինչդեռ մյուս ճամբարը, որն ամենայն հավանականությամբ գոյություն ուներ, մեծապես լուռ մնաց, սակայն համացանցում, սոցիալական ցանցերում ծավալվող քննարկումներում վերջիններիս գրառումները գրոհի էին արժանանում և անմիջապես լռեցվում մասնավորապես «Համահայկական ծնողական կոմիտեի», «Ոչ գենդերային նախաձեռնությանը» և «Մեկ ազգ» խմբերի կողմից:

12. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը անուղղակիորեն դեմ է գենդերային հավասարության մասին օրենքի նախագծին»*, tert.am, օգոստոս, Երևան, 2013, *«Հայր Կոմիտասը կառավարության շենքի առջև բողոքում է գենդերային հավասարության օրենքի դեմ»*, «Առավոտ» օրաթերթ, հոկտեմբեր, Երևան, 2013:

13. *«Հայր Կոմիտասը մասնակցեց գենդերային օրենքի դեմ բողոքի ակցիային»*, news.am, հոկտեմբեր, Երևան, 2013:

Իմացություն գենդերի մասին. ի՞նչ գիտենք գենդերի մասին

Որակական տվյալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ գենդերի մասին գիտելիքները հիմնականում ձևավորվել են մեդիայում հանրային ընդհանրական քննարկումների արդյունքում: Տեղեկատվության հիմնական աղբյուր հանդիսացավ «գենդեր» հասկացության մասին 2013 թվականին օրենքի նախագծի շուրջ ծավալված քննարկումների շարքը: Այնուամենայնիվ, որոշ ֆոկուս խմբերում «գենդեր» եզրույթը պարբերաբար շրջանառվում էր քննարկումներում, հիմնականում Երևանի և Տավուշի երիտասարդների կողմից, ինչն էլ մատնանշում էր նրանց շրջանում իմացության ձևավորման գործում քաղաքացիական հասարակության կառույցների կողմից կազմակերպված սեմինարների ազդեցությունը:

«Ի՞նչ եք հասկանում գենդեր ասելով» հարցին մարդիկ հաճախ պատասխանում էին, որ դա կնոջ և տղամարդու սեռային տարբերությունն է, կամ գենդերը կինն ու տղամարդն են: Յուրաքանչյուր խմբում միշտ հայտնվում էր մեկը, որը գենդերը նույնականացնում էր կնոջ ու տղամարդու հավասարության հետ: Քաղաքացիական հասարակության համատեքստում «գենդեր» եզրույթը երբեմն դիտարկվում էր որպես ժողովրդավարության և մարդու իրավունքների նախապայման: Նման պնդումներ հանդիպում էին միայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, բայց նաև երևանյան մի ուսանողական խմբի հետ հարցազրույցների ընթացքում: Որոշ մարդկանց կարծիքով՝ գենդերը երկու սեռերի միջև առկա սոցիալական պայման է:

> *«Պետք է հասկանանք, որ գենդերը սոցիալական պայման է ու խնդիր: Թույլ տվեք բացատրել: Այս բառի շուրջ ավելորդ աղմուկ կա, բայց քչերը գիտեն դրա բուն իմաստը: Գենդերի մասին տեղեկատվություն չկա, մարդ էլ չկա, որ կբացատրի դրա նշանակությունը: Հակիվ բացատրեցին ներառական կրթության իմաստը, շատ ջանք ենք գործադրել, որպեսզի հիմա բոլորը լավ հասկանան ու ընդունեն: Այստեղ ևս պետք է բացատրել գենդերի իմաստը: Օրինակ, եթե երբեք մեղր չեք փորձել, ինչպես իմանաք՝ քաղցր է, թե դառը»:*
>
> (ՀԿ ներկայացուցիչ, Իջևան, ՖԽՔ)

«Հայ ընտանիք» հասկացությունը քննարկումներում հաճախ փոխկապակցվում էր «գենդեր» բառի հետ և թեժացնում խոսակցությունը, քանի որ հանդիպում էին մարդիկ, որոնք ցանկություն չունեին այդ երկուսն իրար կապելու ու ակնհայտորեն ընդդիմանում էին: Նշված քննարկումները մասնակիցների շրջանում տեղի տվեցին երկար երկխոսություններին: Նման պնդումները, մասնավորապես կանանց շրջանում, հակափաստարկների առիթ էին տալիս:

«Եթե գենդերը կանանց ու տղամարդկանց հավասարության մասին է, ապա այն իսկական հայ ընտանիքի մասին է, որտեղ յուրաքանչյուրն իր դերն ունի և հարգված է մյուսի կողմից»:

(Չափահաս երիտասարդ տղամարդ, Իջևան, ՖԽՔ)

«Չէ՛, մի րոպե, եթե ավանդական ընտանիք ենք ասում, մենք նկատի չունենք ինչ-որ առանձին ընտանիքներ: Մենք նկատի ունենք միջին վիճակագրական ավանդական հայկական ընտանիքը, որտեղ կինն ամեն բան անում է. եփում է, լվանում, իսկ տղամարդը գումար է վաստակում, որտեղ դերերը հստակորեն բաժանված են, և որտեղ կինը տղամարդուց թույլ է: Հա՛, դա այն ընտանիքն է, որտեղ կինը տղամարդու հսկողության տակ է: Եթե Ձեր հայրը օգնում էր Ձեր մորը կամ հակառակը, ուրեմն դա օրինակելի ընտանիք է, բայց ոչ ավանդական»:

(Տարեց կին, Իջևան, ՖԽՔ)

Իջևանի ֆոկուս խմբի մասնակիցների կարծիքով՝ օրինակելի և ավանդական ընտանիքները տարբեր են: Բայց և այնպես, դրա հետ մեկտեղ նրանք դժվարանում էին մատնանշել այդ տարբերությունները: «Ավանդական ընտանիք» հասկացությունը կիրառվում էր «գենդեր» եզրույթին վուգահեռ՝ գիտելիքին առնչվելու և գենդերային հավասարությունը ընկալելու նպատակով:

Ֆոկուս խմբային համարյա բոլոր քննարկումներում մասնակիցները նշում էին, որ ժամանակակից ավանդական ընտանիքը տարբերվում է անցյալի իր տարբերակից: Բազմաթիվ մասնակիցներ նշում էին, որ «ավանդական ընտանիք» հասկացությունը ներկայումս որոշակիորեն «շեղված է», և կարիք կա հանրությանը բացատրելու «գենդեր» եզրույթն ու մարդկանց սովորեցնելու իրական հայկական ընտանիքի նոր մոդելը:

«Գիտեք՝ մենք հաճախ ենք գործածում «ավանդական ընտանիք» հասկացությունը, բայց դրա խորքը չենք նայում: Մենք գաղափար չունենք, թե որքան դրական բան կա դրա մեջ: Դուք ինձ հարցրիք, թե որտեղից եմ լսել «գենդեր» հասկացությունը: Առաջին անգամ ես այն տեսել եմ իմ հայրական տանը: Երբ հայրս ու մայրս հավերին կերակրում էին, դա անում էին միասին: Սարերից խոտը միասին էին բերում: Մայրս բեռնատարի վրա կանգնած ոտքերով սեղմում էր խոտը, հայրս դրանք տեղադրում էր մեքենայում: Երկուսն էլ քրտնաջան աշխատում էին՝ կիսելով բեռը: Եվ դա, ըստ իս, իսկական հավասարություն էր: Ահա թե որտեղ եմ սովորել գենդերային հավասարությունը»:

(Տարեց տղամարդ, ՖԽՔ, Իջևան)

Վերջապես շատ հետաքրքիր դիտարկում հնչեց Երևանի ուսանողներից մեկի կողմից: Վերջինս «ավանդական ընտանիք» հասկացության մի այլ՝ նոր և ոչ ավանդական սահմանում առաջարկեց. *«Չկա այլ ավանդական ընտանիք, քան իմ ծնողներինը: Այդ մոդելը ավանդական է եղել կամ, այսպես կոչված, ավանդական ընտանիքն է եղել՝ ես, իմ կինն ու իմ երեխաները»:*

Նշված պնդումը հիմնված է երիտասարդ տղամարդու անձնական փորձի վրա. նա հստակորեն և շոշափելիորեն սահմանում է հասկացությունը, որը տարբերվում է «ավանդական ընտանիք» հասկացության տարածված պատկերացումից. այն առավել երևակայական է (և պարբերաբար վերապատկերվում է) ու հանրության համար ընկալելի հենք չունի: Նման պնդումները սահմանումների շուրջ հետագա այնպիսի քննարկումների առիթ հանդիսացան, ինչպիսիք են՝ ինչ ենք հասկանում ավանդույթ, ընտանիք, ավանդական հայ ընտանիք ասելով կամ ավանդական ասելով՝ ինչ նկատի ունենք: Նմանօրինակ քննարկումների հիմնական շարժիչ ուժը թե՛ Իջևանում, թե՛ Երևանում ուսանողներն էին, որոնք առավելապես սոցիալիստական անցյալին էին հղում կատարում, քան ավելի վաղ ժամանակաշրջանին: Այդ սոցիալիստական անցյալն ավելի լավ հղման կետ էր նրանց համար, քանի որ շոշափելի էր, հստակ և հիմնվում էր նրանց ընտանեկան փորձի վրա:

Թե՛ ուսանողների, թե՛ երիտասարդ կամ ավագ սերնդի ներկայացուցիչների հետ համայնքներում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ անցկաց-

ված գրեթե բոլոր ՖԽՔ-ներում հակընդդեմ հարց էր՝ «*Իսկ դուք ինչ կասեք «գենդեր» հասկացության մասին»:* Կամ, օրինակ, Երևանում տարեցների հետ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ մի տարեց կին կտրուկ ընդհատեց վարողի ներածական ելույթն ու ասաց. *«Մի ասա տեսնեմ, թե ինչու դրանք էդ բառը բերեցին էստեղ, հը՞: Ուղղակի ուզում եմ իմանալ: Սա մեր հայերեն բառն է»*: Մարդիկ, որպես կանոն, հարցնում էին. *«Վերջը մեկ կասե՞ս էդ բառի նշանակությունը»*:

> *«Մենք ինչ-որ բանից ենք խոսում, որ հայտնի չէ՝ ինչ է: Իմ հարցը, հետևաբար, հետևյալն է. «Ա. ջան, վերջապես գենդեր ասելով՝ ինչ ես հասկանում: Ինչ ասել է սոցիալական կոնստրուկտ: Սրանք ասա, հետո կխոսենք: Մեկ հստակ սահմանումներ են պետք»:*
>
> (ՀԿ ներկայացուցիչ, Իջևան)

Երկար ու համապարփակ բացատրությունից հետո, թե վերջապես ինչ է նշանակում «գենդեր», մի իջևանցի ՀԿ տղամարդ ներկայացուցիչ դժգոհ մնաց: Ֆոկուս խմբային մի այլ քննարկման ժամանակ միանգամից հնչեց հակընդդեմ հարցը, ապա պատասխանից հետո ընդդիմության արժանացավ: Քննարկման ավարտին մասնակիցները նորից ասացին, որ այլ սեմինարների նման կրկին չընկալեցին «գենդեր» բառի իմաստը:

Երևանում տարեցների հետ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ «գենդեր» հասկացության սահմանումից հետո մասնակիցներից մեկը պատասխանեց. *«Գիտես, աղջիկ ջան, էս սահմանումների կարիքը չունենք: Էս ամենը Արևմուտքից բերված անարխիա է, ուզում են մեր բարոյականությունը ոչնչացնել»:*

Անարխիա ասելով՝ տարեց կինը նկատի ուներ այսօրվա երիտասարդության ապատագրումն ու ապատականությունը, մասնավորապես աղջիկների դեպքում, ինչը նկարագրվում էր բավականին ագրեսիվ տոնայնությամբ:

> *«Ինչ նկատի ունես՝ գենդեր ասելով: Արդյո՞ք սա նշանակում է, որ երիտասարդ աղջիկն ինչ ուզես, կանի: Ինչ ասես հագնե՞ն ու դուրս գա՞ն փողոց: Գենդերը էն Գ-աձև վարտիքնե՞րն են, որ էսօր աղջիկները հագնում են, ու բոլորը դա տեսնում են: Կներես, բայց ոնց ընդունեմ էդ գենդերը»:*
>
> (Տարեց կին, ՖԽՔ, Երևան):

Թե՛ Երևանում, թե՛ Իջևանում բոլոր քննարկումների ժամանակ նշվում էր, որ սահմանումը կա՛մ մոլորեցնում էր, կա՛մ էլ դրա մասին տեղեկատվություն չունեին: Միևնույն ժամանակ քննարկումներում հավասարությունն ու գենդերը քանիցս վատվեցին, միգուցե դա օգտակար էր, բայց «գենդեր» եզրույթը, ըստ մասնակիցների, մոլորեցնում էր:

Իջևանի ՀԿ ներկայացուցչի ներքոհիշյալ հայտարարությունը մեծապես ամբողջացնում է նմանատիպ այլ դիտարկումները:

> *«Մենք գենդերի մասին բազմաթիվ սեմինարներ ենք կազմակերպել: Երբ «գենդեր» հասկացության մասին խոսում ենք, տարբեր մարդիկ տարբեր բաներ են հասկանում. մեկը շատ տարբեր մարդ է ընկալում, մյուսը կնոջ և տղամարդու միջև սեռական հարաբերություն է ընկալում: Բայց հիմնականում ընդդիմանում են: Ցավոք, էդ «գենդեր» բառը թույլ չի տալիս՝ մարդիկ հասկանան ու գնահատեն դրա իմաստը»:*
>
> (ՀԿ ներկայացուցիչ, ՖԽՔ, Իջևան)

Երևանում երիտասարդ ակտիվիստներից մեկը, որը 2012 թվականի[14] մայիսին հավասարության ու բազմազանության ակտիվ քարոզիչների շարքում էր, ասաց, որ «գենդեր» բառը շատ մարդկանց մոտ ընդդիմություն է առաջացնում, և նրանք չունեն բավարար հետաքրքրասիրություն դրա իմաստը քննելու ու ընկալելու համար:

Գենդերային հարցերին նվիրված ֆիլմեր նկարահանող սփյուռքահայ երիտասարդ արվեստագետի կարծիքով կան պատճառներ, թե ինչու մարդիկ այս հագեցած տեղեկատվության դարում չեն որոնում պատասխաններ և միայն հիմնվում են հուզական ընկալումների վրա:

> *«Հայերը նոր գիտելիքի նկատմամբ փակ են, և, որպես կանոն, չեն ուզում սովորել...: Հայաստանում կրթությունը*

14. Քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպություններ, 2012 թվականի հունիսին նպատակ ունենալով տոնել Մշակութային բազմազանության համաշխարհային օրը, հավասարությանն ու բազմազանությանը նվիրված քայլարշավ նախաձեռնեցին, որը ազգայնական խմբերի կողմից արժանացավ դիմադրության, ու անգամ բռնության դեպքեր արձանագրվեցին: Ազգայնական խմբերը հայտարարեցին, որ նմանօրինակ քայլարշավը իրականում նույնասեռականների շքերթ էր, որն ուղղված էր Հայաստանում նույնասեռականություն քարոզելուն:

տասնամյակներ շարունակ հիմված է եղել վերարտադրելու կարողության վրա: Ոչ ոք հետաքրքրված չէ քննադատական մտածողությամբ: Ինչ սահմանում էլ մատուցեն, լինի գենդեր, թե ֆեմինիզմ, հենց այդպես էլ կյուրացնեն առանց հարց տալու և պատասխան ստանալու»:

(Ռեժիսոր, Երևան)

Թե՛ Երևանում, թե՛ Իջևանում ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները տարբեր վերաբերմունք ունեին այն մասին, թե ինչո՞ւ մարդիկ գաղափար չունեն գենդերի վերաբերյալ, և ինչո՞ւ չեն ուզում իմանալ ավելին: Եզակի դրական պատասխաններից մեկը հնչեց Իջևանում:

«Մարդիկ կան, որ նոր են ուսումնասիրում «գենդեր» հասկացությունը և շատ կարևոր է, որպեսզի հասկանան դրա սոցիալական պայմանականությունը: Եվ երբ հասկանան սա, մարդիկ կընդունեն այն և կընկալեն գենդերային հավասարության իմաստը»:

(ՀԿ ներկայացուցիչ, Իջևան)

Քաղաքացիական հասարակության մի այլ ներկայացուցիչ պատմեց, որ նախկինում անգամ գաղափար չուներ «գենդեր» հասկացության մասին:

«Անկեղծ ասած, այս սեմինարներից առաջ ես չեմ ուսումնասիրել ու չեմ հետաքրքրվել գենդերով: Ես համագործակցել եմ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» հետ, մասնակցել եմ նրանց հանդիպումներին և համաժողովներին: Հիմա այդ թեմային նվիրված գրականություն ունեմ: Կարծում եմ՝ խնդիրը բառի մեջ է. գենդերի պատճառով մարդիկ դրա մասին լսել չեն ուզում: «Գենդեր» նշանակում է սեքս, որը մտքում որոշակի պատկերներ է առաջարկում, դե սեքսը գիտեք...: Այդ նախագծում [գենդերային հավասարության մասին] դրույթ կա, որը ասում է, թե մարդը կորոշի իր գենդերը, երբ դառնա չափահաս: Դուք հասկանում եք, սա Հայաստանում անհնար բան է. այն միանգամից հիասթափեցնում է»:

(ՀԿ ղեկավար, ՖԽՔ, Երևան)

Ո՞ւր է մեկ տանում «գենդեր» եզրույթը

Խառնաշփոթ, վայրույթ, հիասթափություն, վախ. ահա այն հույզերը, որոնք համակում էին ֆոկուս խմբերում ներգրավված մարդկանց «գենդեր» եզրույթը քննարկելիս: Երիտասարդների և տարեցների հետ քննարկումներում, մասնավորապես երիտասարդ ծնողների դեպքում խոսակցությունը անսպասելի շրջադարձ էր ստանում, գենդերային խառնաշփոթից հանկարծ անցնում էր փոխկապակցված այլ հասկացություններին և փոխարինվում սոցիալական իրավիճակի, աճող աղքատության և հասարակությունում խորացող անհավասարության շուրջ վայրացած խոսակցություններին: Օրինակ՝ այն մասին, թե ինչպես են ծխախոտի գործարանից ինչ-որ մեկին հեռացրել տարիքի պատճառով, և նա հիմա աշխատանք չի կարողանում գտնել, քանի որ գործատուները գեղեցկատես երիտասարդ աղջիկներն են պահանջում, Երևանի մասնակիցներից մեկը հետևյալն ասաց. *«էս ամենը, որ մեզ հետ կատարվել է, էլ դրանից հետո ոչ մի գենդերմենդեր չենք ուզում, աղջիկ ջան: Քեզ վերցրու քո գենդերը: Այն բան չի փոխի»:*

Հույզերից գերակայողը վախն էր, քանի որ փոխկապակցված էր ինչ-որ անհայտ ու ոչ հստակ զգացման հետ. այն հայկական արժեքների հետ ոչ մի կերպ չէր կարող կապված լինել: Ի միջի այլոց, գրեթե բոլոր ֆոկուս խմբերում մասնակիցների քննարկումներում տողատակեր կային, որոնք ենթադրում էին նույնասեռականությունն ու սեռը փոխելու հետ կապված ամեն բան: Մի կողմից, մասնակիցները ցանկություն չունեին նշված թեման քննարկելու, մյուս կողմից, շատ աննկատորեն փորձում էին հղում կատարել այդ նուրբ թեմային՝ փոխկապակցելով գենդերը նույնասեռականության հետ, ավելի հաճախ, իհարկե, հարցերի տեսքով:

«Կարծում եմ՝ գենդերային հավասարությունը հիմա ավելի լայն է, քան մենք հասկանում էինք [բաներ կան, որ մենք՝ որպես հասարակության անդամ, չգիտենք]: Դա չի սահմանափակվում միայն խորհրդարանում կանանց թվաքանակի մեծացմամբ: Ամենայն հավանականությամբ այն ավելի լայն իմաստ ունի, ու մարդիկ այդ իսկ պատճառով վախենում են այդ եզրույթից: Նրանք մտածում են, որ «գենդեր» հասկացության դեպքում իրենց երեխային չեն կարող պար-

տադրել գենդերային ընտրության ժամանակ: Երեխան իր գենդերը/սեռը որոշում է չափահասության ժամանակ: Մարդիկ սրանից են վախեցած, ու ինչպես ասում եք, այդ պատճառով էլ պահպանողական ազգայնական շարժումները գլուխ են բարձրացնում: Կամ, օրինակ, հիմա շատ վիրահատություններ են իրականացվում սեռը փոխելու նպատակով: Սա էլ է, չէ՞, գենդեր»:

(Երիտասարդ ծնող, ՖԽՔ, Երևան)

«Գենդերի մասին խոսակցությունները Եվրոպայից են ներթափանցել այլ խոսակցությունների հետ միասին..., նկատի ունեմ նույնասեռականությունը, երիտասարդները մտածում են՝ կարող են իրենց սեռը փոխել, որովհետև մոդայիկ է»:

(Տարեց, ՖԽՔ, Իջևան)

Թե՛ Երևանում, թե՛ Իջևանում ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների շարքում միշտ գտնվում էին այնպիսի մարդիկ, որոնք կարծում էին՝ նմանատիպ քննարկումները պետք է իրականացվեն հատուկ կանանց կամ գենդերային հարցերով զբաղվողների հետ, չնայած ՀԿ-ների հետ քննարկումներում հիմնականում հրավիրված էին մարդու իրավունքներով, հաշմանդամությամբ ու երիտասարդներով զբաղվողները:

«Եթե սա առնչվում է կանանց, ավելի լավ կլիներ այդ դեպքում մեր փոխարեն հանդիպել կանանց ՀԿ-ների հետ»:

(ՀԿ ներկայացուցիչ, Իջևան)

Դեռևս ֆոկուս խմբային քննարկումները կազմակերպելիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից մեկը ամենացնցող հայտարարությունն արեց:

«Ինչի՞դ է պետք էսքան ՀԿ-ների մասնակցությունը քննարկումներին: Կարծում եմ՝ բոլորը նույն կարծիքն ունեն գենդերի մասին...: Կամ ավելի շուտ ոչ մի կարծիք էլ չունեն»:

(ՀԿ ներկայացուցիչ, Իջևան)

Հետաքրքրական է, որ Երևանի ու Իջևանի ՀԿ-ների հետ ֆոկուս խմբային քննարկումներում երկակի ստանդարտի զգացողություն կար. մի կողմից նշում էին, թե որքան կարևոր է գենդերի մասին գիտելիք ունենալը, այն փոխանցելը մյուս սերնդին ու դրան օրենսդրության տեսք տալը՝ գենդերային հավասարությունը իրականության վերածելով, մյուս կողմից, ՀԿ կաղապարից դուրս գալուց հետո գենդերի մասին վրույցները բաց հասարակության հարացույցից հեռացվում էին որպես առօրյայի պես մի բան՝ մասնակիցների համար ընդունելի հասկացությունից վերածվելով բացասական ու մերժվող իրողության:

Դիրքային նման գիտելիքներ (situated knowledge) մասնավորապես ի հայտ էին գալիս ՀԿ-ների, տարեցների, երիտասարդ ծնողների, ուսանողների, այլ երիտասարդների ֆոկուս խմբային քննարկումներում: Մարդիկ շատ ճարտար և համոզիչ լեզվով փոխում էին իրենց մոտեցումներն ու կարծիքները: Սա շատ ավելի տեսանելի էր ուսանողական ֆոկուս խմբային քննարկումներում, երբ մի կողմից պաշտպանում էին գենդերային հավասարությունը, մյուս կողմից, կողմ արտահայտվում կանանց ու տղամարդկանց ավանդական դերերին:

Մեջբերենք Երևանում անցկացված ֆոկուս խմբային քննարկումների մեկնարկին երիտասարդ տղա ուսանողներից մեկի ներածական խոսքը. *«Հայաստանի քրիստոնյա երկիր լինելու շնորհիվ կանայք ունեն հավասար հնարավորություններ և տղամարդկանց հավասար են...»:* Ապա հավելեց. *«Երբ ամուսնանամ, կինս չի աշխատի, որովհետև կանայք ծնվել են երեխաներին խնամելու, տղամարդիկ՝ կանանց լավ պահելու համար: Տղամարդիկ պարտավոր են այնպես ապահովել իրենց կանանց, որ վերջիններս զբաղվեն երեխաներով, տղամարդիկ լավ պայմաններ պիտի ստեղծեն նրանց ապահով հղիության համար»:*

Երևանում և Իջևանում տարեցների հետ ֆոկուս խմբային քննարկումներում պարզվեց, որ մայրաքաղաքի կանայք ավելի պահպանողական ու արմատական հայացքներ ունեն «գենդեր» հասկացության մասին, քան Տավուշի կանայք: Ավելին, եթե Տավուշում «գենդեր» հասկացությունը դիտարկվում էր հաճախ որպես կնոջ ու տղամարդու միջև առկա երևույթ, Երևանում այն ավելի շուտ սևեռված էր կանանց, նրանց դերերի ու պատասխանատվության վրա:

Երևանի ու Տավուշի ֆոկուս խմբային քննարկումներում մի այլ հետաքրքիր օրինաչափություն էր (անկախ խմբից) մայրաքաղաքի մասնակիցների շրջանում ներկայիս կնոջ դերը հասարակությունում վերասահմանելու և «Ինչպիսի՞ն է կինը», «Ինչպիսի՞ն պիտի լինի» հարցերում հակասություններ գտնելու ցանկութ-

յունը, մինչդեռ տավուշցիների համար «գենդեր» հասկացությունն առավելապես փոխկապակցված էր ընտանեկան բռնության, անհավասար վարձատրության, արտագաղթած տղամարդկանց պարագայում կնոջ կրկնապատկված բեռի հետ (մասնավորապես մարզի փոքր քաղաքներում, որտեղ աղքատությունն ավելի խորն է, և հնարավորությունները սահմանափակ են՝ քաղաքի փոքր չափերով պայմանավորված): Այս գիտելիքը ձևավորվել էր մարզային մակարդակում տեղական ու միջազգային քաղաքացիական տարբեր կառույցների իրականացրած վարգացման ծրագրերի արդյունքում:

Մեծ մասամբ այն հարցին, թե առաջին անգամ որտեղ են լսել «գենդեր» բառը, պատասխանողներն առաջին հերթին նշում էին կանգվածային լրատվական միջոցները (հեռուստատեսություն, թերթեր), ինչպես նաև սոցիալական ցանցերը (Ֆեյսբուք): Պատասխանողներից ոմանք (հիմնականում ՀԿ-ներից) նշեցին, որ «գենդեր» եզրույթին առաջին անգամ առնչվել են սեմինարի կամ կրթական միջոցառման ժամանակ: Հանրությանը կանգվածային լրատվական միջոցների ու քաղաքացիական հասարակության միջոցառումների միջոցով գիտելիքի փոխանցմանը անդրադառնալիս հիմնական հարցվողները նշեցին, որ իրականում այդ գիտելիքի փոխանցումն արժի վերանայել ու հարցականի տակ դնել. ինչ գիտելիք է փոխանցվում, ով է փոխանցում, որ գիտելիքն է ընկալվում որպես ճիշտ գիտելիք, որ գործոնների հաշվին է գենդերի մասին գիտելիքը սխալ փոխանցվում: Հարցապրույցի մասնակցիները մատնանշեցին մի շարք գործոններ, որոնք խանգարում են գիտելիքի փոխանցմանը, կամ էլ «գենդեր» հասկացության շուրջ ստեղծում են հակառակ ընկալումներ: Ըստ դաշտում աշխատող արվեստագետի՝ նման պատճառներից մեկը հենց ՀԿ-ների ու նաև պետական կառույցների շրջանում այդ գիտելիքը փոխանցելու ցանկության բացակայությունն է, ինչը հնարավոր կդարձներ կանանց և տղամարդկանց միջև հավասարության հաստատումը:

> *«Ոչ ոք հետաքրքրված չէ նորմալ կրթություն տալ ու իրականացնել, որովհետև գիտելիքը ուժ է հաղորդում: Գենդերային հավասարության գիտելիքի դեպքում ով է հետաքրքրված բնակչության 50%-ին նման ուժ հաղորդել և հասարակությունում նրանց ակտիվացնել. ենթարկվածներին ավելի հեշտ է կառավարել...»:*
>
> (Ռեժիսոր, Երևան)

Պատճառների ցանկում պատասխանողները նաև առանձնացրին իմացության ու կարողությունների պակասն այն մարդկանց շրջանում, որոնք պատասխանատու են կրթել մարդկանց, ինչպես նաև արձանագրվեց համախմբվածության, կանանց ու գենդերային հարցերով զբաղվող ՀԿ-ների շրջանում համադրված հայտարարությունների ու համաձայնության պակասը:

> *«ՀԿ-ները վախենում են պիտակավորումներից: Օրինակ, եթե ծրագրում ԼԳԲՏ կազմակերպություն կա, ինչպիսին է «Փինքը», մյուսները չեն միանում, որովհետև դրան մաս կազմել չեն ցանկանում: Հայաստանում ՀԿ-ները շատ զգուշավոր են»:*
>
> (Գենդերային ծրագրերի պատասխանատու, միջազգային կազմակերպության աշխատակից)

Նշված փաստարկը հաստատվել է նաև մի շարք այլ պատասխանողների կողմից: Գենդերային հարցերով զբաղվող և ՀԿ ոլորտում աշխատող մասնակիցները հաստատեցին, որ Հայաստանում, որպես կանոն, ՀԿ-ները հիմնականում զբաղվում են իրենց առաջնային թեմաներով և ցանկություն չունեն առնչվելու այլ հարցերի հետ:

> *«Զանգում ես համարում ունեցող մարդու իրավունքների հարցերով զբաղվող ՀԿ և հրավիրում ես կանանց հարցերին նվիրված սեմինարին: Նրանք չեն գալիս՝ ասելով, որ դա իրենց մասնագիտացմանը չի առնչվում...: Եթե ակտիվիստ ես, ապա քեզ պիտի հետաքրքրի սոցիալական խնդիրների ամբողջությունը, և հասկանաս, որ կանանց հիմնախնդիրները մարդու իրավունքների մեծ մասն են կազմում»:*
>
> (Միջազգային կազմակերպության աշխատակից)

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում կարևոր էր նաև տեսնել, թե ինչպես է «գենդեր» հասկացության մասին գիտելիքը առնչվում հարցվողի կյանքի հետ: Մեծ մասամբ գենդերը սահմանվում էր որպես մի վերացական հասկացություն, որը չուներ անձնավորված համատեքստ: Երբ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներին հարցնում էինք, թե ինչ է նշանակում «գենդեր» իրենց համար անձնապես, և ինչպես կտեղայնացնեին գենդերային հավասարության մասին իրենց փորձառությունները որպես

տղամարդ կամ կին, նրանք, որպես կանոն, խուսափում էին ներկայացնել իրենց անձնական փորձը:

Իջևանում ֆոկուս խմբային քննարկման ժամանակ երիտասարդներին հարց տրվեց, թե արդյոք գենդերային հիմնախնդրով պայմանավորված՝ իրենց հարևանությամբ որևէ խնդիր արձանագրել են, կամ արդյոք նրանք կարող են անձնական պատմություն ներկայացնել: Խումբը, որի հիմնական մասը կազմում էին աղջիկները և մի քանի տղամարդ, երկար ժամանակ լռեց: Իջևանում ֆոկուս խմբային քննարկումը կազմակերպած կինը որոշեց խախտել այդ լռությունը՝ խրախուսելով երիտասարդներին իրենց անձնական ու ընտանեկան պատմությունների փոխարեն խոսել ավելի վերացական իրողությունների մասին: Որպես կանոն՝ գենդերը ապաանձնականացված է, հետևաբար այն համարյա չի առնչվում այդ թեմայի շուրջ խոսողների իրական փորձառություններին: Ավելին՝ Հայաստանում «գենդեր» բառի տարբեր բացատրություններին կուգահեռ այն շարունակում է մնալ վերացական մի իրողություն, որը հիմնված է շատ կոշտ կարծրատիպերի վրա:

Միակ պահը, երբ մասնակցիները կարողանում էին ոչ վերացարկված ու անձնականացված խոսակցություն վարել, տարեցների ու միջին տարիքի անձանց հղումն էր սոցիալիստական անցյալին, երբ մարդիկ ապրում էին հավասար իրավունքներով ու ուրախ: Անձնական պատմությունները, սակայն, մնացել են անցյալում՝ չունենալով ոչ մի անդրադարձ ներկայի վրա:

Եզրակացություն
Ինչո՞ւ Հայաստանում չկա գենդերային խոսույթ

Մինչ փորձ էր արվում հասկանալ՝ արդյոք Հայաստանում առկա է գենդերային խոսույթը, և ինչ ենք հասկանում՝ «գենդեր» ասելով, ֆոկուս խմբային քննարկումներում ու հիմնական հարցվողների հետ զրույցների ժամանակ մի այլ հարց ծագեց, թե ինչու չկա գենդերային խոսույթ մեր երկրում: Տարբեր մասնակիցներ և հարցվողներ գենդերային խոսույթի բացակայության մի շարք հիմնավորումներ ներկայացրին, որոնցից հիմնականը ստորև բերվածն է:

✓ *Մարդկանց հկորացնելու քաղաքական կամքի պակաս:* Պատասխանողները նշում էին, որ գիտելիքը բացառիկ ուժ հաղորդող գործոն է, որը հանգեցնում է խոսույթի առաջացմանը: Այն միևնույն ժամանակ նոր գիտելիքի ծնունդ է դառնում, ինչն էլ շարունակում է շունչ և հկորություն հաղորդել հասարակությանը: Կար նաև հռետորական հարցադրում՝ ինչու պետությունը պիտի շահագրգռված լինի բնակչության կեսին (50%-ը) հկորացնելու հարցում: Հասարակության առաջխաղացում ապրած հատվածները կարող են վտանգ ներկայացնել և մարտահրավեր նետել կոռումպացված իշխանությանը, իսկ դա նրանց, բնականաբար, ձեռք չի տալիս:

✓ *Քաղաքականությունների միջև անհամաձայնություններ:* Պատասխանողներից ոմանք, մասնավորապես երիտասարդ ուսանողները, կարծում էին, որ գենդերային առողջ քննարկումների պակասը պայմանավորված էր Հայաստանում եվրոպական ու ռուսական քաղաքականությունների հակադրմամբ: Ըստ Երևանում անցկացված ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներից մեկի՝ արական սեռի երիտասարդի կարծիքով՝ «2013 թվականին «Գենդերային հավասարության մասին» օրենքի շուրջ ծավալված թեժ քննարկումները տարօրինակորեն համընկան Հայաստանի կողմից ասոցացման պայմանագրի ստորագրման փոխարեն ԵՏՄ անդամ դառնալու որոշման շրջանի հետ»: Իրականում «Գենդերային հավասարության մասին» օրենքի շուրջ թեժ քննարկումներին ու հակափաստարկներին մասնակից խմբերի շարքում նկատվեցին պրոռուսական քարոզչական խմբեր, ինչպիսին, օրինակ, «Համահայկական ծնողական կոմիտեն» է: Արդյունքում այդ օրերին, երբ Հայաստանը մերժեց ասոցացման պայմանագիրը, երկրում գենդերը որպես եվրոպական արժեք ներկայացնող հակաքարոզչական մի մեծ մեքենա էր գործում՝ փաստարկելով գենդերի վնասակարությունը հայ ընտանիքի ու ապագա սերունդների համար:

✓ *«Գենդերն» ու «ֆեմինիզմը»՝ որպես «վատ» բառեր:* Մի շարք պատճառներով հայերեն խոսակցական բառապաշարում «գենդեր» և «ֆեմինիզմ» բառերը ստացել են բացասական իմաստային նրբերանգներ: Հետևաբար 2013 թվականին «Գենդերային հավասարության մասին» օրենքի շուրջ մի շարք թեժ քննարկումների արդյունքում որոշում կայացվեց օրինագծից հանել «գենդեր» բառը: Երբ բառը հեռացվեց, հանրությունն ինչ-

որ չափով ընդունեց օրինագիծը: Հանրային խոսույթում որոշակի դիմադրություն կա «գենդեր» և «ֆեմինիզմ» բառերի նկատմամբ:

✓ *ՀԿ-ների և այլ գործող դերակատարների շրջանում կարողության պակաս:* Տեղական և միջազգային ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցներն ի հայտ բերեցին ՀԿ-ների շրջանում կարողությունների հզորացման անհրաժեշտությունը, որը թույլ կտա փոխանցել համարժեք իմաստներն ու համապատասխան գիտելիքը:

✓ *Ծրագրից ծրագիր մոտեցում:* Քննադատությունը ուղղված էր ՀԿ-ներին, որոնք ծրագրերն իրականացնում էին առանց կայուն ծրագրային միջամտությունների պլանավորման: Երևանում տեղակայված ՀԿ-ում իրականացված հարցազրույցի ընթացքում պարզվեց, որ ՀԿ-ները սովորել են տեղի համայնքի հետ շփվել ծրագրից ծրագիր տրամաբանությամբ: Ծրագրերի միջև որևէ միջամտություն չկա, բացի այդ՝ ծրագրերն իրենց գործողության ժամանակահատվածից դուրս հետևանքներ չեն գոյացնում:

✓ *Գիտելիքահեն ծրագրերի փոխարեն գործողություններով պայմանավորված տարբերակներ:* Քննադատություններից մեկն ուղղված էր տեղական և միջազգային ՀԿ-ներին, որոնք խրախուսում էին կարճաժամկետ գործողություններ երկարաժամկետ գիտելիք առաջացնող տարբերակների փոխարեն:

✓ *Եզրույթների իմաստային թարգմանության ու հայկական համատեքստին համապատասխանեցման բացակայություն:* «Գենդեր» եզրույթը փոխառվել է առանց համարժեք ենթատեքստայնացման, ինչպես նշեցին միջազգային կառույցների ներկայացուցիչներն իրենց հարցազրույցներում, դրանով էլ պայմանավորված են այդ եզրույթի շուրջ առկա թյուրընկալումները, ու այդ առումով մեծ բաց է առաջացել:

✓ *Էլիտիստ խոսույթի առկայություն:* ՀԿ-ների շրջանում առանցքային հարցազրույցների ժամանակ նշվեց, որ էլիտիստական քննարկման տարածքներ են ստեղծվել, որոնք հասանելի չեն այլ ՀԿ-ներին:

✓ *Այլընտրանքային արմատականություն:* Հարցվողներից ոմանք, հիմնականում արվեստի ոլորտի ու միջազգային կառույցների ներկայացուցիչներ, նշեցին առաջադիմական հայացքներով կանանց հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության մասին: Նրանք չեն վախենում խոսել սեռական բռնությունների, աղջիկների ապատագրման, ԼԳԲՏ իրավունքների և այլնի մասին, քանի որ, ի տարբերություն հիմնականում էլիտիստ կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ների, այլընտրանքային իշխանության կրողներ են և տարբերվում են թե՛ իրենց բառամթերքով, թե՛ դիրքորոշումներով: Այնուհանդերձ, առաջադիմական այս թևը դեռևս շարունակում է հայկական իրականությունում լուսանցքային դերակատարություն ունենալ. այլընտրանքն այնքան արմատական է հասարակության համար, որը հաճախ ընկալելի չէ:

✓ *Կեղծ ավանդապաշտություն և կեղծ արականություն:* Հարցվողների մի խմբի, մասնավորապես արվեստագետների ու ապատ հետազոտողների համար Հայաստանում պահպանողական խոսույթի հարատևության ու ըստ էության երկխոսության մերժման հիմնական գործոններից են, այսպես կոչված, կեղծ ավանդապաշտությունն ու կեղծ արականությունը, որը շատ տղամարդկանց համար ինքնաապահովման ու դիմադրության գործիք է դառնում:

✓ *Գենդերային հիմնախնդիրների անձնավորման բացարձակ բացակայություն:* Առկա է ներհայեցողության, անձնական պատմությունների, դրանց ներկայացման բացարձակ պակաս, որի պատճառով կարելի է հարցականի տակ դնել անգամ սեփական կյանքը, մարմինը, դիրքորոշումը, ինքնությունը:

✓ *Քննադատական մտածողության ու ինքնաքննադատության պակաս՝ գիտելիքի անքննելիության ու անգիր անելու մշակույթ:* Առկա է ինքնաճանաչողության ու ինքնուրույն հարցադրումների պակաս. ո՞վ եմ ես, ինչո՞ւ պիտի այստեղ կանգնած լինեմ որպես կին կամ տղամարդ, ի՞նչն է ինձ կին դարձնում, որքա՞ն եմ ես անկեղծ գենդերային հավասարության մասին խոսելիս, և որքանո՞վ եմ ես հաղթահարել կլիշե դարձած արտահայտությունները, երբ խոսում եմ այս հարցերի շուրջ:

✓ *ՀԿ ոլորտում կանգվածային ներգրավվածության պակաս:* Քաղաքացիական հասարակության շրջանում բացակայում է մասսայականությունը, մասնավորապես կանանց շրջանում նկատվում է այդտեղից դուրս եկած առաջնորդների պակաս:

✓ *Ինտելեկտուալների և արվեստի մարդկանց պակաս այս ոլորտում:* Նկատվում է գիտելիքի փոխանակման և ինտելեկտուալ շփման պակաս:

✓ *ՀԿ-ների շրջանում շփումների ու համերաշխության պակաս:* Հայաստանում գենդերային խոսույթի բացակայության բացառիկ պատճառներից մեկը համերաշխության ու ընդհանուր լեզվամթերքի պակասն է, որով տարբեր ՀԿ-ներ կկարողանային հաղորդակցվել ու համագործակցել:

Հանրության շրջանում ընկալումներն ու գիտելիքը հիմնված են «գենդեր» հասկացության հակասական իմացությունների վրա: Հանրության շրջանում այդ գիտելիքը հիմնականում ձևավորվել է վանգվածային լրատվության միջոցների ու հանրային քննարկումների միջոցով, որոնք արտադրում ու վերարտադրում են գիտելիքը, ինչպես այն կա: Գենդերի մասին գիտելիքը բաղկացած է տարբեր իմաստներից, որոնք երբեք խոսույթ չեն ձևավորում, քանի որ չկա համընդհանուր գիտելիք, տարածք և կամք:

Գենդերի շուրջ երկու՝ պահպանողական ու հավասարամետ խոսույթային տեսանկյունները, որոնք ներկայումս առկա են Հայաստանում, հիմնված չեն փաստարկված քննարկումների վրա, փոխարենը մեկը բացառում է մյուսին՝ չթողնելով քննարկման ոչ մի եզր: Ավելին՝ դրանցից յուրաքանչյուրը կապված է քաղաքացիական հասարակության տարբեր խմբերից, որոնք տարբեր դիրքորոշումներ ունեն և հասարակության հետ շփվելու տարբեր բառապաշարներ: Հիմնվելով վերոնշյալ գիտելիքի պակասի ու «գենդեր» եզրույթի տարբեր ընկալումների վրա՝ կարելի է պնդել, որ վերջիններս չմեկտեղվող ու խոսույթի չվերածվող վերացական ու ապաանձնավորված պատմույթներ են: Շատ են այն գործոնները, որոնք թույլ չեն տալիս ձևավորել «գենդեր» եզրույթի իմաստային ընդունելի համակարգեր, ինչն էլ հիմք կհանդիսանար այդ ամենի շուրջ ծավալվող առողջ խոսույթի առաջացմանը: Մինչև այդ գործոնները տարբեր դերակատարների կողմից չվերացվեն, հանրային աղմուկն ու դրանց մանիպուլատիվ գործադրումները չեն փոխարինվի կառուցողական երկխոսությամբ ու չեն հանգեցնի գենդերի մասին հանրության իմացության ընդլայնմանը:

ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՔՎՈՏԱՆԵՐԻ) ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թամարա Հովնաթանյան

Ներածություն

Ժամանակավոր հատուկ միջոցների՝ քվոտաների կիրառումն տարածված և արդյունավետ գործիք է համարվում ընտրական գործընթացներում կանանց հնարավորությունները ապահովելու և թաքնված խոչընդոտները հաղթահարելու համար: Կանանց աջակցող այդ գործիքի կիրառման անհրաժեշտությունը փաստարկված ու ամրագրված է ինչպես միջազգային մի շարք փաստաթղթերում, այնպես էլ Հայաստանում ընդունված ծրագրերում և օրենքներում: ՀՀ ընտրական օրենսգրքում քվոտավորման սկզբունքը տեղ է գտել 2000 թվականից հետո, և այդ տեսանկյունից «քվոտաներին կողմ և դեմ» հարցադրումը, ըստ էության, անցած փուլ է համարվում: Այնուամենայնիվ, հասարակական ընկալումներում և քաղաքական դաշտում նման հարցադրումը որոշակիորեն դեռևս առկա է, թեպետ այն աստիճանաբար փոխարինվում է քվոտաների չափի և արդյունավետության մասին քննարկումներով:

Տարբերակվում է համաշխարհային պրակտիկայում օգտագործվող քվոտաների երեք տեսակ.

1. **Օրենսդրորեն ամրագրված որոշակի քանակությամբ տեղեր խորհրդարանում**: Նման քվոտաների շնորհիվ Ռուանդայի խորհրդարանում կանայք կազմում են 58 %, Աֆղանստանում՝ 25 %, իսկ Իրաքում՝ 27 %:
2. **Կամավոր քվոտաներ**, որոնք սահմանվում են կուսակցությունների կողմից գենդերային հավասարակշռության պահպանման համար: Սա քվոտաների առավել տարածված տեսակն է աշխարհում: Նման նորմեր առաջին անգամ ներդրվել են 1970-ական թվականներին Արևմտյան Եվրոպայում սոցիալ-դեմոկրատական որոշ կուսակցությունների կողմից: Սկանդինավյան երկրներում, որտեղ կամավոր քվոտաներ ներդրվել են կանանց շարժման ջանքերով, արձանագրվել է Եվրոպայում կին խորհրդարանականների ամենաբարձր տոկոսը: Ընդհանուր առմամբ, կամավոր կուսակցական քվոտաներ ունեն Եվրամիության անդամ երկրների կեսից ավելին:
3. **Օրենսդրորեն ամրագրված որոշակի քանակությամբ տեղեր կուսակցությունների ընտրական ցուցակներում**: Նման քվոտաները կիրառվում են բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

Քվոտաների իրավական հիմքերը

Նորմատիվ իրավական բազան, որը դե յուրե երաշխավորում է կանանց լիարժեք մասնակցությունը Հայաստանի քաղաքական կյանքում, մասնավորապես ընտրական գործընթացներում, ներառում է.

- ✓ գենդերային հավասարության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը և դրանց շրջանակներում պետության ստանձնած պարտավորությունները,
- ✓ ՀՀ Սահմանադրությունը, «ՀՀ գենդերային քաղաքականության պետական հայեցակարգը» և ռազմավարական ծրագիրը (2011-2015 թթ.), ազգային օրենսդրությունը, այդ թվում՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը ու «Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Հայաստանի միջազգային պարտավորությունները՝ ժամանակավոր հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ

Կանանց պատշաճ մասնակցության ապահովման համար **ժամանակավոր** հատուկ միջոցների (քվոտաների) կիրառման հանձնարարականը «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (1979 թ.) մաս է կազմում[15]: Կոնվենցիայի 4-րդ հոդվածով նաև շեշտադրվում է, որ *«տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության հաստատումն արագացնելուն նպատակաուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը չի համարվում խտրականություն»*: 2009 թվականին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն՝ Հայաստանի կողմից ներկայացված 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտողություններում մտահոգություն հայտնեց, որ **ընտրական օրենսգրքով նախատեսված 15 %-անոց քվոտան կանանց համար արդյունավետ չէ առաջարկելով քննարկել այն ավելի քան 20 %-ի մակարդակի հասցնելու հնարավորությունը**[16]**:**

«Պեկինյան գործողությունների ծրագիրը» (1995), ռազմավարական նպատակներ ամրագրելով *«Կանանց մասնակցությունը դիրեկտիվ մարմինների աշխատանքում և որոշումների կայացման գործընթացում»*, նախանշեց կոնկրետ ու համակարգված միջոցառումներ՝ կանանց քաղաքական մասնակցության հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ: Թեպետ ՄԱԿ-ի սկզբունքներով գենդերային հավասարությունը կառավարման համակարգերում բնորոշվում է սեռերի ներկայացվածության 50/50 բանաձևով, պեկինյան գործողությունների ծրագրում հիշատակվեց նաև «կրիտիկական զանգված» հասկացությունը, որը բնորոշում է որոշումների ընդունման վրա կանանց ներազդելու նվազագույն հնարավորությունը և ենթադրում է կանանց ներկայացվածության առնվազն 30 % հատկապես խորհրդարանում:

Կանանց առնվազն 30 % ներկայացվածության ապահովումը այն նվազագույն շեմն է, որը հիմքեր կստեղծի մինչև 2030 թվականը 50/50 մասնակցային բանաձևի իրագործման համար: Գենդերային հավասարության այս տեսլականն ամրագրվել է «**Պեկին+20 գործընթացի»** ամփոփման կապակցությամբ 2015 թվականի մարտի 5-ին ՄԱԿ-ի անդամ պետությունների ղեկավարների անունից ընդունված քաղաքական հռչակագրում[17], հաստատվել է 2015 թվականի սեպտեմբերի 27-ին ՄԱԿ-ում տեղի ունեցած համաշխարհային առաջնորդների հանդիպմանը[18]՝ տեղ գտնելով «Կայուն զարգացման նպատակների օրա-

15. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին *«ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում, մասնավորապես ապահովել տղամարդկանց հետ կանանց հավասար պայմաններով մասնակցելու հնարավորությունը կառավարության քաղաքականության ձևավորման ու իրականացման գործընթացներում, ինչպես նաև կառավարման բոլոր մակարդակներով զբաղեցնել պետական պաշտոններ ու իրականացնել պետական բոլոր գործառույթները* (Հոդված 7):

16. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողություններ, 43-րդ նստաշրջան, 2009 թ., **CEDAW/C/ARM/CO/4/Rev.1**:

17. Քաղաքական հռչակագիր Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի 20-ամյա հոբելյանի առթիվ, Տնտեսական և սոցիալական խորհուրդ, մարտի 5, 2015:

18. Global Leaders' Meeting on Gender Equality and Women's Empowerment: A Commitment to Action, 27 September, 2015, New York, United Nations:

կարգում»[19]: Դրան նախորդող **«Հավարամյակի վարգացման ութ նպատակներ» (ՀԶՆ) (2000)** ծրագրի շրջանակում, ըստ *«Օժանդակություն գենդերային հավասարությանը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնում»* թիվ 3 նպատակի, Հայաստանի կառավարության կողմից տեղայնացված[20] թիրախային ցուցանիշներով կանանց մասնաբաժինը Աժ պատգամավորների, նախարարների, փոխնախարարների և մարզպետների ընդհանուր թվաքանակում մինչև 2015 թվականը պետք է առնվազն 25 % լիներ, սակայն ըստ «ՀԶՆ-ների առաջընթացի ազգային վեկույց. Հայաստան 2015» փաստաթղթի՝ նշված նպատակը որակվել է չիրականացված[21]:

Առանձնահատուկ տեղ է հատկացվում կանանց մասնակցությանը ընտրական գործընթացներում և հատկապես այդ մասնակցությունը ընդլայնելու մեխանիզմներին եվրոպական փաստաթղթերում, որոնց Հայաստանը միացել է որպես Եվրախորհրդի անդամ:

Եվրախորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեն դեռևս 2003 թվականին ընդունված թիվ 3 բանաձևով սահմանեց որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության շեմը՝ ոչ պակաս, քան 40%[22]: 2006 թվականին ԵԽ նախարարների՝ գենդերային հավասարության հարցերով 6-րդ համաժողովում այս շեմը մինչև 2020 թվականը ապահովել պարտավորեցնող բանաձևին կողմ է քվեարկել նաև Հայաստանը[23]:

Կանանց ու տղամարդկանց ներկայացվածության, այսպես կոչված, «օպտիմալ շեմը»՝ 40/60 համամասնությամբ, ամրագրվեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) «Ընտրական համակարգերը՝ որպես կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում բարձրացնելու գործիք» թիվ 1706 (2010)[24] բանաձևում, որով

19. Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development:

20. «Հավարամյակի վարգացման նպատակների տեղայնացումը և առաջընթացը. ազգային վեկույց», Հայաստան, 2005:

21. «ՀԶՆ-ների առաջընթացի ազգային վեկույց. Հայաստան 2015»:

22. Recommendation Rec 3 (2003) of the Committee of Ministers to member states on balanced participation of women and men in political and public decision making.

23. 6th European Ministerial Conference on Equality between Women and Men, Resolution Achieving gender equality.

24. Increasing women's representation in politics through the electoral system Resolution 1706 (2010.

Խորհրդարանական վեհաժողովը կոչ արեց ԵԽ անդամ պետություններին՝ «համամասնական ընտրական համակարգ ունեցող երկրներում քննարկել օրենսդրական քվոտաների հարցը՝ նախատեսելով ոչ միայն կին թեկնածուների բարձր տոկոս (իդեալականը՝ 40 %), այլ նաև թեկնածուների ցուցակում առաջնահերթության խստիվ պահպանում (օրինակ՝ կանանց և տղամարդկանց հաջորդականության միջոցով)»: Փաստաթղթով առաջարկվում էր նաև արդյունավետ պատժամիջոցների կիրառումը կուսակցությունների նկատմամբ (ցանկալի է ոչ թե դրամական տուգանքների ձևով, այլ թեկնածուների ցուցակների մերժմամբ):

2012 թվականին ընդունված **ԵԽԽՎ-ի թիվ 1898 (2012) բանաձևը՝ «Քաղաքական կուսակցությունները և կանանց քաղաքական ներկայացվածությունը»**[25], շեշտադրեց կուսակցությունների պատասխանատվությունը օրենսդիր մարմնում՝ ամբողջ հասարակությունում գենդերային հավասարակշռության ապահովման, կանանց ներգրավելու և նրանց քաղաքական աճին ու առաջընթացին նպաստելու նպատակով:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները քվոտաներից պետք է անցում կատարեն հավասարության սկզբունքին. այսպիսի հանձնարարականներով է հանդես եկել ԵԽԽՎ-ն 2016 թվականի ապրիլին ընդունված «Քաղաքականության մեջ կանանց ներգրավածության բարելավմանն ուղղված միջոցառումների ազդեցության գնահատականը» թիվ 2111 (2016) բանաձևում[26]: Այստեղ նշվում է, որ քաղաքականության մեջ կանանց ներգրավվածության ընդլայնմանն ուղղված միջոցառումներից առավել արդյունավետ է քվոտավորումը, հատկապես եթե օրենսդրության պահանջները չկատարելու դեպքում նախատեսվում են պատժամիջոցներ: Երկարաժամկետ առումով դրական արդյունքների ապահովման համար, սակայն, անհրաժեշտ են ուղեկցող այլ միջոցառումներ ևս[27]:

25. Resolution 1898 (2012) Political partiesand women's political representation.

26. «Քաղաքականության մեջ կանանց ներգրավածության բարելավմանն ուղղված միջոցառումների ազդեցության գնահատականը», ԵԽԽՎ-ի թիվ 2111 (2016) բանաձև:

27. Բանաձևով մասնավորապես առաջարկվում է խնդրի լուծման համար իրականացնել համընդհանուր մոտեցումներ, որտեղ ներառված կլինեն կանանց աջակցող միջոցներ, այդ թվում՝ քվոտավորում, կանանց քաղաքական գործունեությունն անձնական կյանքի հետ համատեղելու հնարավորությունների ստեղծում, քաղաքական կուսակցություններում կանանց ներկայացվածության ապահովումը խթանող ֆինանսավորում, ինչպես նաև նշված միջոցների չկիրառման դեպքում պատժամիջոցների նախատեսում:

Վերոնշյալ բանաձևի հիմք ծառայած նույնանուն զեկույցում[28] կարևորվում է ԵԽ անդամ երկրներում քվոտավորման օրենսդրական ամրագրումը: Զեկույցում նշվում է, որ վերջին տարիներին խորհրդարանական ընտրությունների համար քվոտավորում է ներդրվել Ալբանիայում, Հայաստանում, Բելգիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Պորտուգալիայում, Սլովենիայում, Իսպանիայում ու այլ երկրներում: Նշված երկրների խորհրդարաններում կանանց ներգրավվածության ցուցանիշը տատանվում է 41.1 %-ից (Իսպանիա) մինչև 10.7 % (Հայաստան):

Չնայած քաղաքական մարմիններում կանանց ներգրավվածության մեծացմանն ուղղված ջանքերին, հավասարության ու ոչ խտրականության վերաբերյալ ստանձնած օրենսդրական պարտավորություններին՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը խիստ թերի է գնահատում կանանց ներկայացվությունը ԵԽ անդամ շատ երկրների խորհրդարաններում: Թեպետ ԵԽ անդամ երկրների բնակչության կեսից ավելին կանայք են (զեկույցում ներկայացված տվյալների համաձայն՝ Եվրոպայում ապրող 826 մլն մարդկանցից 426 մլն-ը կանայք են), այդ երկրների 1/3-րդի խորհրդարաններում կանանց թիվը չի հասնում 20 %-ի: *«Նման մակարդակը խեղաթյուրում է ներկայացուցչական մարմնի բնույթը: Ժամանակն է համապատասխան քայլեր ձեռնարկելու: Անդամ պետությունները պետք է վերանայեն ընտրությունների կանոնակարգերը, պետք է որդեգրեն կանանց մասնակցությունը խթանելու վերաբերյալ արդյունավետ մեխանիզմներ, որոնք երկարաժամկետ առումով կապահովեն կայունություն ու արդյունավետություն»,*– նշվում է զեկույցում:

Քվոտավորման ներդրումը ազգային օրենսդրությունում

Կանանց քաղաքական մասնակցության ընդլայնման վերաբերյալ վերը թվարկած միջազգային փաստաթղթերով պարտավորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել դրանցում նախանշված մոտեցումների իրականացման, այդ թվում՝ գենդերային քվոտայի ներդրման ուղղությամբ:

Մասնավորապես **2010 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»** ամրագրեց օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմինների որոշումների ընդունման մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովման հիմնախնդիրը, որի շրջանակներում նախատեսվում է.

« …Հայաստանի պարտավորություններին համապատասխան՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություն մտցնել՝ սահմանելով 30 % գենդերային քվոտա՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի հանձնարարականը՝ 40 % և 60 % հարաբերակցությամբ «կուգակշռման շեմի» մասին, և միջոցներ ձեռնարկել գործադիր իշխանության բոլոր մակարդակների բարձրագույն և գլխավոր պաշտոններում կանանց ներկայացվածության փուլային ընդլայնման համար:

…Այն կուսակցությունների գործունեության խթանում, որոնց գործունեությունը հիմնվում է ներկուսակցական ժողովրդավարության հետևողական կարգացման վրա, ղեկավար մարմինները ձևավորելիս հաշվի է առնվում գենդերային գործոնը՝ նպաստելով կանանց առաջխաղացմանը ընտրական ցուցակներում գենդերային հավասարակշռված ներկայացվածություն ապահովելու միջոցով»[29]:

«ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրով» (2011–2015 թթ.) նույնպես նախատեսված է ժամանակավոր հատուկ միջոցների ընդլայնում.

«Ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30 % ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում»[30]:

Ժամանակավոր հատուկ միջոցների ներդրման օրենսդրական երաշխիքները ամրագրված են **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով (Հոդված 12).**

«…Կանանց և տղամարդկանց հավասարակշռված/հաշվեկշռված ներկայացվածության հասնելու նպատակով պետութ-

28. «Քաղաքականության մեջ կանանց ներգրավածության բարելավմանն ուղղված միջոցառումների ազդեցության գնահատականը» զեկույց:

29. «ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ» (2010):

30. «ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիր» (2011-2015 թթ.)

յունը կարող է սահմանել ընտրովի մարմիններում առավել քիչ ներկայացված սեռի թեկնածուների աջակցմանն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցներ (կետ 3):

...Ընտրություններին կուսակցությունների մասնակցությունը պետք է ապահովված լինի թեկնածուների ընտրական ցուցակներում գենդերային ներկայացվածությամբ՝ օրենքով սահմանված քվոտաներով (կետ 4)»:

Ընտրական գործընթացներում կանանց մասնակցությունը որոշակիորեն երաշխավորվում է նաև **ՀՀ ընտրական օրենսգրքով,** ընդ որում՝ հստակ ձևակերպմամբ, այն է՝ կուսակցությունների ցուցակներում թեկնածուների սեռերի որոշակի համամասնություն ամրագրելու միջոցով: Սակայն եթե կանանց ներկայացվածությունը երաշխավորող քվոտայի չափը աճել է 4 անգամ (5 %-ից 2003 թվականի, մինչև 15 %՝ 2007 թվականի, 20 %՝ 2012 թվականի ընտրություններում), ապա այդ նույն ժամանակահատվածում կանանց ներկայացվածությունը Ազգային Ժողովում աճել է ընդամենը 2 անգամ՝ 5.3 %-ից (ԱԺ երրորդ գումարում) մինչև 10 % (ԱԺ հինգերորդ գումարում):

2016 թվականի մայիսի 25-ին ընդունված ՀՀ ընտրական նոր օրենսգրքով ամրագրված են ընտրական գործընթացներում գենդերային կգայունությունն ապահովող մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են ընտրական հանձնաժողովների կազմավորմանը[31] և կուսակցությունների նախընտրական ցուցակների ձևավորմանը: Մասնավորապես թեկնածուների սեռային համամասնությունը կուսակցությունների համապետական և տարածքային ցուցակներում բարձրացվել է մինչև 30/70[32]:

Կիրառված քվոտաների արդյունավետության գնահատում

Ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի ամրագրման բոլոր գործընթացներում ակտիվ դերակատարում են ունեցել կանանց ՀԿ-ները, որոնց առաջարկները և՛ նախորդ՝ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, և՛ այժմ՝ 2016 թվականին, ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունման ժամանակ հաշվի են առնվել միայն մասնակիորեն:

Թեպետ դեռևս 2008 թվականին կանանց ՀԿ-ների առաջարկություններում[33] առկա էր կուսակցությունների ցուցակներում թեկնածուների սեռերի 30/70 համամասնության ապահովման պահանջը, ընդ որում՝ կին ու տղամարդ թեկնածուների հաջորդականությունը չպետք է անցնի երրորդ տեղից, սակայն 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրվեց ընդամենը 20/80 համամասնություն ապահովող դրույթը.

«*Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով, կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած, ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 %-ը»...*[34]:

Ինչպես ցույց տվեց 2012 թվականին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքների գենդերային վերլուծությունը, կուսակցությունների ընտրական ցուցակներում կին թեկնածուները միջինում ներգրավված են եղել 23 %-ի չափով, սակայն արդյունքում ՀՀ Ազգային Ժողովի հինգերորդ գումարման կազմում կանանց ներկայացվածությունը ընդամենը 10.7 % էր (այժմ՝ արդեն 10 %): Այս փաստն ակնհայտ է դարձնում կիրառված քվոտայի անարդյունավետությունը:

Ըստ փորձագիտական գնահատականների[35]՝ «*գենդերային քվոտան չեզոքացվեց ընտրություններից հետո ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխումների ու ինքնաբացարկների արդյունքում, որոնք շատ դեպքերում հանրության համար անհասկանալի մնացին»:*

31. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորման հարցերում կանանց ներկայացվությունն ապահովող դրույթները առկա էին նաև նախորդ ՀՀ ընտրական օրենսգրքում: Այդ դրույթների շնորհիվ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 7 անդամներից 3-ը կանայք էին, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կանանց ներկայացվածությունը կազմում էր մոտ 30.5 %:

32. ՀՀ ընտրական օրենսգիրք, ընդունվել է 2016 թվականի 25 մայիսին, Հոդվածներ 83.4; 83.10; 130:

33. Առաջարկությունները ներկայացվել էին «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» և 23 այլ կազմակերպությունների կողմից 2008 թվականին և վերահաստատվել 2010 թվականին ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու ժամանակ:

34. ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդված 108, ընդունվել է 2011 թվականին:

35. Տվյալ առաջարկն ընդունվեց միայն 2016 թվականին և ամրագրվեց ՀՀ ընտրական նոր օրենսգրքում առանձին հոդվածով:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ ընտրություններից հետո խորհրդարան անցած կուսակցությունների ցուցակներից ինքնաբացարկի դիմած թեկնածուների 25 %-ը կանայք էին: Նրանց տեղը խորհրդարանում կբաղեցրին տղամարդիկ, թեպետ կանանց ՀԿ-ները, փորձելով կանխել քվոտայի չեզոքացման նման ընթացքը, առաջարկել էին ամրագրել, որ կնոջ մանդատից հրաժարվելու դեպքում խորհրդարան պետք է անցնի ցուցակով հաջորդ կինը[36]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունը 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցում բացասական գնահատեց ինքնաբացարկների գործելաոճը նշելով, որ ***«ինքնաբացարկ հայտնած ընտրված թեկնածուների մեծ թիվը մտահոգիչ է ընտրողների ընտրությունը հարգելու տեսանկյունից»:*** Նաև քվոտայի արդյունավետության վերաբերյալ հետևյալ դիտարկումն էր արվել.

«*...Թեկնածուների առաջադրման քվոտայի արդյունավետությունը պետք է վերանայվի որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ կանանց թեկնածու լինելու իրավունքի և հնարավորության փաստացի հավասարությանը հասնելու նպատակով:*

...Պետք է խրախուսել կուսակցություններին ունենալ գենդերային քաղաքականություն և հանրորեն տրամադրել իրենց անդամների գենդերային բաշխվածության վերաբերյալ տվյալները: Կարելի է քննարկել և կուսակցություններին որպես պահանջ ներկայացնել ապահովել իրենց ղեկավար մարմիններում կանանց ներկայացվածությունը և թեկնածուներ ընտրելու ավելի թափանցիկ ու ժողովրդավարական եղանակներ ունենալ»[37]:

Քվոտայի արդյունավետության հարցում բացասական դեր խաղաց նաև ՀՀ ընտրական օրենսգրքում խտրական ձևակերպումը, այն է՝ *«2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում՝ 2-6, 2-11, 2-16, և այդպես շարունակ»*, ինչը պատճառ հանդիսացավ, որ ընտրություններին մասնակցած կուսակցությունների մեծ մասը կանանց ընդգրկեր 6-րդ տեղից սկսած, այն դեպքում, երբ ԱԺ անցնելու նվազագույն շեմը առաջին հնգյակն է: Դրա հետևանքով զգալի հետընթաց էր արձանագրվել նախորդ՝ 2007 թվականի ընտրությունների համեմատությամբ. կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկումը առաջին հնգյակում 4 անգամ ավելի քիչ էր, իսկ առաջին տասնյակում՝ ավելի քան 2 անգամ ցածր:

36. Տվյալ առաջարկն ընդունվեց միայն 2016 թվականին և ամրագրվեց ՀՀ ընտրական նոր օրենսգրքում առանձին հոդվածով:

37. «*ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական* զեկույց», 26 հունիսի, 2012:

Հայաստանում կիրառված քվոտայի ոչ բավարար արդյունավետությունն առավել նկատելի է դառնում Միջխորհրդարանական միության և «ՄԱԿ կանայք» կառույցի համատեղ «Կանայք քաղաքականության մեջ 2012» զեկույցում հիշատակվող փաստի համատեքստում: Պարզվում է, որ 59 երկրից, որտեղ 2011 թվականին ընտրություններ են անցկացվել, 17-ում գործել են գենդերային քվոտաներ: Այդ երկրներում կանայք կբաղեցրել են խորհրդարանական տեղերի 27 %-ը, քվոտաներ չկիրառող երկրների խորհրդարաններում նրանք կազմում են ընդամենը 16%[38]:

Գենդերային քվոտան ՀՀ ընտրական նոր օրենսգրքում

2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանը դարձավ խորհրդարանական հանրապետություն, ինչի հետևանքով մեծացավ խորհրդարանական այն ընտրությունների դերը, որոնք այժմ անցկացվելու են միայն համամասնական եղանակով, ընդ որում՝ փակ և բաց ցուցակներով[39]: Ընտրական նոր օրենսգրքի վերաբերյալ կանանց ՀԿ-ների առաջարկների հիմքում ընկած էին նախորդ ընտրությունների փորձը, սոցիոլոգիական հարցումների արդյունքները, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունները, ՀՀ օրենսդրության պահանջները:

ՀՀ ընտրական օրենսգրքի շուրջ կանանց ՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկները[40] հիմնված էին ներքոհիշյալ փաստարկների վրա:

38. **Michelle Bachelet**, Highlights Quotas to Accelerate Women's Political Participation.

39. Ըստ Վենետիկի հանձնաժողովի փորձագետների գնահատականների՝ փակ ցուցակների պարագայում ամեն ինչ կախված է կուսակցություններից, սակայն բաց ցուցակների ներդրումը կարող է հանգեցնել ավելի քիչ թվով կանանց ընտրության, քանի որ բաց կամ ապատ ցուցակների դեպքում ընտրողները պարտադիր չէ, որ ընտրեն երկու սեռերի թեկնածուներ, ընդհակառակը՝ բաց ցուցակները կարող են նպաստավոր լինել հայտնի թեկնածու տղամարդկանց համար, Report on the impact of electoral systems on women's representation in politics. European commission for democracy through law (venice commission), June, 2009:

40. Ազգային ժողովում առնվազն 30/70 համամասնություն ապահովելու առաջարկով են հանդես եկել չորս տարբեր կառույցներ՝ «Գենդերային թեմատիկ խումբը», որը գործում է ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և ՀՀ կառավարության ներկայացուցիչների համանախագահությամբ՝ միավորելով մոտ 60 տեղական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին և փորձագետներին, «Համալսարանական կրթությամբ ասոցիացիան» իր մոտ երեք տասնյակ մարզային մասնաճյուղերով, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան», ինչպես նաև Հանրային խորհրդի երկու հանձնաժողովները:

Ազգային ժողովում և ընդհանրապես որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության աստիճանով Հայաստանի Հանրապետությունը վգալիորեն հետ է մնում համաշխարհային ցուցանիշներից: Ըստ Միջխորհրդարանական միության վերջին տվյալների[41]՝ կանանց ներկայացվածությունը աշխարհի խորհրդարաններում միջինում 22.7 % է կազմում, ինչը նշանակում է, որ ամբողջ աշխարհում առնվազն յուրաքանչյուր 5 պատգամավորներից 1-ը կին է: Ամենաբարձր ցուցանիշը Հյուսիսային Եվրոպայի երկրներում է՝ 41.1 %, ԵԱՀԿ երկրների խորհրդարաններում կանանց ներկայացվածությունը 25.7 % է: Կանանց մասնակցության ամենացածր տոկոսն արաբական աշխարհի (18.3 %) և խաղաղօվկիանոսյան (13.5 %) երկրների խորհրդարաններում է, մինչդեռ **Հայաստանի Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը 10.7 % է, ինչը վկայում է կանանց նկատմամբ խտրական գործելակերպի մասին, նրանց քաղաքական իրավունքների ոչ լիարժեք իրացման և կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների բացարձակ անարդյունավետ օգտագործման մասին՝** հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանայք կազմում են Հայաստանի բնակչության 52 %-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների թվում՝ 60 %-ը:

Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումները[42] վկայում են, որ կուսակցությունները շատ ավելի պահպանողական են խորհրդարանում կանանց ներկայացվածության և քվոտայի նկատմամբ վերաբերմունքի առումով, քան հանրապետության քաղաքացիները, որոնք պատրաստ են տեսնել ավելի շատ կանանց խորհրդարանում, քան առաջադրում են կուսակցություններն իրենց ցուցակներում: Հարցվածների 57 %-ը դրական է վերաբերվում քաղաքական ու պետական կառավարման տարբեր օղակներում քվոտայի սահմանման գաղափարին, ընդ որում՝ գենդերային քվոտայի օպտիմալ չափը օրենսդիր մարմնում առնվազն 30-40 %-ի շրջակայքում պետք է լինի: Քվոտայի ընդլայնման անհրաժեշտությունը առավել ակնհայտ է դառնում

41. www.ipu.com

42. «Կանանց հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները»: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ, «Կովկաս» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն, Երևան, 2011: «Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության ուսումնասիրություն», Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, Երևան, 2008:

խորհրդարանում կանանց ներկայացվածության դինամիկան անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների արդյունքներով դիտարկելու արդյունքում: 1995 թվականից սկսած՝ Ազգային ժողովի առաջին գումարումից մինչև 2015 թվականը (հինգերորդ գումարում) ընկած ժամանակահատվածում, կանանց թիվը խորհրդարանում աճել է 6-10 %, այսինքն՝ ընդամենը 4 %-ով: Նման քայլերով առաջ շարժվելու դեպքում Հայաստանը չի կարողանա Ազգային ժողովում ապահովել 50/50 համամասնությունը մինչև 2030 թվականը: Ամենապարզ հաշվարկը ցույց է տալիս, որ գալիք ընտրություններում կանանց ներկայացվածության առումով կտրուկ փոփոխությունների հնարավոր կլինի հասնել միայն ոչ պակաս, քան 30 %-անոց քվոտայի ներդրմամբ և դրա արդյունավետ կիրառմամբ: Քվոտայի բարձրացումը կստիպի նաև կուսակցություններին մտահոգվել կանանց նկատմամբ կադրային քաղաքականության խնդրով և ձերբազատվել ընտրական ցուցակներում «ոչ իրական թեկնածուների» ներգրավման գործելաոճից:

Հիմնվելով այս փաստարկների վրա կանանց ՀԿ-ները առաջարկել են[43].

✓ *«Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում առաջին երկու տեղերը հատկացնել տարբեր սեռի ներկայացուցիչներին, և այնուհետև 3-րդ համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 %-ը:*

✓ *Ընտրություններին մասնակցող կուսակցության տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 %-ը:*

✓ *Կուսակցությունների ցուցակներում ավելի պակաս ներկայացված թեկնածուի ինքնաբացարկի միջոցով մանդատից հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է կբաղեցնի ցուցակում ընդգրկված ավելի պակաս ներկայացված սեռի հաջորդ թեկնածուն:*

✓ *Հանրապետության խոշոր քաղաքներում և խոշորացված համայնքների ՏԻՄ ընտրություններում[44] անցում կատարել*

43. Achieving sustainable gender equality in local and regional political life / Resolution 303 (2010) / The Congress of Local and Regional Authorities of the Council of Europe.

44.Achieving sustainable gender equality in local and regional political life / Resolution 303 (2010) / The Congress of Local and Regional Authorities of the Council of Europe.

համամասնական ընտրակարգին (օրինակ՝ Երևանում)[45]*:*

✓ *ՀՀ ընտրական օրենսգրքում վերը նշված փոփոխությունները կուգորդել կանանց քաղաքական մասնակցության ընդլայնմանն ուղղված աջակցող այլ միջոցների կիրառմամբ, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու կանանց մրցունակությունը կուսակցությունների տարածքային ցուցակներում»*:

Նշված առաջարկները ընդունվել են միայն մասամբ: Այսպես՝ 2016 թվականի մայիսին ընդունված ՀՀ ընտրական նոր օրենսգրքում[46] տեղ գտավ այն երաշխավորությունը, ըստ որի՝ «եթե մանդատից հրաժարվելու արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է, և արդյունքում ցածր է լինելու 25 %-ից, ապա մանդատը տրվում է այդ նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին»: Կարևոր է նաև, որ համամասնական համակարգով անցկացվող Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների արդյունքում ձևավորվող խմբակցության կազմում որևէ սեռի ներկայացուցիչների ներկայացվածությունը չի կարող ցածր լինել, քան 25 %-ը[47]: Ըստ էության՝ այս դրույթները երաշխավորում են, որ ընտրված մարմնում, առանց կանանց ներկայացվածության, խմբակցություններ չեն ձևավորվելու:

Բացի այդ՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքով[48] կուսակցությունների համապետական և տարածքային ցուցակներում թեկնածուների սեռերի համամասնությունը բարձրացվել է մինչև 30/70: Համապետական ցուցակներով տարբեր սեռերի թեկնածուների բաշխումը կատարվելու է յուրաքանչյուր եռյակում մեկ կին սկզբունքով՝ սկսած ցուցակի 1-ին համարից: Կուսակցությունների ցուցակներում 30/70 համամասնությունը տարածվում է նաև համամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ, այսինքն՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների վրա: Սակայն անցումային և եզրափակիչ դրույթներով[49] վերը նշված դրական փոփոխություններն ուժի մեջ են մտնելու

45. Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ հանրապետության քաղաքային համայնքների ավագանիներում կանանց ներկայացվածությունը գրեթե կիսով չափ ցածր է՝ 5,1 %, քան գյուղական համայնքների ավագանիներում: Մարզային 48 քաղաքների ավագանիներում ընդհանուր թվով միայն 30 կին է ընդգրկված: Հանրապետության 866 գյուղական համայնքներից միայն 18-ն են ղեկավարում կանայք (2 %), քաղաքային համայնքների ղեկավարների թվում կանայք երբևիցէ չեն եղել:

46. ՀՀ ընտրական օրենսգիրք, ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին:

47. Նույն տեղում, Հոդված 100.3; 141.6; 141.8:

48. ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդվածներ 83.4; 83.10; 130.2:

49. Նույն տեղում, Հոդված 144-ի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը:

միայն 2022 թվականի ընտրություններում, իսկ մինչ այդ գործելու է 25/75 համամասնություն ապահովող դրույթը:

Նշված մոտեցումը մտահոգություն է առաջացրել կանանց ՀԿ-ների շրջանում, որոնք ևս հանդես են եկել մի առաջարկով՝ կիրառել 30/70 համամասնությունը 2017 թվականի ընտրություններում[50]: Առաջարկը մերժվել է այն փաստարկմամբ, որ նպատահարմար չէ քվոտայի «թռիչքային բարձրացումը», քանի որ դա կարող է խնդիրներ առաջացնել կուսակցությունների ներսում: Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված մանդատների բաշխման եղանակը՝ համապետական (փակ) և տարածքային (բաց) ցուցակների համադրմամբ, հանգեցնելու է նրան, որ կուսակցությունների ցուցակներում ամրագրված 30/70 համամասնությունը իրականում չի պահպանվի ընտրված մարմնում: Ավելին՝ հաշվի առնելով տարածքային կամ բաց ցուցակներով կանանց ընտրվելու ցածր հնարավորությունները, ինչի մասին վկայում են փորձագետների, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի դիտարկումները[51], կանանց ներկայացվածությունը դե ֆակտո ընտրված մարմնում կարող է չգերազանցել 15 %-ը, իսկ 25/75 համամասնության դեպքում կանանց թիվը Ազգային Ժողովում կարող է 12 %-ից չբարձրանալ: Այդ տեսանկյունից հետաձգումը չի կարող արդարացված լինել, և կանանց ներկայացվածության կտրուկ աճի վերաբերյալ ակնկալիքներ առաջիկա ընտրություններում, ըստ էության, չեն կարող լինել:

Այս պահին, երբ ՀՀ ընտրական նոր օրենսգիրքն ընդունված է, առաջ է գալիս ամրագրված քվոտայի արդյունավետությունը մոտակա՝ 2017 թվականի ապրիլի խորհրդարանական ընտրություններում ապահովելու խնդիրը: Անհրաժեշտ է գիտակցել, որ **քվոտան մի գործիք է, որը լավ աշխատում է միայն այլ միջոցների հետ համակցությամբ և հասարակության**

50. Գենդերային թեմատիկ խմբի առաջարկություն՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

51. Խորհրդարանական ընտրություններում տարածքային ցուցակների կիրառման դեպքում ՀՀ ընտրական օրենսգիրքը, ըստ էության, չի երաշխավորում, որ կուսակցությունների ցուցակներում նշված համամասնությունը կպահպանվի դե ֆակտո ընտրված Ազգային Ժողովում: Այդ մասին են նշել նաև Վենետիկի հանձնաժողովի փորձագետները դեռևս մայիսի 10-ին իրենց կողմից հրապարակված դիտարկումներում (կետ 117), Armenia – preparation of the preliminary opinion on the draft electoral code: Բացի այդ «Ընտրական համակարգերի՝ քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության վերաբերյալ» զեկույցում (2009) Վենետիկի հանձնաժողովը նշել էր, որ «բաց կամ ապատ ցուցակների ներդրումը կարող է հանգեցնել ավելի քիչ թվով կանանց ընտրության» (կետ 80), Report on the impact of electoral systems on women's representation in politics. European commission for democracy through law (venice commission), June, 2009:

մեջ մի շարք այլ պայմանների առկայության պարագայում: Այդ նախապայմաններից ամենակարևորն են՝ ուժեղ կանանց շարժման առկայությունը, պետության աջակցությունը և կուսակցությունների պատասխանատվությունը: Նշված գործոններից յուրաքանչյուրի լիարժեք ազդեցության ապահովումը այսօր արդեն նպատակաուղղված ջանքեր է պահանջում:

ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ (1860-1914 ԹԹ.)[52]

Հասմիկ Խալափյան

52. Հոդվածը հայերեն թարգմանվել է անգլերենից: Մամուլից և սկզբնաղբյուրներից ներկայացված բոլոր մեջբերումները ի սկզբանե հեղինակը թարգմանել է արևմտահայերենից անգլերեն: Ցավոք, նշված բնագրերն այժմ հասանելի չեն՝ արևելահայերեն տարբերակով ներկայացնելու համար, և թարգմանիչը դրանք ներկայացրել է թարգմանաբար հոդվածի անգլերեն տարբերակից:

Ներածություն

Եվրոպացի կանանց շարժման պատմության մեջ եղել է կազմակերպված ակտիվիզմ ամուսնության ինստիտուտի բարելավման նպատակով: Ակտիվիզմի հետևանք է, երբ կանայք հաջողությամբ ճնշում են գործադրում քաղաքական մարմինների վրա՝ անձնական ու ամուսնական կարգավիճակը բարելավող օրենքները կիրառելով[53]:

Հայ կանանց շարժումը կազմակերպված ակտիվիզմի համաեվրոպական օրինաչափությանը համարժեք ամուսնության և ընտանիքի բարելավման օրինակ չի առաջարկում: Չնայած ֆեմինիստները ակտիվ պայքար էին մղում կրթության իրավունքի, վճարվող աշխատանքի և հասարակության մեջ ավելի ակտիվ դերակատարության համար, հայկական պարբերականներից պարզ է դառնում, որ կանանց իրավունքների ու ընտանիքի բարելավման փորձերը նույն ակտիվությամբ ու հաճախականությամբ քննարկման թեմա չեն եղել: Ինչո՞ւ էին կանայք լռում իրենց անձնական ու ամուսնական իրավունքների մասին: Ինչպե՞ս էին սոցիալ-քաղաքական պայմանները ազդում կանանց ընտանեկան ու ամուսնական ոլորտի ակտիվիզմի վրա, և ինչպե՞ս էին կանայք հարմարեցնում իրենց պայքարը պարտադրված պայմաններին: Նշված նյութը կփորձի պատասխանել վերոգրյալ հարցերին:

Ամուսնության շուրջ առկա մշակույթն ու գործող օրենքները, դրանք բարեփոխելու փորձերը

Ուսումնասիրության առարկա հանդիսացող պատմական շրջանում ամուսնությունը կրոնական արարողություն էր, որն իրականացվում և գրանցվում էր տեղի եկեղեցու կողմից: Պայմանավորված և պարտադրված ամուսնությունները օսմանցի հայերի շրջանում մեծ տարածում ունեին: Նշված իրողությունը

53 **M. L. Shanley**, Feminism, Marriage and the Law in Victorian England, Princeton: Princeton University Press, 1989, **C. Dyhouse**, Feminism and the Family in England, 1880-1939, London: Blackwell, 1989.

դիտարկվում էր որպես երկու ընտանիքների միջև պայմանագրային հարաբերություն, այլ ոչ թե վոյգի ամուսնություն: Ժամանակի կրոնական և աշխարհիկ հեղինակությունները, ինչպես նաև բարեփոխականները համարում էին, որ ընտանիքը քայքայվում է ամուսնություն կոչված չարիքի կողմից, և այդ չարիքի դեմ նշված հեղինակությունները թե՛ իրավական, թե՛ քննարկումների մակարդակում պայքար էին ծավալել՝ «մեր ազգը քայքայող բացիլներին» կանգնեցնելու նպատակով:

Չարիքների շարքում դիտարկվում էր նաև պայքարը երեխաների և վաղ ամուսնությունների դեմ: Տարիքով պայմանավորված՝ ամենաքննադատված ավանդույթը *բեշիքյարթմեն* (beşik kertme) էր, որը ենթադրում էր երկու ընտանիքների միջև նորածինների շուրջ ընտանեկան միության համաձայնություն, երբ երեխաները դառնային սեռահասուն: Չնայած 1811 թվականին ներդրված արգելքին՝ անգամ 1906 թվականին դեռևս արձանագրվում էին *բեշիքյարթմեի* դեպքեր[54]:

Օժիտը բարեփոխականների և տեղի իշխանության կողմից ևս չարիքների շարքում էր դասվում: Դրա կիրառությունը քաղաքից գյուղ փոխվում էր: Գյուղերում փեսացուի ընտանիքը հարսնացուի ընտանիքին վճարում էր, այսպես կոչված, գլխագինը (başlık), մինչդեռ քաղաքներում հարսնացուն պետք է վերցներ կանխիկ գումար՝ դրամօժիտ (*drahoma):* Գլխագինն ու դրամօժիտը ամուսնության մակարդակի անկման պատճառ էին դառնում, մասնավորապես սոցիալապես ավելի խոցելի ընտանիքների շրջանում[55]:

Կրոնափոխությունը, ինչպես նաև մահմեդական դատարանին ուղղված կանանց դիմումները ևս մեծապես մտահոգում էին աշխարհիկ և հոգևոր վերնախավին: Կրոնափոխ էին լինում՝ դատական հայցի շուրջ առավել ապահով և օգտակար որոշում ստանալու համար: Գրանցվում էին դեպքեր, երբ վոյգը հույն ուղղափառ դառնալուց հետո՝ դատական հայցը բավարարելուն պես, վերակրոնափոխվում էր առաքելական դավանանքին:

Բավմակնությունը նշված չարիքների մեջ վատթարագույնն էր՝ որպես ոչ քրիստոնեական արարք: Գավառներում հաճախ էին գրանցվում նման դեպքեր: Կրոնական խորհուրդը հատուկ հետ-

54. **Հ. Փափազեան,** Գիւղերու ամուսնական բարքերէն //«*Մանկումեի էֆքյար*», Կ. Պոլիս, 7 հոկտեմբեր, 1906:

55. Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1 յունիս, 1885, «Հայրենիք», Կ. Պոլիս, 20 օգոստոս, 1894, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 24 փետրուար, 1905:

ևողականությամբ էր հետամուտ լինում այդ դեպքերը կասեցնելուն, և ի համեմատ սրան՝ երբեմն աչք էր փակում այլ վանցանքների վրա, ինչպիսիք էին՝ անչափահասների կամ պարտադրված ամուսնությունը, օժիտը և այլն[56]:

Ընտանեկան և ամուսնական չարիքների կասեցման նպատակը կարծես թե հստակ էր բոլորի համար, սակայն պարզ չէր, թե ով պիտի առաջնորդեր այդ բարեփոխումները:

Ո՞ւմ բարեփոխումը

Ելնելով Օսմանյան կայսրության կառուցվածքից՝ հույն և հրեա համայնքի նման հայ համայնքը *(millet)* ևս ղեկավարում էր կրոնական առաջնորդը՝ պատրիարքը: Համայնքի կողմից ընդունելի պատրիարքի գոյությունը որոշակի վերապահումներով հնարավոր էր դարձնում հայ համայնքի շրջանակից ներս աշխարհիկ կարգի գործադրումը: Ազգային ժողովի իրավական հանձնախումբը, որի իրավասության ներքո էին գտնվում ամուսնության և ընտանեկան վեճերը, երկակի կառուցվածք ուներ. այն բաղկացած էր չորս հոգևոր և նույնքան աշխարհիկ անդամներից: Իրավական հանձնախումբը պարտավոր էր «լուծել ընտանեկան վեճերն ու քննել Բարձր Դռան կողմից փոխանցված գործերը...»[57]:

Համաձայն սահմանադրության, եթե իրավական հանձնախումբը հայցն իր «ընկալումից դուրս» էր ճանաչում, այն փոխանցվում էր կրոնական, քաղաքացիական կամ խառը խորհուրդներին: Եթե հայցը ներկայացվում էր իրավական խորհրդի դեմ, ապա այն պետք է քննվեր վերոնշյալ երեքից մեկի կողմից[58]: Հետևաբար միայն սահմանադրության ներքո ընտանեկան հայցերը արդեն կարող էին ըստ էության անցնել հայկական *միլեթի* որևէ լիապորված կառույցի ձեռքը (կրոնական, աշխարհիկ, կիսակրոնական, կիսաաշխարհիկ): Բնականաբար, հայցերը կարող էին լսվել մահմեդական դատարաններում, քանի որ քրիստոնյաները ապատ էին դրանց դիմելու հարցում: Ավելին՝ առաջին

56. **Շահէն**, Ամուսնական դրամօժիտը գաւառներուն մէջ //«Մասիս», N3756, 9 փետրուար, Կ. Պոլիս, 1885:

57. ՀՀ ազգային սահմանադրություն, Հոդված 47:

58 Նույն տեղում:

հայացքից պարզ բաժանության հայցը կարող էր դուրս գալ Օսմանյան կայսրության սահմաններից: Քանի որ օսմանյան հայերի պատրիարքը ենթարկվում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որը տեղակայված էր Ռուսահայաստանում, ցանկության բացակայության կամ պատասխանատվությունից խուսափելու դեպքում պատրիարքը դրանք կարող էր փոխանցել կաթողիկոսին:

Չնայած ազգային կառույցներն ունեին կիսակրոնական ու կիսաաշխարհիկ բնույթ, բարեփոխումները գնալով ավելի «աշխարհիկ բառապաշար» էին որդեգրում, իսկ եկեղեցին հաճախ մեղադրվում էր իր դանդաղ առաջադիմության ու տիրող հետադիմության մեջ: *Միլեթի* շրջանակներում բաժանարար գիծը գոյացել էր պարզ հարցի հենքի վրա, այն է՝ արդյո՞ք ամուսնությունը մասնավոր, թե՞ հանրային ինստիտուտ էր: Կրոնական հեղինակությունները մասնավորն ու կրոնականը հաճախ դիտարկում էին որպես հոմանիշներ՝ պնդելով, որ ամուսնությունը մասնավոր խնդիր է: Մյուս կողմից, հանրային ու աշխարհիկ եզրույթները հոմանիշներ էին աշխարհիկ հեղինակությունների համար, որոնք փորձում էին հանրային քննարկումներով ընտանիքն ու ամուսնությունը դարձնել հանրային խնդիր[59]: Աշխարհիկ առաջնորդները խրախուսում էին միասնական օրենսդրության ձևավորումը: Չնայած սահմանադրությամբ իրավական հանձնախումբը կարող էր հայցերը փոխանցել կրոնական, քաղաքացիական կամ խառը խորհուրդներին, ժամանակի ընթացքում կրոնական խորհուրդը տարբեր որոշումների միջոցով իրավական հանձնախմբի որոշումները ենթարկեց իր պարտադիր վավերացմանը, և 20-րդ դարասկզբին աշխարհիկացման փոխարեն ամուսնությունն էլ ավելի էր պայմանավորված կրոնական հեղինակությունների որոշումներով, ինչն էլ սրեց կրոնական ու աշխարհիկ-բարեփոխական ուժերի միջև հակասությունները:

Նոր ընտանիքի ու ամուսնության մշակույթի ձևավորման ընթացքը

Մինչ աշխարհիկ առաջնորդները փորձում էին Ազգային ժողովում իշխանությունն ամրապնդել ամուսնության աշխարհիկացման միջոցով, բարեփոխականներն աջակցում էին այդ գործընթացին՝ մեկնարկելով խոսույթային արշավ գեղարվեստական գրականության և պարբերականների միջոցով: Այդ արշավը միտված էր աջակցելու ընտանիքի նոր կառուցվածքին ու ամուսնության մշակույթին: Կանայք այս խոսույթի կենտրոնում էին գտնվում: Նրանք ներկայացվում էին որպես ամուսնական չարիքներից ամենատուժած կողմ, և իրենց դժբախտությունների մասին մտահոգ դիտարկումներ էին արվում:

«Դժվար է չնկատել, որ վերջերս հայ հասարակությունում աճել են սիրային ու ընտանեկան դրամաները: Եվ մասնավորապես երիտասարդ կանայք ժամանակ առ ժամանակ սեփական արյան գնով առօրյայում կողքով անցնող ու ժամանակը չունեցող, անտարբեր հասարակության աչքն են բացում իրենց թաքնված տառապանքների ու վերքերի վրա»[60]:

Մասնավորապես գյուղական համայնքներում կանայք ավելի ճնշված էին և առավել մեծ պաշտպանության կարիք ունեին: Քանի որ ապրում էին մի քանի կամ ընդլայնված ընտանիքներում, նախ ենթարկվում էին իրենց ամուսինների, իսկ նրանց մահից հետո՝ իրենց տղաների կամ էլ ամուսնու եղբայրների կամքին: Մտահոգիչ էր և ուշադրության արժանի հատկապես այն կանանց վիճակը, որոնց ամուսինները արտագաղթել էին՝ թողնելով ընտանիքն առանց աջակցության կամ որևէ տեղեկատվության: Լքված կանայք համարվում էին «ազգային վերք»: Եթե մյուս դեպքերում բաժանությունը խնդրահարույց հարց էր. այս դեպքում միանշանակ «երկընտրանք չկար և հարկավոր էր կողմ լինել բաժանությանը»[61]:

Մի կողմից բարեփոխականները կանանց դժբախտություններով էին հիմնավորում բարելավման անհրաժեշտությունը, մյուս կողմից էլ մեղադրում էին կանանց այդ բարքերի անկման մեջ: Ընդհանուր առմամբ կանանց շուրջ բերվող փաստարկներն արտացոլում էին ազգային խոսույթի հիմնական հակասությունները, որոնք կանանցից պահանջում էին միևնույն ժամանակ լինել մշակույթի պահպանողներն ու փոփոխության կրողները: Օսմանյան կայսրության սոցիալական փոփոխությունների արագությունը հայ համայնքում չէր խարխլում ավանդական ընտանեկան սովորույթներն այն արագությամբ, ինչպիսին Եվրոպայում

59. ՀՀ Ազգային ժողովի արձանագրություններ, 7-րդ գումարում, օգոստոսի 2, 1885, էջ 129:

60. **Լ. Բաշալեան**, Մեռելի մը վրայ // «Հայրենիք», N 854, 26 յունիս, Կ. Պոլիս, 1894:

61. «Ընկեցիկ անայր կին էր» // «Արեւելեան մամուլ», N 22, 15 նոյեմբեր, Զմիւռնիա, 1989, էջ 937-944:

էր: Հայ բարեփոխականները սա վերագրում էին հայ կնոջ «մաքրությանը՝ եվրոպացի քույրերի համեմատությամբ[62]:

Բարձրաշխարհիկ կանայք ավելի ցածր խավի իրենց քույրերի համար պարտավոր էին օրինակ ծառայել որպես մայր ու կին: Ստնտուներ պահելը խիստ քննադատվում էր. նշված իրողությունը համարվում էր Եվրոպայից ներթափանցած «եղկելի նորաձևություն»[63]: Եվրոպական «վնասակար» նիստուկացի կրկնօրինակումը կանանց կողմից բարեփոխականների աչքերում խորթ էր հին հայկական ավանդույթին, որը դեռևս կառչած պահում էր տեղի քայքայող վարքուբարքը: Հետևաբար գլխագինը շարունակում էր գործել, քանի որ կանայք «շատ պահանջկոտ» էին: Չնայած մտայնություն կար, որ ամուսնությունը անկում էր ապրում երիտասարդ կրթված ու արևմտաբարո տղամարդկանց պատճառով, որոնք ներմուծեցին ամուսնության բեռը, բարձրաշխարհիկ կանանց մեղադրում էին շքեղություններ սիրելու արդյունքում տղամարդկանց հետ ընտանիք կազմելուց խուսափելու մեջ[64]:

Մյուս կողմից, երբ ժամանակակից կուգընկերային ամուսնության ու հայ ընտանիքի մասին քննարկում ու քարոզ էին իրականացվում, կանանցից ակնկալվում էր հանդես գալ որպես փոփոխության կրող՝ մեղադրելով նրանց առաջխաղացումը կանխող «հետադիմության» մեջ: Միայն հին նախապաշարմունքներից, օտարոտի ավանդույթներից ազատվելու ու չափավոր նորմերի որդեգրման հաշվին էր, որ ամուսնությունը կբարելավվեր, իսկ ընտանիքը կշարունակեր հավատարիմ մնալ հայ մշակույթի էությանը: Ժամանակի գրական ստեղծագործությունները քննարկում էին ամուսնության համար կատարյալ կնոջ կերպարը: Խոսքը կրթված կնոջ մասին էր, որը պիտի ընկերային ամուսնության արդյունքում դառնար իր ամուսնու աջակիցը: Բարոյական ամուր ընտանիքը համարվում էր հասարակության առաջընթացի հենքը[65]:

62. «Ամուսնալուծութիւն» // «Մասիս», 18 յուլիս, Կ. Պոլիս, 1884:
63. «Ընտանիք», N 6, 1 դեկտեմբեր, Կ. Պոլիս, 1883:
64. «Ընտանիք», N 4, 1 նոյեմբեր, Կ. Պոլիս, 1883: Կանայք մեղադրվում էին ամուսնությունների անկման պարագայում սեփական որդիներին կցորդված լինելու ու ապագա հարսների նկատմամբ ատելություն դրսևորելու հարցերում: Տես **Կ. Ստեփանեան**, Հայրերն ինչ կընեն // «Արեւելեան մամուլ», 15 մայիս, Զմիւռնիա, 1902:
65. **Բ. Եղիազարեան**, Լուծեալ սէր, Կ. Պոլիս, 1894, **Հ. Փաշայեան**, Աղջկան մը հիշատակարանը, Կ. Պոլիս, 1895:

Կանանց պայքարի միջավայրն ու ձևը

Հայ կանանց շարժման պատմությունը չունի վկայություններ այն մասին, որ վերջիններս նպատակադրված որոշում են ունեցել միայնակ մնալու, և ժամանակի բոլոր ակտիվ կանայք ամուսնացած էին: Վճարվող աշխատանքի սահմանափակ հասանելիությունը կարող է հանդիսանալ պատճառներից մեկը: Կանանց դեպքում ամուրի մնալու տարբերակի պրակտիկորեն անհնարինության պայմաններում հայ ֆեմինիստները կանանց գիտակցաբար չամուսնանալու կոչեր չէին անում: Հակառակը, ամուսնության ինստիտուտի անկումը իրենց մտահոգության առարկաներից մեկն էր: Եթե բարեփոխականների մտահոգությունը ավգի շարունակելիությունն էր, կանայք իրենց «Արտեմիս» պարբերականում քննարկում էին հասարակության մեջ միայնակ կնոջ մշուշոտ ապագան՝ քաջ գիտակցելով կնոջ ու տղամարդու դեպքում գործող երկակի չափորոշիչները: Հետևաբար «Ամուրիները» վերնագրով հոդվածն իր առաջին նախադասության մեջ հարցեր էր առաջադրում աղջիկների ապագայի վերաբերյալ[66]:

Տարաբնույթ ճնշումներն ու միայնակ կնոջ մշուշոտ ճակատագիրը ստիպում էին հայ ֆեմինիստներին ամուսնությունը որպես ինստիտուտ քննադատելիս լինել ծայրահեղ զգուշավոր: Սա նաև տարածվում էր Օսմանյան կայսրության բոլոր կանանց վրա: Դենիս Կանդիյոտին առանձնացնում է «հստակ և նշանակալի այն պատճառները, որոնց արդյունքում օսմանյան ընտանեկան համակարգի քննադատները տղամարդիկ էին»: Իսլամադավան կանայք «ավելի երկչոտ կամ առնվազն զգուշավոր» էին ամուսնությունն ու ընտանիքը քննարկելիս, քան տղամարդիկ, որոնք օգտագործում էին կանանց չարաբախտությունը՝ արտահայտելու համար սեփական անբավարարվածությունը հայրիշխանական ընտանեկան կառուցվածքից. *«Զարմանալի չէ այնպիսի մի հասարակությունում, որտեղ կինը ավանդական ընտանիքից դուրս տեղ չունի, ընտանիքում էլ այդ դերը շատ սահմանափակ է...: Համենայն դեպս ի սկզբանե կանայք ավելի շատ բան էին կորցնում՝ գրեթե չշահելով շոշափելի ոչինչ, քան իրենց ապատագրված եղբայրները: Կանանց «պասիվ» վերաբերմունքը այս հարցի շուրջ տևեց մինչև հանրապետության հիմնումը և շարունակեց պայքարին մասնակից դարձնել առաջադեմ տղամարդկանց»*[67]:

66. «Արտեմիս», N 7-8, յուլիս-օգոստոս, Եգիպտոս, 1902:
67. **D. Kandiyoti**, "From Empire to Nation State: Transformations of the Woman Question in Turkey" in Retrieving Women's History: Changing Perceptions of the Role of Women in Politics and Society, ed. S. Jay Kleinberg. (Paris: BERG/UNESCO, 1992), pp. 226-227.

Սահմանափակ թվով պարբերականներում, որոնց խմբագիրները կանայք էին, ինչպես նաև այն պարբերականներում, որոնց խմբագիրները տղամարդիկ էին, կանանց կողմից գրված հոդվածների վերլուծության արդյունքում կարելի էր եզրակացնել, որ հայ կանայք լուռ էին ընտանիքի ու ամուսնության բարեփոխումների հարցի շուրջ: Այնուհանդերձ, ժամանակի նշանավոր ֆեմինիստների գրական ստեղծագործությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք բոլորովին էլ չէին լռում այդ հարցի շուրջ, փոխարենը իրենք ընտրել էին առավել կգուշավոր գեղարվեստական գրականության գործիքակպմը՝ քննարկելու ամուսնական ու ընտանեկան անարդարությունները: Հայ ֆեմինիստների նովելներում հերոսն ամեն դեպքում ընդվզող, ամուսնությունը մերժող և առկա հասարակական սեռային դերերն անտեսող ամուրի կին չէր: Ինչպես նաև ֆեմինիստները փորձ չէին կատարում իրենց գրականության միջոցով «սեփական տարբերվող ճանապարհը նախանշելու» այնպես, ինչպես դա անում էր Պատրիսիա Մրֆին անգլիացի նոր կնոջ օգտին գրված իր նովելներում[68]: Գեղարվեստական գործերում կանայք հաճախ կրկնում էին բարեփոխականների և տղամարդ ստեղծագործողների մտքերը, բայց իրենց գործերի առանցքում տեղադրում էին կնոջ շահն ու երջանկությունը:

Կանայք ստանձնեցին փոփոխություն կրողի դերն ու իրենց պարտքը համարեցին բարձրաձայնել դրանց մասին: Երբ 1884 թվականին Սրբուհի Տյուսաբը հրատարակեց իր երկրորդ՝ «*Սիրանույշ*» նովելը, նա արդեն ուշադրություն գրավելու մեծ համբավ ուներ իր ժամանակի համար արմատական ֆեմինիստական հայացքներով: Ի տարբերություն «Մայտայի» (1883), որտեղ հիմնականում կնոջ աշխատանքային իրավունքն է պաշտպանվում, «Սիրանույշը» քննադատում է հայ հասարակությունում առկա ամուսնական նորմերը: Քաջ գիտակցելով նովելի կապակցությամբ քննադատությունները՝ Տյուսաբն այն լույս ընծայեց, բայց ներածության մեջ հանդես եկավ արդարացմամբ. *«Հավանաբար ոմանք ինձ այս մտքերի համար լկտի կհամարեն: Բայց ոմանց համար այդ լկտիությունն ինձ համար պատասխանատվություն է...: Մեծ է իմ հավատն իմ ծրագրերի նկատմամբ, քանի որ այն հիմնված է համոզմունքների վրա: Մեծ է խիզախությունը, քանի որ այն թելադրված է պատասխանավությամբ»*[69]:

Անկախ նովելներում ամուսնության մասին առկա քննադատությունից՝ միշտ ներկա է հեղինակի դրական դիրքորոշումը ամուսնության նկատմամբ: Սիպիլի Բուբուլը կնոջ սրտում մեկ սիրո լար էր տեսնում, կնոջ մեկ կյանք՝ այն էլ ընտանիքում, մեկ էլ առաքելություն էր նկատում մոր դերում[70]: Անգամ Տյուսաբն իր արմատական հայացքներով ամուսնությունը համարում էր «հասարակության հենքը»[71] և «սուրբ պայմանագիրը»[72]:

Զապել Եսայանի Անիկը «Շնորհքով մարդիկ» ստեղծագործությունում քսան տարեկան ծնողներին իր չամուսնանալու մտադրությունը հայտնած կին է: Վերջինս, կրթությամբ պայմանավորված, իրեն թույլ չի տալիս հանդուրժել հայ հասարակության մեջ ամուսնացած կնոջ ենթակա դերը[73]: Անգամ այս ըմբոստ կերպարը, այնուամենայնիվ, ներկայացված է ծայրահեղ տխուր և չկայացած, մռայլ կյանք վարող մի մարդ, որը հենց այդ պատճառով էլ միայնակ մնալու որոշում է կայացրել: Միայն ընտանիքի կողմից որդեգրված Հակոբին մոր նման խնամելուց հետո է, որ այդ մռայլությունն ինչ-որ չափով հաղթահարվում է: Նա իր «միայնակ կնոջ ողջ սերն ու մայրական զգացմունքը» տալիս է Հակոբին և խնամում է նրան որպես մի հնարավորություն՝ ստացած կրթությունը նպատակային գործադրելու համար[74]:

Նոր կինն ու ընկերային ամուսնությունը

Կանանց գրավոր խոսքից պարզ է դառնում, որ կյանքի ընկերոջն ազատ ընտրելը ֆեմինիստների համար բարեփոխում արձանագրելու միակ ճանապարհն էր: Բռնի ամուսնությունը անընդունելի էր և հասարակության համար վնասակար, քանի որ «երբ չկա սեր, մնում է լոկ պատասխանատվությունը, և այն

68. **P. Murphy**, Time Is of the Essence. Temporality, Gender and the New Woman (Albany: State University of New York Press, 2001), p. 120.

69. **Ս. Տյուսաբ,** Սիրանույշ, Ներածություն, Երևան, 1959, էջ 172: Վեպն առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսում 1984 թվականին:
70. Նույն տեղում:
71. Նույն տեղում, էջ 263:
72. Նույն տեղում, էջ 263:
73. **Զ. Եսայան**, Շնորհքով մարդիկ, Երևան, 1959, էջ 32: Վեպն առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսում 1907 թվականին:
74. **Զ. Եսայան**, Շնորհքով մարդիկ, էջ 32-34:

ամուսնության տանիքի ներքո առկա մարմին է առանց հոգու»[75]: Ժամանակակից ընտանիքը պիտի հիմնվեր ռոմանտիկ սիրո ու ընկերային ամուսնության վրա: Ամուսնությունը պիտի երկու հոգիների միություն լիներ, փոխադարձ անձնակոհություն, որը մյուսի ուրախության, բեռը թեթևացնելու առիթն ու փոխադարձ սերը պիտի հանդիսանար[76]: Ռոմանտիկ սիրո վրա հիմնված ընկերային ամուսնությունը խոստանում էր կանանց ապատագրել ամուսնական կյանքի և գրական ստեղծագործություններում նկարագրված չարիքներից (օրինակ՝ մանկահասակ ամուսնությունները[77], սկեսուր-հարս բարդ հարաբերություններն ընդլայնված ընտանիքներում[78], օժիտը[79], դավաճանությունը[80] և այլն), քանի որ թույլ կտար նրանց տղամարդու հետ հավասար միության մեջ մտնել:

Կնոջ երջանկությունը հիմնականում ընտանիքում և տանը տեսնելով՝ այդ տներն այլևս չէին կարող բռնի ամուսնությունների վրա հիմնված ավանդական ընտանիքների խարիսխը հանդիսանալ: Ֆեմինիստ գրողները կնոջն օժտում էին ընտանիքի ինստիտուտը փոխելու կարողությամբ՝ մինչ ամուսնական հարաբերության մեջ մտնելը կնոջից ակնկալելով կատարելության հաղթահարում: Հետևաբար մինչև կին ու մայր դառնալը իրենց հերոսուհիներն ունեին այն բոլոր որակները, որոնցով նրանց օժտել էր հասարակությունը կրթության մատչելիության, վճարվող աշխատանքի, սոցիալական ու բարեգործական գործունեության անհրաժեշտության, քարոզարշավների միջոցով: Այս որակներից ամենակարևորը կրթված լինելն էր: Հետևհետե տարածվող մտայնությունն այն էր, որ գեղեցկության ու շքեղության նկատմամբ սիրո արդյունքում չէ, որ խարխլվում է ընտանիքը,

75. **Ս. Տյուսաբ,** Սիրանույշ, Ներածություն, էջ 167:
76. **Ս. Տյուսաբ,** Սիրանույշ, էջ 263:
77. Երբ Սիպիլի հերոսուհին՝ Բուբուլը, հեռանում է Կ. Պոլսից և ժամանում անատոլիական գյուղերից մեկը, գրողն ուղղակի քննադատությամբ անդրադառնում է անչափահասների ամուսնությանը: Ըստ Սիպիլի՝ Բելեջիկում 12 տարեկանում արդեն իսկ բոլոր աղջիկներն ամուսնացած էին, ու եթե նրանցից մեկը պատահաբար մահանում էր, նշանածի համար շատ դժվար էր լինում իր տարիքին հարմար նշանած գտնել: Տե՛ս **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 364:
78. **Մ. Պեյլերեան**, Սկեսուրը. գաւառական կեանքը // «Արտեմիս», մարտ, 1902, էջ 88-96, **Զ. Եսայեան**, Քողը, Կ. Պոլիս, 1925:
79. Վեպերի մեծ մասում անդրադարձ կատարվում է օժիտին, քանի որ ամուսնությունները ծնողների կողմից հավանության էին արժանանում կամ մերժվում շահադիտական ինչ-որ հիմնավորումների արդյունքում:
80. **Ս. Տյուսաբ,** Սիրանույշ, **Մ. Սվաճեան**, Բռնի ամուսնութիւն // «Հայրենիք», Կ. Պոլիս, 1894:

այլ բարձրաշխարհիկ անձանց նկատմամբ ժամանակին տարածված կարծիքի համաձայն՝ բավարար կրթությամբ կանանց պակասի հետևանքով[81]: Կանանց կրթությունն եկավ փոխարինելու օժիտին. *«Կատարյալ ընտանիք կարելի է ունենալ միայն այն դեպքում, եթե կնոջ օժիտն իր ուղեղն ու ջանասիրությունն է կամ ինչ-որ մասնագիտությունը, և վերջապես իր նրբանկատ կանացի անսպառ մտերմությունը»[82]:* Կրթությունը թույլ կտար երիտասարդ կնոջը աշխատել, հետևաբար նաև լինել ավելի ապատ ապագա ամուսնու ընտրության հարցում կամ միայնակ մնալու հեռանկարի դեպքում սեփական անձի մասին հոգ տանել:

«Ժամանակակից» ամուսնացած երիտասարդ կինը չպիտի ապրեր ընդլայնված ընտանիքում, որտեղ այլ անդամները շարունակում էին ավանդական պատկերացումներ ունենալ, քանի որ վերջիններս լավ կրթության արդյունքում բավարար հասունություն ունեին «լավ կին», «լավ մայր» լինելու համար և այլևս կարիք չունեին ավելի տարեց կանանց միջամտությանը տնային գործերում ու երեխաներին խնամելիս: Մարի Պեյլերյանի հերոսուհին՝ Ալմաստը, չի կարողանում իր ամուսնու նկատմամբ պահպանել իր հույսերը սկեսուրի վատ վերաբերմունքի ու երիտասարդ զույգի կյանքին միջամտելու արդյունքում[83]: Զապել Եսայանի Ադիլն իրեն սպասուհու դերում է զգում սկեսուրի ներկայությամբ[84]: Թե՛ Պեյլերյանը, թե՛ Եսայանը անհնարին են համարում երիտասարդ զույգի միջև սիրո առկայությունը, քանզի սկեսուրի հետ բախումները ստիպում են կանանց իրենց դժբախտության մեջ մեղադրել սեփական ամուսիններին:

Ժամանակակից կանայք՝ ավանդական ընտանիքներում

Չնայած ֆեմինիստները հաճախ քննադատում էին ընտանիքը փորձությունների ենթարկող կանանց կրթության, նվիրումի պակասի ու վատ վարքագծի համար, հերոսուհիների գովերգմամբ նրանք այդ պատասխանատվությունը դնում էին հասա-

81. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 249:
82. **Ի. Ընկսերջեան**, Պե՞տք է դրամօժիտ առնել// «Մանկումեի էֆքյար», 2 սեպտեմբեր, Կ. Պոլիս, 1906:
83. **Մ. Պեյլերեան**, Սկեսուրը. գաւառական կեանքը, «Արտեմիս», մարտ, Կահիրե, 1902, էջ 88-96:.
84. **Զ. Եսայեան**, Քողը:

ռակության ու ավանդական տներից դուրս եկած տղամարդկանց վրա, որոնք պատրաստ չէին ընկալելու կնոջը որպես ժամանակակից ընտանիքի ժամանակակից կին:

Զապել Եսայանի կարծիքով՝ ամուսնական հին արժեքներն անհամատեղելի էին արդիական ու առաջադիմական տրամադրությունների հետ: Գրողի համար անհամատեղելի էին թվում բարձրաշխարհիկ տղամարդկանց փարիզյան նորաձևությանը համահունչ հագուկապն ու ամուսնության դեպքում որպես օժիտ երկու հարյուրից հինգ հարյուր ոսկու պահանջը[85]: Նույն կերպ ֆեմինիստ հեղինակներն իրենց ստեղծագործություններում նկարագրում էին, թե ինչպես այդքան գովերգվող, կրթված կինը ժամանակի տղամարդկանց աչքերում ամուսնության համար ցանկալի կին չէր դիտարկվում: Ավելին՝ այդ ժամանակակից կինը անհանգստության ու վախի առիթ էր հանդիսանում:

Զապել Եսայանի Անիկի համար կրթությունը դժբախտության է վերածվում, երբ կրթության արդյունքում հասարակության ու ընտանիքի նկատմամբ վտանգավոր քննադատական հայացքն իրեն մենության է հանգեցնում[86]: Սիպիլի խիզախ ու տաղանդավոր Բուբուլը երիտասարդ տղամարդկանց կողմից դրվատանքի էր արժանանում, բայց նրանցից շատերը չէին հանդգնում ամուսնության առաջարկություն անել նրան: Եվրոպայում կրթված Տիգրանը, որը Բուբուլին ամուսնության առաջարկ էր արել, սրամտում էր իր ապագա կնոջ կրթվածության դժվարամարս լինելու շուրջ. *«Ահա և Պոլսի կանանցից ամենաբախտավորը...: Նա իր չքնաղ աչքերից վատ քսան հապար ոսկի ունի ու գլխի մակերի թվով երկրպագուներ, բայց այդ տղամարդկանցից ոչ մեկին էլ չի հավանում, որովհետև նա էլ արվեստի սիրահարներից մեկն է: Գիտե՞ս հորեղբայր՝ Պոլսում կրթված կին լինելը հավերժ օրիորդ մնալու երաշխիք է»*[87]:

Ժամանակակից կնոջ՝ հասարակության պատրաստ չլինելու մասին նկարագրությունները կանանց «հետվճարն» էին՝ տղամարդկանց՝ մամուլում ու գրական գործերում իրենց պարբերական քննադատություններին ու բացասական կերպարներին ի պատասխան: Օրինակ՝ Սիպիլը հայտնի գրական և քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապին մեղադրում էր իր ստեղծագործություններում կանանց բացասական լույսի ներքո պատկերելու համար: Այդ գործերում կարծես *«մտքի ու սրտի կանայք վերացել են՝ տեղը վիջելով նրանց, ովքեր ընտանիքի ու սոցիալական կյանքի փոփոխությանը հասնում են բացառապես ֆիզիկական շնորհների միջոցով...: Ուշադրություն դարձրեք: Քառասունից ավելի իր պատմվածքներում և ոչ մի միայնակ կին ճշմարտամիտ, պարկեշտ ու հավատարիմ չի մնում իր սիրուն՝ իր ողջ մտքով ու սրտով»*[88]:

85. **Զ.Եսայեան**, Սիլիհիտարի պարտէզները, էջ 482:
86. **Զ.Եսայեան**, Շնորհքով մարդիկ:
87. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 230:

88. **Սիպիլ,** Զոհրապի հերոսները, էջ 164: Դասախոսությունը հրատարակվել է 1913 թվականին:

Փոփոխության կնակենտրոն ու ներառական տեսլականներ

Ժամանակակից կնոջը նկարագրելիս ֆեմինիստական գրական ստեղծագործությունները տարբերվում էին տղամարդկանց գործերից՝ կնոջ անձնական երջանկությամբ պայմանավորելով հասարակության երջանկությունը: Ժամանակակից ակտիվ ամուսնությանը պատրաստ կամ ամուսնացած կնոջ համար կրթությունն ու սոցիալական աշխատանքը ինքնաբավության չէին կարող հանգեցնել, եթե չկար անձնական երջանկություն: Ավելին՝ կնոջ հաջողությունը հանրային կյանքում, այդ թվում՝ նաև հասարակության բարեկեցությունը, մեծապես պայմանավորված էին ամուսնական կյանքում անձնական երջանկությամբ, որովհետև «եթե երիտասարդ կնոջ սիրտը մեռած էր սիրո համար, ապա այն մեռած էր նաև աշխարհի համար»[89]:

Բուբուլի հիմնադրած երիտասարդ արվեստասեր կանանց ակումբը *«նշանակալի դեր պիտի խաղար հայ կանանց առաջխաղացման գործում, եթե իրենց ժամանակի նախապաշարումներն ու միջավայրը աղետի առիթ չհանդիսանային»*[90]:

Դժգոհ կնոջ ձախողությունները տարածվելու էին նաև սեփական ամուսնու վրա: Մաթիլդայի ամուսինը, որն իր նախընտրած կնոջ ֆինանսական անհաջողություններն օգտագործեց նրանից ամուսնության համաձայնություն կորզելու համար, Մարի Սվաճյանի գրչով խոսում է «անտանելի» կյանքի ու «լքված»՝ առանց խնամքի մնացած լինելու մասին[91]:

89. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 447:
90. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 447:
91. **Մ. Սվաճեան**, Բռնի ամուսնութիւն:

Կանանց լուռ տառապանքները կարող էին աղետալի հետևանքներ ունենալ իրենց ամուսինների համար, որոնք, իրավիճակից օգտվելով, ստիպողաբար ամուսնացել էին նրանց հետ: Զապել Եսայանի պատմվածքում տասներկու տարեկան աղջկա բռնի ամուսնությունը ընթանում է առանց բացահայտ ընդդիմության, բայց հետապնդում է ամուսնուն լուռ ատելությամբ, վայրույթով ու ցավով լի աչքերով և ամուսնուն հասցնում մահվան դուռը[92]:

Զապել Եսայանի այլ հերոսուհին՝ Արուսյակը, մեծապես տառապում է բռնի ամուսնության կապանքներում այնքան անթաքույց, որ ամուսնուն դրդում է ինքնասպանության[93]: Հետևաբար հանրային երջանկությունն ու առաջադիմությունը, ըստ ֆեմինիստ հեղինակների, մեծապես պայմանավորված էին կնոջ անձնական երջանկությամբ այնպես, ինչպես կնոջ երջանկությունը, որն առավելապես պայմանավորված էր հասարակության առաջընթացով. մի հաստատում, որը տարրալուծում էր մասնավորի ու հանրայինի, անձնականի ու քաղաքականի միջև սահմանը:

Փոփոխության համար պայքարը հայ ավանդույթների ու մշակութային ինքնության հետ հարաբերելիս

Ֆեմինիստ հեղինակները ջանում էին չհատել «հանուն ապգի ընթացող բարելավումների» և «հայկական ավանդական դերերից հրաժարվելու» միջև ընկած նուրբ սահմանը: Որքան էլ փոփոխություն քարոզեին՝ ի հեճուկս անասելի տառապանքներին, առաքինի երիտասարդ կինը, միևնույն է, պիտի հեզ ու հնազանդ հաղթահարեր բոլոր դժվարությունները: Հետևաբար, որքան էլ դեմ էին բռնի ամուսնությանը, ֆեմինիստ գրողների հերոսուհիները հնազանդվում էին իրենց հայրերի կամքին ու նվիրաբերում սեփական երջանկությունը: Ֆեմինիստ գրողների ստեղծագործություններում ռոմանտիկ սերը ներկայանում է որպես ծնողական սիրո մրցակիցը: Սիպիլի Բուբուլը Տիգրանին չի մերժում, որպեսզի չտխրեցնի իր հորը և երկու սիրելիների միջև ընտրելիս անասելի տառապանքների է ենթարկվում. *«Գիշերուկօր իր սրտում մրցում էին անսահման երախտագիտությունն ու ջերմությունը հոր ու կրքոտ սերը Գառնիկի նկատմամբ, և երկուսի հանդեպ զգացմունքներից և ոչ մեկը չէր նահանջում»*[94]:

Բուբուլի կողմից հոր կամքին հակառակվելու անհնարինությունը նկարագրելու համար Սիպիլը գրում է. *«Ո՞վ կարող է ալեհեր մարդու արցունքն առանց հոգեկան տանջանքների երևակայել: Ո՞վ չի զոհաբերի իր երջանկությունը հանուն ազնվաբարո մարդու [հոր] խնայված հոգցի»*[95]:

Սրբուհի Տյուսաբը գովերգում է իր հերոսուհուն՝ ծնողական սերը անձնական երջանկությունից վեր դասելու համար՝ Սիրանույշին համարելով «սիրո մարտիրոս՝ զարդարված ծնողական սիրո ծաղիկներով»[96]: Ավելին՝ հասարակության ավանդույթներն ու սովորույթները քննելիս հեղինակը փորձում է դրական լույսի ներքո հրամցնել Սիրանույշի հորն ու շահել ընթերցողի համակրանքը: Իր համար յուրաքանչյուր անձ «ունի սեփական կարծիքը՝ պայմանավորված սեփական կրթությամբ, միջավայրով և անձնական փորձառությամբ»: Կա հստակ տարբերություն մշակույթով պայմանավորված չարագործության ու միտումնավոր չարիքի միջև: Առաջինը «ակամա վնաս» է, երկրորդը՝ կամավոր: Սիրանույշի հայրը ակամա վնաս է հասցնում դստերը. *«Նա ինձ կյանք տված անձն է, և ես պարտավոր եմ առհավետ հարգել նրան»*[97]:

Մարի Սվաճյանի ըմբոստ Մաթիլդան չի կարողանում մերժել հոր խնդրանքը, որը հոգեբանական ճնշումների է ենթարկում սեփական դստերը՝ նրան ստիպելով ամուսնանալ տարիքով ավելի մեծ տղամարդու հետ: Մաթիլդան տեղի է տալիս տարեց հոր հորդորներին՝ զոհաբերելով սեփական երջանկությունը հանուն ընտանիքի նյութական բարօրության: *«Նա զոհաբերեց իր սերը հանուն ծնողների»*,- գրում է Սվաճյանը Մաթիլդայի որոշմանն անդրադառնալիս[98]:

Հերոսուհիների նման կերպավորումները վստահաբար ֆեմինիստներին հնարավորություն էին ընձեռում առանց հայ մշակույթից հեռանալու խոսելու ամուսնական չարիքների մասին: Ֆեմինիստները ստեղծեցին ժամանակային (չնայած դիախրոնիկ)

92. **Զ. Եսայեան**, Աչքերը // «Արեւելեան մամուլ», N 50, Զմիւռնիա, 1904:
93. **Զ.Եսայեան**, Տառապանքի ժամերը:
94. **Սիպիլ**, Աղջկան մը սիրտը, էջ 295-296:
95. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 225:
96. **Ս. Տյուսաբ**, Սիրանույշ, էջ 225:
97. Նույն տեղում:
98. **Մ. Սվաճեան**, Բռնի ամուսնութիւն:

և տարածական (աշխարհագրական կուգահեռների միջոցով) երևակայություն, որը քննադատությունը հնարավոր դարձրեց առանց արմատականի կամ անբարոյականի պիտակին արժանանալու վտանգի: Ժամանակային ու տարածական երևակայության մեջ հայ կինը հանդես է գալիս որպես մաքրամաքուր, պարկեշտ ու բարոյական կերպար՝ անդրադարձնելով նաև ֆեմինիստների ավնիվ հավատքն այն մասին, որ հայ կինն ու մշակույթը գերադասելի են: Ավանդույթների պահպանումը շատ նուրբ վոհողություն էր, որը հայ կինը պիտի աներ՝ ապացուցելու համար վերոնկարագրյալը:

Բուբուլի ռոմանտիկ ու ծնողական սերերի միջև ընտրության տառապանքները նկարագրելիս Սիպիլը ստեղծում է կատարյալ հայ կնոջ կերպարը. *«Նոր դպրոցին հարող վիպասանը հավանաբար կծիծաղեր այս տողերի վրա, իսկ ֆրանսուհին Բուբուլին ապուշ կհամարեր իր մտատանջությունների համար: Մինչդեռ լավ կրթված երիտասարդ հայ կինը, որոնց շարքում օրիորդ Գեղամոֆը, օրինակելի է՝ անկախ բարձրակարգ գիտակցությունից ու ազատ մտածողությունից, կանսար սեփական խղճին: Եթե անփորձության արդյունքում սխալ գործած լինելու դժբախտությունն ունենար, ապա ստիպված պիտի լիներ վճարել սեփական կյանքով»*[99]:

Եզրակացություն

Ընտանիքում ու ամուսնության մեջ սեփական դիրքը բարելավելուն ուղղված օսմանցի հայ կանանց շարժման շրջանակը վերլուծելու համար հարկ է քաջատեղյակ լինել ժամանակի իրավական ու քաղաքական համատեքստին, որում այդ կանայք գործում էին: Ամուսնության և այն բարեփոխելու, ինչպես նաև ընտանիքի թեման մեծ հաշվով շատ նուրբ միջավայրում էին ընթանում՝ թե՛ *միլեթում* հոգևորականների ու աշխարհիկ անձանց միջև առկա հակասությունների, թե՛ Օսմանյան կայսրության ու հայկական *միլեթի* միջև առկա ճնշումների պայմաններում: Կանայք չէին մասնակցում այս հարցերի շուրջ հանրային քննարկումներին՝ դրա փոխարեն բարձրաձայնելով ամուսնության մեջ ու ընտանիքում գենդերային անհավասարության շուրջ իրենց

99. **Սիպիլ,** Աղջկան մը սիրտը, էջ 297-298:

մտահոգությունները մտացածին հերոսների շուրթերով, որոնց ստեղծել էին սեփական գրական ստեղծագործություններում:

ԿԻՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԿՐԿԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐ ԴԻՐՔՈ՞ՒՄ, ԹԷ՞ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Նարինե Խաչատրյան

Ներածություն

Կրթության ոլորտում, մասնավորապես բարձրագույն կրթության պարագայում, գենդերային հավասարության հարցերը ավելի քիչ ուշադրության են արժանանում, քան, ենթադրենք, քաղաքականության կամ աշխատաշուկայի մրցակցային ոլորտների վերլուծություններում: Անշուշտ, այդ ոլորտների մրցակցության պայմաններում գենդերային անհավասարությունը ավելի ցայտուն է դրսևորվում, սակայն, եթե վերլուծենք պատճառները, ապա կհասկանանք, որ դրանցից շատերը առնչվում են կրթության և սոցիալականացման հարցերին: Մասնագիտական կրթությունից բացի՝ բուհական միջավայրը անձի սոցիալականացման և մասնագիտական նույնականացման ձևավորման աղբյուր է: Գենդերային հավասարությանն ուղղված պրակտիկաները բուհերում այս առումով կարող են նպաստել կարծրատիպ դարձած ընկալումների, վարքաձևերի հաղթահարմանը և վարքային նոր մոդելների ձևավորմանը:

Սույն հոդվածում կքննարկվեն բարձրագույն կրթության ոլորտում գենդերային հավասարությանը վերաբերող հարցերը հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի տեսանկյունից, կներկայացվի վերոնշյալ խնդրի վիճակը եվրոպական և հետխորհրդային երկրներում, մասնավորապես Հայաստանում: Վերլուծության երկրորդ հատվածում կանդրադառնանք այն գործոններին, որոնք խոչընդոտում են կնոջ առաջխաղացմանը բուհական համակարգում՝ հիմնվելով գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող կանանց և կին ասպիրանտների հետ անցկացրած հարցազրույցների և ֆոկուս խմբերի արդյունքների վրա:

Գենդերային հավասարության պատկերը ակադեմիական միջավայրում

Գենդերային անհավասարության դրսևորումները բարձրագույն կրթության ոլորտում դիտարկվում են հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի երևույթների միջոցով[100]: Հորիզո-

100. Gender Differences in Educational Outcomes: Study on the Measures Taken and the Current Situation in Europe. Education, Audiovisual and Culture Executive Agency (P9 Eurydice), 2010 (Chapter 8*: Gender Equality Policies in Higher Education*, pp. 97-108).

նական սեգրեգացիան դրսևորվում է մասնագիտությունների և գիտության ոլորտների գենդերային տարբերակման մեջ, ինչի հետևանքով որոշ ոլորտներ գերհագեցված են դառնում կանանցով, իսկ մյուսները՝ տղամարդկանցով: Հորիզոնական սեգրեգացիան պայմանավորված է վաղ տարիքում սոցիալականացման առանձնահատկություններով, որտեղ մեծ ազդեցություն ունեն ընտանիքի ու կրթության ինստիտուտները: Ուղղահայաց սեգրեգացիան դրսևորվում է նրանում, որ ակադեմիական կարիերայի յուրաքանչյուր նոր աստիճանում կանանց և տղամարդկանց համար առաջ են գալիս անհավասար հնարավորություններ, ինչի հետևանքով ավելի բարձր օղակներում կանանց թիվն աստիճանաբար նվազում է: Ուղղահայաց սեգրեգացիայի պատճառներն ավելի դժվար է բացահայտել: Վերջինս հիմնականում բացատրվում է գոյություն ունեցող «ապակե առաստաղ» երևույթով՝ անտեսանելի ինստիտուցիոնալ և սոցիալ-մշակութային այն խոչընդոտների առկայությամբ, որոնք թույլ չեն տալիս կնոջ մասնագիտական առաջընթացը որոշակի աստիճանից հետո:

Ուղղահայաց սեգրեգացիան առավել ցայտուն երևում է համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններում: Օրինակ՝ 2007 թվականի տվյալներով Եվրամիության 27 երկրներում դասախոսական կազմի ավելի բարձր պաշտոններում կանանց թիվը կտրուկ նվազում է (միջինում կանանց 44 %-ը վբաղեցրել է կրտսեր, 36 %-ը՝ միջին կարգի, միայն 19 %-ը՝ ավագ դասախոսի պաշտոններ)[101]: Պրոֆեսորի պաշտոնում կանանց թիվը կտրուկ նվազում է: Այս պատկերը հանգեցնում է նրան, որ գիտության ոլորտում որոշում կայացնող խորհուրդներում կանանց թիվը կրկին նվազում է: Օրինակ՝ 2004 թվականի տվյալներով Եվրամիության երկրների գիտական խորհուրդներում կանանց թիվը տատանվում է 7-20 %՝ բացառությամբ Նորվեգիայի, Ֆինլանդիայի և Շվեդիայի, որտեղ կանանց թիվը կազմում է 40 %-ից ավելի[102]:

Գիտության ոլորտում գենդերային անհավասարակշռությանն ուղղված մետավերլուծությունը ցույց է տալիս, որ Եվրամիության 27 երկրներում կանայք փոքրաթիվ են: Սակայն նրանց թիվը սկսում է աճել ավելի արագ՝ ի տարբերություն տղամարդկանց թվի. միջինում դոկտորի կրթական աստիճանի կին շրջանավարտների թիվը 2002-2006 թվականներին տարեկան աճել է 6.8 %՝ ի տարբերություն տղամարդկանց 3.2 % աճի[103]:

101. Նույն տեղում, էջ 104:
102. Mapping the Maze: Getting more women to the top in research. Luxembourg: Office for Official Publications of the European Communities, 2008, p. 20.

Նմանատիպ պատկեր է նկատվում նաև Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների դեպքում. կանանց թիվը բարձրագույն կրթություն ստացողների և ասպիրանտուրայի ուսանողների շրջանում աճում է՝ 90-ական թվականներից սկսած: Օրինակ՝ Արևելյան Եվրոպայի երկրներում գիտության ֆինանսավորման կտրուկ նվազումը (բացառությամբ Չեխիայի և Սլովենիայի) ազդեցություն ունեցավ գիտական հաստատություններում գենդերային հավասարակշռության (բալանսի) վրա[104]: Այն, որ այդ երկրներում կանանց թիվը մեծացել է բարձրագույն կրթության ոլորտում, պայմանավորված էր նրանով, որ ակադեմիան կորցրել էր իր հեղինակությունը թափ առնող մասնավոր սեկտորի վարգացման պայմաններում: Նման դեպքերում շատ գիտնականներ, իսկ դրանց թվում՝ տղամարդիկ ավելի շատ, գերադասել են թողնել ակադեմիան: Տարբեր երկրների համեմատական մետավերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց թիվը մեծ է այն երկրներում և տնտեսության այն սեկտորներում, որտեղ գիտության ֆինանսավորումը քիչ է[105]:

Կանանց թվի մեծացման միտումները բարձրագույն կրթության և գիտության մեջ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ սերնդափոխության արդյունքում տարիներ անց կարելի էր ակնկալել կանանց և տղամարդկանց թվի հավասարակշռություն: Սակայն անգամ այն ոլորտներում, որտեղ կանանց թիվը գերակշռում է, գիտական բարձր պաշտոններում և կառավարման բարձր օղակներում տղամարդկանց թիվը կրկին անհամեմատ ավել է, հատկապես հետխորհրդային երկրներում: Այս դեպքում միայն սերնդափոխության ճանապարհով դժվար է ապահովել գենդերային հավասարակշռություն ակադեմիական գործունեության բոլոր օղակներում և հաղթահարել ուղղահայաց սեգրեգացիան, եթե չիրականացվեն համապատասխան գենդերայնորեն զգայուն ծրագրեր:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում կանանց և տղամարդկանց թվաքանակի դինամիկան նման է բավմաթիվ հետխորհրդային երկրների պատկերին, սակայն պարբերական

103. Meta-analysis of gender and science research. Synthesis report. Luxembourg: Publications Office of the European Union, 2012. pp. 44-45.
104. Նույն տեղում:
105. Նույն տեղում:

և համակողմանի վերլուծություններն այս ուղղությամբ շատ չեն: Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (ԿՆԽՎԿ/CEDAW) դրույթների իրականացման վերաբերյալ ՀՀ պարբերական[106] և այլընտրանքային վեկույցների[107] հիման վրա կարելի է դուրս բերել որոշակի պատկեր բարձրագույն կրթության և գիտության ոլորտի գենդերային հավասարակշռության վերաբերյալ հետխորհրդային ժամանակահատվածում: Սակայն կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ՀՀ համատեղ 3-րդ և 4-րդ պարբերական վեկույցի, մասնավորապես բարձրագույն կրթության վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում նշում է, որ կանայք շարունակում են կենտրոնանալ ավանդաբար կանացի համարվող առարկաների շուրջ, բուհերում կանանց թվաքանակը դեռևս բավարար չէ ավագ դասախոսի, պրոֆեսորի, հետազոտողի պաշտոններում, ինչպես նաև կրթության ոլորտի որոշում կայացնող մարմիններում[108]:

ՀՀ կառավարությունը վավերացրել և ընդունել է կանանց իրավունքների պաշտպանության և կանանց ու տղամարդկանց համար հավասար հնարավորություններ ապահովող միջազգային մի շարք գործիքներ: 2003 թվականին մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը»[109]:

2010 թվականին ՀՀ կառավարության նիստի որոշմամբ ընդունվել է «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»[110], որով սահմանվում են նաև գենդերային քաղաքականության հիմնական նպատակներն ու խնդիրները բարձրագույն կրթության ոլորտում: Սակայն միևնույն ժամանակ կրթության և գիտության ոլորտը կարգավորող ՀՀ պետական փաստաթղթերում չեն արտացոլվում վերոնշյալ հայեցակարգի դրույթները: Կրթության և գիտության ոլորտի ներկա ռազմավարական ծրագրերը առայժմ անտեսում են գենդերային հավասարությանն առնչվող

106. CEDAW. Second periodic reports of States parties, Armenia, 1999 (Article 10).

107. Implementation of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women in the Republic of Armenia in 2002-2007, Alternative Report, Armenian Association of Women with University Education, 2007.

108. Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women Forty-third session, 19 January-6 February, 2009 (p.7.

109. http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38293

110. http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender- hayecakarg.pdf

խնդիրները: Հասկանալի է դառնում նաև այն, որ կրթության և գիտության ոլորտի պետական ծրագրերի հաշվետվությունների մեջ ևս անդրադարձ չի արվում վիճակագրական տվյալների վերլուծությանը գենդերային հավասարակշռության տեսանկյունից: Բուհերի գործունեությունը կարգավորող փաստաթղթերում չկան առանձին դրույթներ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների վերաբերյալ: Կրթության և գիտության ոլորտում կանանց և տղամարդկանց համամասնության մասին պատկերացում կազմելու համար որպես հիմնական աղբյուր ծառայում են միայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալները:

2014 թվականին *«Աջակցությո՞ւն, թե՞ կանխում. ՀՀ բարձրագույն կրթական համակարգում կանանց ակադեմիական կարիերայի կառուցման սոցիալ-մշակութային գործոնները»* ուսումնասիրության[111] շրջանակներում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա իրականացվել է վերլուծություն՝ դուրս բերելու բարձրագույն կրթական հաստատություններում գենդերային անհավասարության պատկերը հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի տեսանկյունից: Վերլուծության համար դիտարկվել են ՀՀ պետական և ոչ պետական բուհերի վերջին հինգ՝ 2009/2010-2013/2014 ուսումնական տարիների տվյալները:

Ըստ ստացված արդյունքների՝ որոշ մասնագիտություններում տեսանելի է գենդերային բաշխվածության հստակ պատկեր, մասնավորապես երեք կրթական աստիճանների շրջանավարտների շարքում կանայք գերակշռում են կրթություն և մանկավարժություն, հումանիտար գիտությունների, կենսաբանություն/քիմիա, իսկ տղամարդիկ՝ տեխնիկական գիտությունների մասնագիտություններում: Բոլոր մասնագիտություններով ասպիրանտուրան ավարտած կանանց թիվը 2009-2013 թվականներին տատանվում է 17-46 %՝ հինգ տարիների կտրվածքով կազմելով միջինում մոտ 35 %: Միայն որոշ մասնագիտությունների գծով կանանց և տղամարդկանց թիվը գրեթե հավասարվում է՝ կրթություն և մանկավարժություն, հումանիտար գիտություններ, կենսաբանություն/քիմիա և ճարտարապետություն/ շինարարություն: Մյուս մասնագիտությունների գծով նկատելի է գենդերային

111. **Ուսումնասիրությունն իրականացվել է ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի աջակցությամբ:**

անհավասարակշռություն: Ասպիրանտուրան ավարտած տղամարդկանց թիվը սկսում է գերակշռել անգամ բժշկական (միջինում 64 %), ֆիզիկամաթեմատիկական (77 %) և սոցիալական գիտությունների գծով (64 %)՝ չնայած այն փաստին, որ այդ մասնագիտություններով բակալավրիատն ավարտած կանանց թիվը հավասար է, իսկ մագիստրատուրան ավարտած կանայք թվաքանակով գերակշռում են տղամարդկանց:

ՀՀ բուհերի բարձրագույն կրթության եռաստիճան համակարգում բոլոր բնագավառներում կանանց թվաքանակը ավելանում է բակալավրիատից դեպի մագիստրատուրա, իսկ տղամարդկանց թվաքանակը ավելանում է մագիստրատուրայից դեպի ասպիրանտուրա: Այս դուրս բերված օրինաչափությունը կարելի է բացատրել, մի կողմից, ավգային մտածելակերպին (մենտալիտետին) բնորոշ բարձրագույն կրթություն ունենալու կարևորության փաստով՝ անկախ սեռից (բակալավրիատի դիպլոմը ընկալվում է ոչ լիարժեք բարձրագույն կրթություն, այդ իսկ պատճառով ցանկությունը մեծ է ավարտել նաև մագիստրատուրան), մյուս կողմից՝ վինվորական ծառայությունից տարկետման իրավունքով (2010/2011 ուսումնական տարուց տարկետման իրավունքը չի գործում մագիստրատուրայում վճարովի հիմունքներով սովորելու դեպքում, իսկ ասպիրանտուրայի համար շարունակում է գործել պետական պատվերի դեպքում):

Բուհերի պրոֆեսորադասախոսական կազմում 2009-2013 թվականներին թեկնածուի գիտական աստիճան ունեցող կանանց թվաքանակը գերակշռում է կենսաբանություն/քիմիա (միջինում 70 %), կրթություն, մանկավարժություն ոլորտներում (63 %) և որոշ չափով հումանիտար (58 %) ու բժշկական (59 %) գիտություններում: Թեկնածուի գիտական աստիճան ունեցող տղամարդկանց թվաքանակը գերակշռում է ֆիզիկամաթեմատիկական (միջինում 81 %), տեխնիկական (79 %), երկրի մասին գիտություններում (78 %), ճարտարապետություն/շինարարություն ոլորտներում (65 %), մասնակիորեն նաև սոցիալական (58 %) և գյուղատնտեսական (59 %) գիտություններում:

Վերոնշյալ պատկերը տարբերվում է գիտությունների դոկտորի աստիճանի դեպքում: Գիտությունների դոկտորի աստիճան ունեցող տղամարդկանց թվաքանակը գերակշռում է կանանց թվաքանակին բոլոր գիտությունների պարագայում, անգամ այն գիտությունների դեպքում, որտեղ կանայք մեծ թիվ են կազմում

դասախոսական կազմում և թեկնածուի աստիճանում: Գենդերային նույն անհավասարակշռության նմանօրինակ պատկեր ենք տեսնում նաև գիտական կոչումների դեպքում, քանի որ ՀՀ ԲՈՀ-ի աստիճանաշնորհման կանոնակարգով գիտությունների թեկնածու և դոկտոր աստիճան ունեցող դասախոսները որոշակի ժամանակահատվածում գիտամանկավարժական համապատասխան աշխատանք կատարելուց հետո միայն կարող են դիմել՝ դոցենտի և պրոֆեսորի գիտական համապատասխան կոչում ստանալու համար:

Կանայք մեծ թիվ են կազմում գիտամանկավարժական կազմի ավելի ցածր՝ դասախոսի, ասիստենտի պաշտոններում: Ավագ դասախոսի պաշտոնում կանանց և տղամարդկանց թվաքանակը հավասար է: Գենդերային հավասարակշռությունը համեմատաբար պահպանվում է ամբիոնի կազմում դոցենտի պաշտոնում, իսկ արդեն ավելի բարձր՝ ամբիոնի կազմում պրոֆեսորի, ամբիոնի վարիչի, դեկանի, պրոռեկտորի/ռեկտորի պաշտոններում կտրուկ նվազում է կանանց թվաքանակը: Թվարկված ակադեմիական պաշտոններում կանանց թվաքանակը 5 տարվա կտրվածքով միջինում կազմում է մոտ 25 %:

Բուհերի գիտական կազմում ևս ավելի բարձր պաշտոններում գերակշռում են տղամարդիկ, իսկ ավելի ցածր պաշտոններում՝ կանայք: Եթե գիտաշխատողի պաշտոնում նկատվում է կանանց և տղամարդկանց թվի հավասարակշռություն, ապա արդեն ավագ գիտաշխատողի պաշտոնից կանանց թիվը զգալիորեն վիջում է տղամարդկանց թվին (36 % և 64 %): Ավագ, առաջատար և գլխավոր գիտաշխատողի պաշտոններում 5 տարվա կտրվածքով կանանց թվաքանակը միջինում կազմում է 29 %:

Բուհերի կառավարման և գիտական խորհուրդներում կանանց թվաքանակը նվազագույնն է: Քանի որ բուհերի կառավարման նշված մարմիններում կազմերը ձևավորվում են ի պաշտոնե, ապա կանոնակարգված այս իրողությունը խոչընդոտում է կանանց հավասարաչափ ներկայացվածությանը վերոնշյալ կազմերում. բարձր պաշտոններում տղամարդկանց թվաքանակը մեծ է:

Կանանց մասնագիտական առաջխաղացմանը խոչընդոտող գործոնները բուհում

Հասարակության մեջ գերակշռող գենդերային դիրքորոշումները և դերային ակնկալիքները պայմանավորում են, թե կինը ինչպես է իրեն տեսնում, դիրքավորում և պլանավորում իր գործունեությունը ակադեմիական միջավայրում: Հարցապրույցներին մասնակցած բոլոր կանանց կողմից շեշտադրվում էր *ավգային մտածելակերպը՝* որպես ամենաազդեցիկ խոչընդոտող գործոն: Մասնավորապես հարցապրույցներում մասնակիցները շեշտադրում էին ավգային մտածողության շրջանակներում առկա կնոջ նկատմամբ դերային սպասելիքները:

Կինը, որպես կանոն, առաջին հերթին իր վրա է վերցնում ընտանիքում իրեն բաժին ընկած պարտականությունները՝ կապված կենցաղի կազմակերպման և ընտանիքի անդամների խնամքի հետ, որից հետո նոր զբաղվում է իր մասնագիտական գործունեությամբ: Այս իրողությունը կարող է հանգեցնել մի երևույթի, որը կարելի է անվանել «չկանխամտածված խտրականություն», երբ չկա ուղիղ արգելք, սակայն կյանքի պայմանները և գերիշխող արժեհամակարգը այնպիսին են, որ կինը ինքնակամ հրաժարվում է իր մասնագիտական ինքնիրացման հնարավորությունից՝ հօգուտ մտերիմների բարօրության: Դասավանդելը և գիտությամբ զբաղվելը պահանջում են կնոջից նաև հավելյալ աշխատանք տանը՝ դասավանդման նյութերի, հոդվածների, զեկույցների, նախագծերի պատրաստում և այլն (որոշ չափով նաև մեր բուհերում աշխատանքային պայմանների սակավության պատճառով), ինչի հետևանքով կնոջից պահանջվում է ավելի մեծ կամքի ուժ իր գործունեության հետ առնչվող նպատակների իրագործման համար:

> *«Ոչ միայն տղամարդիկ են այդպես մտածում, կանայք էլ են իրենց վրա վերցնում այդ բոլոր պարտականությունները, որոնք ևս խանգարող հանգամանքներ են: Հայ կինը իրեն երբեք թույլ չի տա՝ ընտանիքի համար ճաշ չպատրաստի, երեխաներին դպրոց չտանի, ինչն իրեն բավականին խանգարում է, ժամանակ է խլում իրենից»:*
>
> (Գիտությունների դոկտոր, ամբիոնի վարիչ)

Ավգային մտածելակերպի դրսևորման մյուս կողմը վերաբերում է կնոջ հոգեբանական որակներին և հնարավորություններին: Գոյություն ունի որոշակի թերահավատություն, որ կինը ունակ է և կարող է մեծ առաջընթաց ունենալ գիտության ասպարեզում, հատկապես բնական ու տեխնիկական ոլորտներում: Ավգային այս մտածելակերպը ներթափանցում է նաև բուհական համակարգ, և դասախոսները ևս դրա կրողներն են դառնում:

> *«Մեր հայ հասարակության մեջ այն մտածելակերպը, որ գիտությունը կնոջ տեղը չէ, քիչ թե շատ կա, ու դա խանգարում է աղջիկներին կողմնորոշվել սովորելու, լուրջ ֆակուլտետ ընդունվելու հարցերում, ինչպես ժողովրդի մեջ են ասում: Շատ ժամանակ համոզում են աղջկան ուղղակի չդիմել մեր ֆակուլտետ, որովհետև մտածում են՝ չի կարողանա: Թեթև տեղ գնա, օրինակ՝ լեզուներ սովորելու:*
>
> (Գիտությունների թեկնածու, ասիստենտ)

> *«Հասարակության մեջ հիմա, ճիշտ է, կարծես կոտրվում են կարծրատիպերը, բայց դեռ կա այն կարծիքը, ըստ որի՝ կանայք այդքան ի վիճակի չեն զուտ բնական գիտություններով զբաղվել, օրինակ՝ ֆիզիկա, մաթեմատիկա: Լուրջ չեն ընդունում, երբ տեսնում են՝ կին է, փորձում է գիտության մեջ հաստատվել: Քեզանից ավելի մեծ ջանքեր են պահանջվում, որ հաստատվես, քան նույն մակարդակի վրա գտնվող տղամարդուց:*
>
> (Գիտությունների թեկնածու, ասիստենտ)

Այսպիսով՝ սոցիալականացվելով գենդերային ավանդական արժեհամակարգում՝ կինն իր մասնագիտական գործունեության մեջ իր առջև դնում է հավակնությունների այն մակարդակը, որը չի խանգարի ինքնիրացնել իրեն առաջին հերթին որպես կին և մայր: Մյուս կողմից, բարձր հավակնություններ ունենալը կարիերայում իր հերթին բերում է նոր պատասխանատվությունների առաջացմանը, բարդացնում է կնոջ աշխատանքային գործունեությունը: Հետևաբար, *աշխատանք, թե՞ ընտանիք* երկընտրության պարագայում կինը նախընտրում է մասնագիտական գործունեության մեջ առաջընթացի այն սահմանը, որի դեպքում նա կկարողանա կատարել իր պարտականություններն ընտա-

նիքում և կիամապատասխանի ընտանիքի կնոջ ու մոր դերերի ակնկալիքներին:

Իր հավակնությունների մեջ գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող կինը, այնուամենայնիվ, ձգտում է որոշակի կայուն և մրցակցային դիրքի: Հարցապրույցները ցույց են տալիս, որ կանանց հավակնությունները հիմնականում կապված են թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում ստանալու հետ: Սա այն սահմանն է, որում կինը իրեն ապահով և հարմար է զգում. մի կողմից գիտական աստիճան և կոչում ունենալը բավարարում են մասնագիտական ինքնիրացման, ձեռքբերումներ ունենալու մարդու հոգեբանական պահանջմունքներին, մյուս կողմից՝ դա հավելյալ պատասխանատվություն և ծանրաբեռնվածություն չի ենթադրում, ինչպես գիտությունների դոկտորի կամ գիտամանկավարժական գործունեության մեջ որևէ պաշտոն ունենալու (ամբիոնի վարիչ, դեկան և այլն) դեպքում:

«Կին լինելով՝ ես չեմ ուզում մեծ պատասխանատվություն աշխատանքի վայրում, ինչ-որ ղեկավար պաշտոն զբաղեցնել չեմ ուզում, ինձ տանն էլ է հերիք իմ երեխաների հետ: Ուզում եմ ունենալ հանգիստ, իմ մասնագիտությամբ բարձր վարձատրվող աշխատանք»:

(Ասպիրանտ)

«Եթե գիտություն է, կնոջը հետաքրքիր է, ուզում է ինքնիրացվել, իսկ ղեկավարման առումով մեծ ամբիցիաներ չունի: Եթե պատասխանատվությունը ընտանիքում մոտենա հավասար մակարդակի, տղամարդն էլ նույնքան պատասխանատու կգա ընտանիքի համար, ինչքան կինը, ապա այդ դեպքում, կարծում եմ, որ կանայք էլ կփորձեն ղեկավար պաշտոններ զբաղեցնել: Իսկ հիմա գիտի, որ չունի այդ ժամանակը»:

(Գիտությունների թեկնածու, ասիստենտ)

Կանայք միևնույն ժամանակ նշում էին, որ եթե ընտանիքը աջակցում է, ապա կինը կարող է հասնել հաջողության և ցանկություն հայտնել շարունակել իր մասնագիտական կարիերան կառուցելը: Կանայք հատկապես նշում էին ամուսնու՝ կնոջը աջակցելու փաստը, ինչը առավելապես պատահում է այն դեպքում, երբ հենց ինքը՝ ամուսինը, կայացած է իր մասնագիտական

գործունեության մեջ: Կանանց աշխատանքում առաջընթաց ունենալու հավակնությունը որոշակի սահմանից հետո պայմանավորված է ոչ այնքան կնոջ ինքնուրույն որոշումով, որքան ընտանիքի դիրքորոշումներով և «թույլտվության» սահմանով:

Մի կողմից կնոջ հավակնությունների աստիճանը, մյուս կողմից, տղամարդկանց մեծ ներկայացվածությունը բուհերի գիտամանկավարժական կազմի պաշտոններում (սկսած ամբիոնի վարիչից), ստեղծում են մի իրողություն, որտեղ կինը իր ակադեմիական կարիերայի մեջ լավագույն դեպքում հայտնվում է միջին օղակներում: Բուհերի կառավարման վերին օղակներում ձևավորվում են խաղի որոշակի կանոններ, ինչը չի նպաստում մեծ հաշվով կանանց ներգրավմանը հարաբերությունների այդ շերտ: Ինչպիսին են այդ խաղի կանոնները՝ դժվար է որոշակիացնել, սակայն, հիմնվելով այն բանի վրա, որ կառավարման օղակներում մեծ թվով տղամարդիկ են, կարելի է ասել, որ մասկուլին միջավայրում արդեն իսկ կանանց համար դժվար է դառնում աշխատելը:

«Այնպիսի վիճակ է, որ միջին օղակում են միայն կանայք: Գործ անողը կանայք են, ղեկավարում են տղամարդիկ: Երբ տղամարդկանց ասում ես, ասում են՝ դուք ինչ հարց ունեք, ասեք մեզ, մենք կլուծենք, մեզ համար տեղ չկա, դուք ուր եք մտել»:

(Գիտությունների թեկնածու, ամբիոնի վարիչ)

«Խելոք կանայք միշտ գնահատվում են, բայց իրենք միշտ ինչ-որ այդ փոխ- պաշտոններն են զբաղեցնում: Այդ խելացի կանայք շատ լավ աշխատում են, բայց ինչ-որ մի սահման կա, որ իրենց դրանից ավել, ինձ թվում է, չեն թողնում բարձրանալ: Խելացի կանայք խելացի տղամարդկանցից խելացի են, իմ կարծիքով, ու տղամարդիկ, այդ հասկանալով, ճանապարհը փակում են, որ կանայք շատ չբարձրանան»:

(Գիտությունների թեկնածու, դոցենտ)

Կանանց դատողություններում հստակորեն երևում է այն, որ «տղամարդկանց մշակույթում» կինը ընկալվում է օտար և օտար է իրեն զգում՝ սկսած լեզվի մշակույթից, վարքի դրսևորումներից, վերջացրած հարաբերությունների տեսակով և խնդիրներին լուծումներ տալու եղանակներով: Իշխանական լծակները

կենտրոնացված պահելու համար տղամարդ-տղամարդ հարաբերություններն ավելի հուսալի են, քանի որ հիմնվում են որոշակի «մշակույթի» փոխադարձ կանխատեսելի ակնկալիքների և պայմանավորվածությունների վրա: Արդյունքում ոլորտի կառավարման մեխանիզմները դառնում են ոչ թափանցիկ՝ ստեղծելով հատուկ, ներքին խաղի կանոններ: Կինն այս պայմաններում մի կողմից կարող է ընկալվել *մրցակից*, իսկ մյուս կողմից՝ *օտար, ուրիշ*:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերոնշյալը՝ նկատվում է կանանց թվի որոշակի աճ բուհերում՝ ի տարբերություն տղամարդկանց: Ինչո՞վ է սա պայմանավորված. արդյո՞ք աշխատում են որոշակի մեխանիզմներ, որոնք նպաստում են կանանց աճին: Մեր վերլուծությունները լավատեսական չեն այս առումով: Կանանց թվի մեծացումը, մասնագիտական կարգացման և առաջընթացի դեպքերը ավելի շուտ ստեղծված պայմանների հետևանքներն են, քան հատուկ ուղղորդող գործողություններ՝ ուղղված կանանց մասնագիտական առաջընթացի աջակցմանը: Կանանց մասնագիտական առաջընթացի այդպիսի նպաստող պայմաններից են՝

1) ցածր վարձատրությունը բարձրագույն կրթության ոլորտում,
2) ցածր վարձատրությունից բխող մրցակցային դաշտի բացակայությունը:

Գիտամանկավարժական գործունեության վարձատրությունը ՀՀ բուհերում դեռևս բարձր չէ, և այս իրողությունը նախապայման է ստեղծում բուհերում կանանց թվի մեծացման համար: Կանայք պատրաստ են աշխատել քիչ աշխատավարձով՝ ի տարբերություն տղամարդկանց: Աշխատավարձի դիմաց բուհում կնոջ աշխատանքը հատուցվում է նրանով, որ այն առավելություններ ունի կնոջ համար: Կանանց մեծամասնության համար բուհում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելը շատ առումներով *հարմար* աշխատանք է, քանի որ կինը կարողանում է համատեղել այն ընտանիքի ծանրաբեռնվածության հետ:

Կանանց առաջխաղացումը շատ հաճախ տեղի է ունենում այն պարագայում, երբ չկան մրցակից տղամարդ թեկնածուներ: Հավասար հնարավորությունների պայմաններում նախապատվությունը տրվում է տղամարդկանց, սակայն երբ չկան մրցակից տղամարդիկ, կինն ունենում է առաջ գնալու հնարավորություն:

Քանի որ մեկանում բուհերում դասախոսի և գիտնականի աշխատավարձը մեծ չէ, իսկ տղամարդիկ ավելի շուտ են հայտնվում աշխատաշուկայի բարձր վարձատրվող ոլորտներում, ապա կանանց առաջխաղացման հնարավորությունները բուհերում մեծանում են:

Եզրակացություն

Հատուկ գենդերային քաղաքականության բացակայության պայմաններում ՀՀ բուհերում հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի դրսևորումներն ամրապնդվում են առաջին հերթին սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային գործոններով: Բուհի՝ կնոջ համար որպես *ցանկալի, ընդունելի, թույլատրելի* աշխատավայրի հասարակական ընկալման փաստը չի ապահովում կանանց մասնագիտական առաջխաղացումը և բավարար ներդրումը հատկապես գիտամանկավարժական կազմի ավելի բարձր պաշտոններում, գիտական խորհուրդներում և կառավարման օղակներում: Կին դասախոսների և գիտնականների թվաքանակի ավելացումը բուհերում ավելի շուտ լուծում է բուհերի կադրային ապահովվածության խնդիրը, քան ուղղակիորեն նպաստում է կանանց ակադեմիական առաջընթացին: Այս իրողությունը պայմանավորված է ոչ թե բուհերի գիտական ռեսուրսների հզորացմամբ, այլ դրանց նվազեցմամբ և մրցակցության դաշտի թուլացմամբ, ինչը դրականորեն չի ազդում կրթության որակի և գիտության զարգացման վրա՝ խոչընդոտելով նաև որպես հետևանք կանանց գիտամանկավարժական գործունեության արդյունավետությանը: Հաշվի առնելով գենդերային հավասարության քաղաքականության ներդրման միջազգային փորձը ակադեմիական միջավայրում՝ անհրաժեշտ է մշակել ռազմավարական որոշակի գործողություններ ՀՀ բուհերում գենդերային հավասարության ապահովման համար: Դրանցից կարևոր ենք համարում հետևյալները:

- Կրթության և գիտության ոլորտին վերաբերող ռազմավարական ծրագրերում ներառել գենդերային քաղաքականությանը վերաբերող դրույթներ և ակադեմիական միջավայրում հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի հաղթահարմանն ուղղված թիրախային խնդիրներ:

- Տարեկան հաշվետվություններում ներառել տարբեր մասնագիտություններով սովորող ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի համեմատական վերլուծություններ՝ ըստ սեռի՝ դրանով իսկ նպաստելով նրան, որ ուսումնական և գիտական առանձին ստորաբաժանումները մշակեն մեխանիզմներ իրենց մասնագիտությունների գծով գենդերային հավասարակշռությունը պահպանելու համար:
- Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներում սահմանել որոշակի չափանիշներ, որոնցով կտրվեն արտոնություններ կին գիտնականներին, մասնավորապես ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական գիտությունների և բոլոր այն բնագավառների համար, որտեղ կանայք փոքրաթիվ են:
- Պրոֆեսորադասախոսական կազմի աջակցման (ռեսուրսային) կենտրոնների ստեղծում, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց մասնագիտական աջակցման հարցերին:
- Բուհերի PR-բաժինների աշխատանքներում գենդերային հավասարությանը և անհավասարությանը վերաբերող հարցերի, ինչպես նաև կին գիտնականների գործունեության, նրանց մասնագիտական ուղու առանձնատկություններին վերաբերող հարցերի լուսաբանում իրազեկման և քննարկման դաշտի ստեղծման նպատակներով:

Միլենա Աբրահամյանը ծնվել է 1986 թվականին Երևանում: 1997 թվականին ընտանիքի հետ մեկնել է Նյու Յորք, որտեղ էլ կրթություն է ստացել կանանց և գենդերային ուսումնասիրությունների ոլորտում:

2008 թվականին Մ. Աբրահամյանը վերադարձել է Հայաստան: Այստեղ շարունակել է համագործակցել կանանց հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ֆեմինիստ և ակտիվիստ անհատների հետ: 2013 թվականին մի խումբ հայ և թուրք կանանց հետ նախաձեռնել է «Սահմաններից այն կողմ» կանանց խաղաղաշինական ծրագիրը, որը կարևորում է մարմնի շարժումը, ոչ խոսքային հաղորդակցումը և թատերական տարբեր մեթոդները՝ կանանց միջև վստահություն ձեռք բերելու նպատակով:

2015 թվականին Ուփսալայի համալսարանի (Շվեդիա) խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների կենտրոնում ստացել է մագիստրոսի աստիճան:

Մ. Աբրահամյանը կարևորում է կոնֆլիկտի և գենդերի մասին տեսությունների ու հետազոտությունների կապը երկու ֆենոմենների միջև անմիջական առնչությունն ըմբռնելու տեսանկյունից:

Աննա Հարությունյանը Բեռլինի ազատ համալսարանի սոցիալական և մշակութային մարդաբանության ինստիտուտի դոկտորանտ է:

Ավարտել է Վորոնեժի (Ռուսաստան) պետական համալսարանի միջմշակութային հաղորդակցության և հոգեբանության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ մագիստրոսական կրթությունը ստացել է Բուդապեշտում գտնվող Կենտրոնական եվրոպական համալսարանում՝ գենդերային և մշակութային հետազոտությունների ոլորտում:

Ա. Հարությունյանի հետազոտական հետաքրքրությունների շրջանակներում տեղ են գրավում գենդերային և կանանց ուսումնասիրությունները, սփյուռքի և տրանսազգային համայնքների, ինչպես նաև ինքնության, լեզվի ու մշակութային բազմազանության ուսումնասիրությունները:

Ակադեմիական կարիերային զուգահեռ Ա. Հարությունյանը մշտապես ներգրավված է քաղաքացիական հասարակության դաշտում որպես ծրագրային համակարգող և փորձագետ:

Թամարա Հովնաթանյանը գենդերային ուսումնասիրությունների և գենդերային լրագրության ոլորտում ունի 20 տարվա փորձառություն:

1995 թվականից սկսած՝ նա աշխատել է կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում որպես «Համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիայի» հիմնադիր անդամ (ՀԿԿՀԱ):

2006 թվականին Թ. Հովնաթանյանը հիմնադրել է «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ը, որը միավորում է լրագրողներին և գենդերային փորձագետներին:

2007 թվականից սկսած՝ նա նաև «Կինը և քաղաքականությունը» թերթի և 2011 թվականից սկսած՝ «WomenNet.am» վեբկայքի գլխավոր խմբագիրն է:

Թ. Հովնաթանյանը շարունակում է ակտիվորեն ներգրավված լինել գենդերային ուսումնասիրություններում, հատկապես կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ հետազոտություններում, ինչպես նաև մի շարք փաստաթղթերի և կարգացման ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և գենդերային մեյնսթրիմինգի մեծ փորձառություն ունի:

Թ. Հովնաթանյանը գենդերային փորձագետ է, դասընթացավար, «Կանանց համաշխարհային ֆոնդի խորհրդի» անդամ է: Նա ակտիվորեն մասնակցել է նաև Պեկինյան գործընթացներին, ինչպես նաև Պեկինի գործողությունների պլանի իրագործման աշխատանքների մշտադիտարկմանը Հայաստանում:

2000 թվականից սկսած՝ Թ. Հովնաթանյանը աշխատում է նաև որպես խորհրդարանական թղթակից և քաղաքական վերլուծաբան «Նովոյե Վրեմյա» օրաթերթում:

Հասմիկ Խալափյանը պատմական գիտությունների թեկնածու է: Գիտական աստիճանը ձեռք է բերել Հունգարիայում՝ Բուդապեշտում գտնվող Կենտրոնական եվրոպական համալսարանում: Նա ուսումնասիրել է Օսմանյան հայության սոցիալական պատմությունը Ավստրիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի և ԱՄՆ-ի արխիվներում ու գրադարաններում:

Հետազոտական առումով Հ. Խալափյանին հետաքրքրում են սոցիալական փոխակերպումների հայեցակարգերը և պատմությունը տեղական ու գլոբալ համատեքստերում, 19-20-րդ դարերի Օսմանյան պատմությունը, կանանց համաշխարհային շարժումները համեմատական հեռանկարում, կայսրությունների և գաղութատիրության տեսությունները ու պատմությունը, գենդերը և միջազգային իրավունքը:

Հ. Խալափյանի հոդվածները տպագրվել են միջազգային գիտական ամսագրերում անգլերենով, որոշ հոդվածներ թարգմանվել են նաև թուրքերեն: Հ. Խալափյանը դասավանդել է նաև Երևանի պետական համալսարանի մագիստրոսական ծրագրերում:

Նարինե Խաչատրյանը հոգեբանական գիտությունների թեկնածու է, դոցենտ: 1998 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես գիտաշխատող, այնուհետև՝ որպես դասախոս:

2011 թվականից ղեկավարում է ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնը և ամբիոնին կից «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիան: Մասնակցել է վերապատրաստման տարբեր ծրագրերի և գիտաժողովների (ԱՄՆ, Գերմանիա, Իտալիա, Չեխիա և այլն), ինչպես նաև միջմշակութային մի շարք ուսումնասիրությունների, որոնք վերաբերել են արժեքային կողմնորոշումներին և անձի իրավահավասարությանը (entitlement), սուբյեկտիվ բարեկեցության (subjective well-being), արդարության զգայունության և ինքնակարգավորման վարքաձևերին (justice sensitivity and self-regulation):

Ն. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը կազմում են անձն ու նրա արժեքային կողմնորոշումները, սուբյեկտիվ բարեկեցությունը և հոգեբանական առողջությունը, սոցիալական համոզմունքներն ու վարքը (գենդերային, տնտեսական, քաղաքական):

Ն. Խաչատրյանը հեղինակել է շուրջ 30 հոդվածներ:

Գենդերային խտրականություն.

մեդիա, բանակ, կրթություն, ամուսնություն, քաղաքականություն

Գլխավոր խմբագիր՝
Գոհար Շահնազարյան
Խմբագրական կազմ՝
Սիրան Հովհաննիսյան
Մերի Հովհաննիսյան
Ձևավորումը՝
Լուսինե Թալալյանի
Թարգմանիչ՝
Նվարդ Մանասյան